ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2010Թ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

8 ապրիլի, 2011թ.

Հայաստանը շուրջ 3.2 միլիոն բնակչությամբ սահմանադրական հանրապետություն է: Սահմանադրությամբ նախատեսվում է ընտրվող նախագահ ու միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով): Երկրում գործում է բազմակուսակցական քաղաքական համակարգ: 2008թ.-ին, նշանակալի խախտումներով անցած ընտրություններից հետո, Սերժ Սարգսյանը՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունից (ՀՀԿ) ստանձնեց նախագահի պաշտոնը: ՀՀԿ-ն շարունակում էր գերակա դիրք գրավել Ազգային ժողովի եռակուսակցական իշխող կոալիցիայում, ինչպես նաև կառավարությունում: Անվտանգության ուժերը հաշվետու են եղել քաղաքացիական իշխանություններին:

Խաղաղ ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու քաղաքացիների իրավունքը սահմանափակվել է ընտրությունների անցկացման ընթացքում տեղ գտած կրկնվող, նշանակալի բացթողումների պատճառով, այդ թվում նաև հունվարին խորհրդարանական մեկ տեղի համար կայացած լրացուցիչ ընտրությունների ընթացքում:Անվտանգության ուժերի որոշ ներկայացուցիչներ, լինելով քաղաքացիական առաջնորդների ենթակայության ներքո, շարունակել են անպատժելիորեն թույլ տալ մարդու իրավունքների ոտնահարումներ: Տարվա ընթացքում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցվել են կասկածելի մահվան դեպքեր, և շարունակվել են կանոնակարգային հարաբերությունների խախտումները և վատ վերաբերմունքը զորակոչիկների հանդեպ սպաների և ծառայակից զինվորների կողմից, ինչպես նաև շարունակվել է պատասխանատվության բացակայությունն այդպիսի արարքների համար: Ըստ հաղորդումների ոստիկանությունը ձերբակալելիս և հարցաքննությունների ժամանակ ծեծի է ենթարկել քաղաքացիներին: Գերբնակեցվածության պատճառով զգալիորեն վատացել են բանտային պայմանները: Իշխանությունները շարունակել են քրեական հանցանքների մեջ կասկածվողներին ձերբակալել և բերման ենթարկել առանց ողջամիտ կասկածի, և կամայականորեն բերման ենթարկել անձանց իրենց ընդդիմադիր քաղաքական պատկանելության կամ քաղաքական գործունեության համար: Դատարանները շարունակել են ենթարկվել քաղաքական ճնշման գործադիր ճյուղի կողմից և դատավորներն էլ գործել են դատական այն մշակույթի միջավայրում, երբ ակնկալվում է գրեթե բոլոր գործերով մեղադրյալի հանդեպ կայացնել մեղադրական դատավճիռ: Տարվա ընթացքում իշխանություններն ազատ արձակեցին չորս հոգու, ովքեր 2008թ. նախագահական ընտրությունների ու հետընտրական բողոքների հետ կապված դատապարտվել էին՝ պատշաճ իրավական ընթացակարգերի խախտումներով և ակնհայտ քաղաքական շարժառիթներով ընթացած դատավարությունների արդյունքում: Այդ դեպքերի առնչությամբ դատապարտված ևս երկու անձ ազատ արձակվեց բանտից՝ սահմանված պատիժն

ամբողջությամբ կրելուց հետո, իսկ մի քանի հոգի դեռ գտնվում են ազատազրկման մեջ: Զանգվածային լրատվամիջոցներում, մասնավորապես՝ հեռուստաեթերում շարունակում են բացակայել բազմակարծությունն ու օբյեկտիվ լրատվությունը. բռնության, ահաբեկման միջադեպերը և ինքնագրաքննությունը լրատվամիջոցներում և նրանց դեմ շարունակվել են: Իշխանությունները շարունակել են մերժել ընդդիմադիր կուսակցությունների և այլ խմբերի որոշակի վայրերում հավաքներ ու հանրահավաքներ անցկացնելու խնդրանքները՝ երբեմն տրամադրելով այլ վայր, և երբեմն էլ կանխել են մարդկանց մասնակցությունը հանրահավաքներին: Իշխանություններն ու օրենքները սահմանափակել են կրոնական ազատությունը: Խնդրահարույց է մնացել կոռուպցիան, որի դեմ իշխանությունները սահմանափակ քայլեր են ձեռնարկում: Տարածված էր ընտանեկան բռնությունը, սակայն այն հիմնականում չէր հաղորդվում պատկան մարմիններին: Խնդիր էր հանդիսանում թրաֆիքինգը, սակայն իշխանությունները ձեռնարկել են դրա դեմ պայքարի միջոցներ:

ՀԱՐԳԱՆՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական կամ անօրինական ձևով կյանքից զրկելը

Կառավարության ու վերջինիս գործակալների կողմից չեն եղել քաղաքական դրդապատճառներով սպանություններ. այնուհանդերձ, չորս ոստիկաններ դատարանի առջև են կանգնել իրենց հսկողության ներքո գտնվող կասկածյալին ծեծի ենթարկելու ու ինքնասպանության հասցնելու համար, իսկ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում տեղ են գտել մահվան կասկածելի դեպքեր:

Ապրիլի 13-ին գողության մեջ կասկածվող 24-ամյա Վահան Խալաֆյանը կասկածելի հանգամանքներում Չարենցավանի ոստիկանական բաժանմունքում մահացավ: Ի սկզբանե ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանը հանդես եկավ մի շարք հայտարարություններով առ այն, որ Խալաֆյանն անկայուն հոգեվիճակում է գտնվել և ինքնասպանություն է գործել: Սարգսյանը նաև ժխտեց Խալաֆյանի հանդեպ ֆիզիկական բռնություն գործադրելու հնարավորությունը ոստիկանության կողմից. այնուհանդերձ, Հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ) անցկացրած քննությամբ բացահայտվեց, որ Խալաֆյանը ենթարկվել է խոշտանգումների բարձրաստիճան ոստիկանի կողմից՝ գողություն կատարելու մասին խոստովանություն կորզելու նպատակով, և Սարգսյանը հրապարակավ ներողություն խնդրեց: Այնուամենայնիվ իշխանությունները շարունակում էին պնդել, որ Խալաֆյանը, վերցնելով դարակում գտնվող խոհանոցային դանակ, ինքնասպանություն է գործել՝ ինքն իրեն դանակահարելու միջոցով: Հունիսի 25-ին ՀՔԾ-ն հայտարարեց, որ կատարված քննությամբ բացահայտվել է, որ Խալաֆյանն ինքնասպանություն է գործել ոստիկանների պահվածքի արդյունքում: Ապրիլի 27-ին Չարենցավանի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանը ձերբակալվեց և նրան պաշտոնապես մեղադրանք ներկայացվեց պաշտոնական լիազորություններն անցնելու համար, որը հանգեցրել է ծանր հետևանքների: Հարությունյանի ենթակայության ներքո աշխատող Մորիս Հայրապետյանին, Գարիկ Դավթյանին և Գագիկ Ղազարյանին ներկայացվեց պաշտոնական լիազորությունները չարաշահելու մեղադրանք: Խալաֆյանի ընտանիքը, նրանց իրավաբանը

և գործին հետևող իրավապաշտպանները վիճարկում էին մահվան պաշտոնական վարկածը՝ պնդելով, որ դատաբժշկական փորձաքննությամբ երկու կտրող-ծակող վերքերից զատ Խալաֆյանի մարմնի վրա հայտնաբերել են այլ կապտուկներ և վնասվածքներ: Խալաֆյանի ընտանիքը նաև կասկածներ ուներ Խալաֆյանի մահվան հարցում Չարենցավանի ոստիկանապետ Նորիկ Հեբոյանի, ում մայիսի 28-ին ազատել էին աշխատանքից, և փոխոստիկանապետ Սամվել Տոնոյանի, ով շարունակում էր պաշտոնավարել, դերակատարումների մասին՝ կասկածի տակ առնելով քննությունը: Չորս մեղադրյալների դատավարությունը մեկնարկեց հուլիսի 6-ին: Հարությունյանը ժխտում էր իրեն ներկայացված մեղադրանքները: Նա նաև ժխտում էր, որ Խալաֆյանն ինքնասպանություն է գործել՝ ասելով, որ ՀՔԾ-ն և իր ենթակա Մորիս Հայրապետյանը, ում ավելի մեղմ մեղադրանք էր ներկայացված, իր դեմ գործ են լարում՝ կոծկելու ոստիկանների կողմից Խալաֆյանին սպանելու փաստը: Նոյեմբերի 29-ին Կոտայքի առաջին ատյանի դատարանը Հարությունյանին մեղավոր ճանաչեց՝ դատապարտելով ութը տարվա ազատազրկման: Հայրապետյանը դատապարտվեց երկու տարվա պայմանական ազատազրկման, իսկ մյուս երկու կասկածյալները՝ Գարիկ Դավթյանն ու Գագիկ Ղազարյանն արդարացվեցին: Խալաֆյանի ընտանիքը հայտարարեց, որ դատավճիռն անարդարացի է ու շարունակեց պնդել, որ իրենց ազգականին սպանել են ոստիկանները, երբ նա գտնվել է ոստիկանությունում, և որ քննությունը չի բացահայտել Խալաֆյանի մարդասպանին և սպանության բոլոր հանգամանքները: Նոյեմբերի 29-ին Ազատություն ռադիոկայանին տված հարցազրույցում Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմենը) նույնպես վիճարկեց ինքնասպանության պաշտոնական վարկածը:

Հուլիսի 28-ի հայտարարությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրեց, որ Տավուշի մարզում տեղակայված զորամասի վաշտի հրամանատար լեյտենանտ Արտակ Նազարյանը հուլիսի 27-ին ըստ տեղեկությունների ինքնասպանություն է գործել: Զինվորական դատախազությունը դեպքից հետո քրեական գործ հարուցեց մի կապիտանի և երեք զինծառայողների հանդեպ՝ Նազարյանին ծեծի և նվաստացումների ենթարկելու համար: Ըստ պաշտոնական տեղեկատվության Նազարյանն ինքնասպան էր եղել՝ չդիմանալով ծառայակիցների ոտնձգություններին: Կապիտան Հակոբ Մանուկյանը ձերբակալվեց պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար, որը հանգեցրել էր ծանր հետևանքների, իսկ Մխիթար Մխիթարյանը, Ադիբեկ Հովհաննիսյանը և Հարութիկ Կիրակոսյանը ձերբակալվեցին հրամանատարի նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով: Նազարյանի մահվանից հետո նրա ազգականները հարցազրույցներում մեղադրում էին զինվորական կառույցներին գործը կոծկելու մեջ՝ պնդելով, որ նրան կամ հարկադրել էին ինքնասպանություն կատարել կամ նա սպանվել էր ծառայակիցների կողմից, հնարավոր է նույնիսկ ավելի վաղ, քան զինվորական հաղորդագրությունում հիշատակված մահվան ժամկետը: Նազարյանի զարմիկը, ով ներկա էր եղել դատաբժշկական փորձաքննությանը, լրագրողներին հայտնել էր, որ իր ազգականի դեմքին, ձեռքերին, ուսերին և ոտքերին եղել են բազմաթիվ վնասվածքներ, որոնք ըստ նրա հայտնածի հասցվել էին Նազարյանի մահվանից ժամեր առաջ: Ըստ պաշտոնական տեղեկատվության Նազարյանի հագուստի մեջ եղել էր ինքնասպանության մասին երկտող: Հետագա հարցազրույցներում ընտանիքը մեղադրանքներ էր հնչեցնում գործը կոծկելու նպատակով քննության ընթացքում տեղ գտած բազմաթիվ խախտումների ու ապացույցների կեղծման մասին: Հետաքննության մարմինը մերժեց Նազարյանի ընտանիքի միջնորդությունները կապված ինքնասպանության մասին երկտողը (որ բավականին ուշացումով՝ օգոստոսի 9-ին հայտնաբերվել ու

հետաքննության մարմնին էր փոխանցվել կապիտան Մանուկյանի կողմից) ապացույց չճանաչելու, նոթատետրի թերթերի պատճենները լրացուցիչ ձեռագրաբանական ուսումնասիրություն անցկացնելու նպատակով իրենց տրամադրելու, և տեղազննության ու Նազարյանի հագուստի զննության մասին արձանագրություններին ու համապատասխան փաստաթղթերին ծանոթանալու վերաբերյալ: Քննությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Ի պատասխան ոչ մարտական պայմաններում զինծառայողների հրազենից մահվան դեպքերի վերաբերյալ հասարակության բուռն արձագանքին՝ օգոստոսի 8-ին Պաշտպանության նախարարությունը հայտարարություն արեց՝ նշելով այն կարգապահական միջոցները, որ ձեռնարկվել էին Պաշտպանության նախարարության կոլեգիայի արտահերթ նիստում: Իրենց զբաղեցրած պաշտոններից հեռացվել էին զորամասի հրամանատար կամ փոխհրամանատար ութը սպաներ, որոնցից յոթն անցել էին պահեստազոր: Բացի այդ, 14 սպայի հայտարարվել էր խիստ նկատողություն, վեցին՝ նկատողություն, իսկ տասը՝ ստացել էին նախազգուշացում ծառայության պահանջները չկատարելու համար: Իրենց պաշտոններից ազատվել և ավելի ցածր պաշտոնների էին նշանակվել տասը ստորաբաժանումների հրամանատարներ և ծառայությունների պետեր, մեկ սպայի զինվորական կոչումն էլ իջեցվել էր:

Ըստ լրատվամիջոցների հաղորդումների սեպտեմբերի 8-ին հրազենով ինքնասպանություն էր գործել Վայքի զորամասում ծառայող 27-ամյա պայմանագրային զինծառայող կրտսեր սերժանտ Արթուր Հակոբյանը: Մահվան փաստով հարուցվել էր քրեական գործ՝ ինքնասպանության հասցնելու մեղադրանքով. քննության ընթացքի վերաբերյալ տարեվերջի դրությամբ նոր տեղեկություններ չկային:

Զինված ուժերում տեղ գտած չարաշահումներին ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը դեկտեմբերի 13-ից գործարկեց անանուն թեժ գծի ծառայություն, ուր քաղաքացիները կարող էին զանգել ու զինվորական ծառայության մասին իրենց մտահոգությունները հայտնել:

Զինվորական դատախազի հաղորդմամբ տարվա ընթացքում ոչ մարտական պայմաններում մահացել է 54 զինծառայող, մինչդեռ 2009թ.այդ թիվը կազմում էր 44 հոգի: Ըստ պաշտոնական վիճակագրության տասնմեկ հոգի սպանվել է հակառակորդի կողմից, մնացած դեպքերից տասներեքը սպանություններ էին, ութ հոգու մահվան պատճառը եղել է հիվանդությունը, վեցը մահացել են ավտովթարներից, հինգը՝ դժբախտ պատահարներից, չորս հոգի մահացել է զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, եղել են երեք ինքնասպանության և երեք ինքնասպանության հասցնելու դեպքեր և մեկ հոգի էլ մահացել է բռնարարքի հետևանքով:

Մայիսի 4-ին առաջին ատյանի դատարանը տասը տարվա ազատազրկման դատապարտեց Անդոկ Գալստյանին 2009թ. սեպտեմբերին 18-ամյա զորակոչիկ Արամ Մկրտչյանի մահվան համար, ով մահացել էր հիվանդանոցում Վայոց ձորի զորամասի իր գումարտակի հրամանատար Գալստյանի կողմից ծեծի ենթարկվելուց հետո: Գործով մյուս մեղադրյալը՝ զորամասի փոխհրամանատար մայոր Մամիկոն Վարդանյանը զինվորին վիրավորանք հասցնելու համար դատապարտվեց վեց ամսվա պայմանական ազատազրկման:

Զարգացումներ չեն եղել անվտանգության ուժերի, կողոպտիչների և 2008թ. նախագահական ընտրությունները բողոքարկող ցուցարարների բախման ընթացքում սպանված ութը քաղաքացիական անձանց ու երկու ոստիկանների մահվան փաստերի քննության հարցում: 2009թ. օգոստոսին իշխանությունները քրեական վարույթ սկսեցին չորս ոստիկանների դեմ, ովքեր մեղադրվում էին հետընտրական դեպքերի ընթացքում ցուցարարների դեմ արցունքաբեր գազի ոչ պատշաճ օգտագործման մեջ: Ըստ հաղորդումների չորս ոստիկաններն արցունքաբեր գազի նռնակները կրակել էին վտանգավորության աստիճանի մոտ հեռավորությունից, որի հետևանքով մահացել էին երեք քաղաքացիական անձ և ևս երեքը վիրավորվել էին: Արդեն երկրորդ տարին անընդմեջ վարույթը մնում էր քննության փուլում և որևէ ոստիկանի նկատմամբ դատական կարգով հետապնդում չէր իրականացվում: Ըստ հաղորդումների իրավապահ մարմինները դեռևս չէին կարողանում պարզել, թե ինչ հրազենից են արձակվել առկա ձգաբանական/բալիստիկ ապացույցները: Ըստ նոր պաշտոնական տեղեկատվության փորձաքննությամբ պարզվել է, թե իբր արցունքաբեր գազի նռնակներն անդրադարձել են այլ մակերևույթներից ու չեն արձակվել ուղղակիորեն տուժողների վրա:

Մարտի 19-ին Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն ներկայացրեց զեկույց 2008թ. դեպքերից մի քանի շաբաթ հետո երկիր կատարած իրենց այցի մասին: Զեկույցում նշվում էր, որ զոհերից երկուսի ստացած վնասվածքները հիշեցնում էին «ռետինե փամփուշտի» կամ հնարավոր է արցունքաբեր գազի նռնակի մոտ տարածությունից ուղիղ գլխին արձակելու պատճառով հասցված վնասվածքներ: Տարվա ընթացքում տասը զոհերից ինքի ընտանիքներն անհաջող կերպով չորս առանձին դատական հայցեր են ներկայացրել ՀՔԾ-ի և Գլխավոր դատախազության դեմ մահվան գործերի քննության, մեղավորներին բացահայտելու ու պատժելու ուղղությամբ անգործության և քայլեր չձեռնարկելու համար: Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը մերժել են հայցերը, իսկ բողոքարկման բարձրագույն ատյան հանդիսացող Վճռաբեկ դատարանը հրաժարվել է գործերն ընդունել վարույթ:

Հունվարի 13-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանն արդարացրեց զինվորներ Ռուստամ Ասատրյանին և Կարեն Թովմասյանին, ովքեր մեղադրվում էին հանցավոր անփութության մեջ, որի արդյունքում էլեկտրական հոսանքից 2007թ. մահացել էր Տիգրան Օհանջանյանը: Այնուհանդերձ, դատարանը գործը հետ ուղարկեց զինվորական դատախազություն՝ լրացուցիչ քննության: Օհանջանյանի ընտանիքը երկար ժամանակ պնդում էր, որ Օհանջանյանը չի մահացել պատահական էլեկտրահարումից, այլ սպանվել է: Թե Վերաքննիչ դատարանը (մարտի 30-ին), թե Վճռաբեկ դատարանը (հունիսի 7-ին) անփոփոխ թողեցին առաջին ատյանի դատարանի որոշումը: Գործով լրացուցիչ քննությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Ըստ մարդու իրավունքների հարցերով դիտորդների՝ զինված ուժերում հաղորդված ոչ կանոնակարգային հարաբերությունների ու մահվան միջադեպերի գերակշիռ մասի դեպքում համապատասխան մարմինները ներկայացնում են դեպքերի հոկված տարբերակները, իսկ հետագա քննությունը գալիս է հաստատելու դրանք: Դիտորդները նաև պնդում են, որ բազմաթիվ դեպքերում զինված ուժերում հրաժարվում են պատժել այն մարդկանց, ովքեր կանգնած են ոչ կանոնակարգային հարաբերությունների ու կասկածելի մահվան դեպքերի ետևում:

Ազգությամբ հայ անջատողականները Հայաստանի օգնությամբ շարունակել են վերահսկել Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանի մեծ մասը և հարակից ադրբեջանական յոթ տարածքները: Ադրբեջանի հետ սահմանի ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շփման գծի երկայնքով տեղակայված ականները շարունակել են մարմնական վնասվածքների պատճառ հանդիսանալ: Կառավարական աղբյուրների համաձայն տարվա ընթացքում ականային պայթյուններից վիրավորվել են տասներկու զինծառայողներ և զոհվել է մեկ քաղաքացիական անձ:

Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության շփման գծի երկայնքով հնչող կրակոցների հետևանքով հայկական կողմում գրանցվել են դժբախտ դեպքեր, մասնավորապես՝ 11 զինծառայող զոհվել են, իսկ 34-ը՝ վիրավորվել:

Զարգացումներ չեն գրանցվել 2009թ. Երևան քաղաքի կենտրոնում իր տան շքամուտքի մոտ հրազենային կրակոցներից սպանված փոխոստիկանապետ, ոստիկանության գնդապետ Գևորգ Մհերյանի սպանության գործով: Տարեվերջի դրությամբ մարդասպանը դեռ չէր բացահայտվել, իսկ քննությունը շարունակվում էր: Փետրվարի 10-ին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանն հայտարարություն արեց, որ ստեղծվում է հատուկ քննչական խումբ, որը կզբաղվի 2000թ. ի վեր տեղ գտած աղմկահարույց սպանությունների, այդ թվում՝ Գևորգ Մհերյանի սպանությունը բացահայտելու գործով:

բ) Անհետացումներ

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Չնայած օրենսդրությամբ հիշյալ երևույթներն արգելվում են, սակայն անվտանգության ուժերի անդամների կողմից դրանք կանոնավոր կիրառվել են: Վկաները շարունակել են հաղորդել, որ ոստիկանները ձերբակալելիս կամ հարցաքննելիս ծեծի են ենթարկել քաղաքացիներին: Նմանատիպ հաղորդումներ են եղել մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից. սակայն ոստիկանության անօրինաչափ գործողությունների մեծ մասը շարունակում են մնալ չներկայացված՝ ելնելով հաշվեհարդարի վախից: Իրավապաշտպան խմբերը շարունակել են հաղորդել, որ բազմաթիվ անձիք, ովքեր ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերից տեղափոխվել են բանտեր հայտնել են, որ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ժամանակ իրենք ենթարկվել են խոշտանգումների, բռնությունների կամ ահաբեկման, և որ խոշտանգումների ու ֆիզիկական բռնությունների հիմնական նպատակը եղել է խոստովանություն կորզելը: Ըստ տեղական դիտորդների ձերբակալված անձանց հանդեպ իրավապահների ոտնձգությունները շարունակում են տեղի ունենալ ոստիկանական բաժանմունքներում, մասնավորապես՝ ոստիկանների աշխատասենյակներում, այլ ոչ թե ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում, որտեղ մուտքի իրավունք ունեն հասարակական դիտորդները:

Փետրվարի 10-ին օմբուդսմենը գրություն ուղարկեց Գլխավոր դատախազին՝ տեղեկացնելով, որ փետրվարի 5-ին Երևանի ոստիկանական բաժանմունքի ձերբակալված անձանց պահելու վայր այցի ժամանակ իր աշխատակիցները բացահայտել են բազմաթիվ գրառումներ, որոնցում նշվում է, որ մարդկանց այդտեղ են բերել բազմաթիվ կապտուկներով, քերծվածքներով ու այլ վնասվածքներով: Օմբուդսմենը տրամադրեց մանրամասներ այդպիսի տասը դեպքերի վերաբերյալ և հետաքրքրվում էր, թե Գլխավոր դատախազությունն ինչ քայլեր է ձեռնարկել, եթե այդպիսիք եղել են, դրանք հետաքննելու ուղղությամբ: Տարեվերջի դրությամբ օմբուդսմենի նամակին պատկան մարմինների կողմից պատասխան դեռ չէր տրամադրվել:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հաղորդմամբ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում իրենք քաղաքացիներից ստացել են յոթ բողոք այդ քաղաքացիների կամ նրանց ազգականների նկատմամբ ոստիկանության կողմից թույլ տված խոշտանգումների վերաբերյալ, որոնց նպատակն է եղել տեղեկություններ ստանալ որոշակի հանցանքների մասին կամ կորզել ինքնամեղադրական ցուցմունքներ: Ըստ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի այս գործերից մեծ մասի հետ կապված իրենց կողմից ոստիկանությանը ներկայացված հաղորդումներով քրեական կամ ծառայողական քննություն անցկացնելու քայլեր չեն ձեռնարկվել, կամ էլ ոստիկանությունը պատասխանել է, որ ներքին քննությամբ խախտումներ չեն բացահայտվել:

Մայիսի 17-ին տարբեր լրատվամիջոցներ հաղորդեցին, որ Գագիկ Ղազարյանը, ով ենթադրաբար փախուստի դիմելու նպատակով դուրս էր ցատկել Կենտրոն և Նորք Մարաշ համայնքի դատարանի պատուհանից, ստացված վնասվածքներից մահացել էր հիվանդանոցում: Վճռաբեկ դատարանի խոսնակը նշեց, որ դեպքը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ դատավորը որոշել է Ղազարյանին ներգրավել որպես թմրամիջոցների ապօրինի փոխադրման գործով կասկածյալ: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը պնդում էր, որ Ղազարյանը մահացու ցատկը կատարել է՝ ի պատասխան ոստիկանության խոշտանգումների, որ նրա հանդեպ գործադրվել են նախքան դատական լսումը: Այս պնդման համար հիմք էր հանդիսացել մայիսի 27-ին ստացված նամակը ոմն Կ.Մ.-ից, ով հայտնում էր, որ ինքը Ղազարյանի հետ միասին է ծեծի ենթարկվել ոստիկանության կողմից, մայիսի 13-ին բերման ենթարկվելուց հետո: Ըստ Կ.Մ.-ի ծեծի միջոցով փորձում էին իրենցից խոստովանություն կորզել այն մասին, որ իրենք թմրամիջոց են պահում: Չնայած ոստիկանությունից Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելիս մարմնական վնասվածքներ չեն արձանագրվել, Կ.Մ.-ն պնդում էր, որ ոստիկանների կողմից ծեծի ենթարկվելուց հետո երեք օր իր մեզի մեջ արյուն կար, իսկ Ղազարյանի կողն էր կոտրվել: Ըստ պաշտոնական տեղեկատվության քրեական գործ էր հարուցվել Ղազարյանի փախուստի փորձը քննելու նպատակով, որը նաև քննության առավ դաժան վերաբերմունքի մասին հնչեցված մեղադրանքը: Հետագայում գործը փակվեց՝ Ղազարյանի մահվան պատճառով, իսկ համաձայն պաշտոնական տեղեկատվության ոստիկանությունում դաժան վերաբերմունքի վերաբերյալ մեղադրանքները չեն հիմնավորվել:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ Հասարակական դիտորդների խումբը չի արձանագրել կալանավորների հանդեպ խոշտանգումների ու բռնության նոր միջադեպեր Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության արագ արձագանքման խմբի կողմից: Այնուհանդերձ, իշխանությունները չեն արձագանքել հասարակական դիտորդների խմբի 2009թ.-ին բանտարկյալների հանդեպ խոշտանգումներ

թույլ տալու մեղադրանքին: Ըստ Հելսինկյան կոմիտե ՀԿ-ի ոտնձգությունների մեծ մասի վերաբերյալ հաղորդումներ չեն լինում՝ հաշվի առնելով ճաղերից այն կողմ կյանքի փակ բնույթը, սակայն պատահական հաղորդումներից բխում է, որ խնդիրը համակարգային է:

Հունիսի 23-ին ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը հրապարակեց 2009թ. իր ամենամյա զեկույցը: Զեկույցը մատնանշում էր, որ Երևան քաղաքում ձերբակալված և հետո ոստիկանական բաժանմունքներից ոստիկանության համակարգի ձերբակալվածների պահման վայրեր փոխադրված 967 հոգուց 172-ը ձերբակալվածների պահման վայր հասնելու պահին ունեցել են կապտուկներ և մարմնական վնասվածքներ: Վնասվածքների առաջացման աղբյուրները չեն նշվել և ոչ ոք դրանց համար պատասխանատվություն չի կրել:

Ըստ օմբուդսմենի 2009թ. ամենամյա զեկույցի, որը հրապարակվեց մարտին, քաղաքացիների բողոքները ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների, այդ թվում՝ խոշտանգումների վերաբերյալ շարունակում են աճել նախորդ տարիների համեմատ: Բողոքները հիմնականում վերաբերում են քաղաքացիներին, ովքեր հայտնել են, որ բերման են ենթարկվել ոստիկանություն, ապօրինաբար պահվել այնտեղ և ենթարկվել ոչ մարդկային վերաբերմունքի, այդ թվում խոշտանգումների և ծեծի: Բողոքողները նաև նշել են, որ ոստիկանները ջանում էին բռնության, սպառնալիքի ու անօրինական նախնական կալանքի միջոցով խոստովանություններ կորզել: Ըստ օմբուդսմենի զեկույցի ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի կամ խոշտանգումների ենթարկված քաղաքացիների իրավունքները վերականգնելը գրեթե անհնար է եղել: Օմբուդսմենը նշում էր, որ ոստիկանությունը, որպես կանոն, արձագանքել է չարաշահումների մասին հնչեցված մեղադրանքների մասին օմբուդսմենի հարցումներին՝ տրամադրելով ոչ բովանդակալի, նմանատիպ պատասխաններ, ավելացնում, որ տիրող անպատժելիության մթնոլորտը հանգեցնում է նմանատիպ չարաշահումների աճին:

Մարտի 5-ին Փարիզում հիմնված Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան Քաղաքացիական հասարակության ինստիտուտ տեղական ՀԿ-ի հետ համատեղ հայտարարություն են արել Սաշա Դավթյանի ազատ արձակման վերաբերյալ և կոչ արել քննություն անցկացնել նրա և նրա երկու դուստրերի հանդեպ ոստիկանների կողմից գործադրած խոշտանգումների մասին հնչեցված մեղադրանքների վերաբերյալ: Հայտարարությամբ նաև կոչ էր արվում վերստին քննություն անցկացնել Սաշա Դավթյանի կողմից իր դուստրերին խոշտանգումների ենթարկելու մեղադրանքով, որի համար նա դատապարտվել էր: Դավթյանն ազատ արձակվեց փետրվարի 26-ին, երբ Վերաքննիչ դատարանը մեկ տարով նվազեցրեց նրա ազատազրկման ժամկետը, որի արդյունքում նրա նկատմամբ կիրառելի դարձավ 2009թ. հայտարարված ընդհանուր համաներումը: 2008թ. Դավթյանը ոստիկանությանը հայտնել էր իր այն ժամանակ անչափահաս դստերն առևանգելու ու բռնաբարելու մասին: 2009թ. փետրվարին ոստիկանությունը կասեցրեց գործի քննությունը՝ հանցագործի անձը պարզված չլինելու հիմքով: Դավթյանի բողոքներից հետո գործը 2009թ. մայիսին վերաբացվեց ոստիկանության մեկ այլ քննիչի կողմից: Դեպքը լուսաբանող լրագրողի հաղորդմամբ Դավթյանն այնուհետև բերման էր ենթարկվել Երևան քաղաքի ոստիկանության Կենտրոն բաժին և շուրջ տասը ոստիկանների կողմից մի քանի օր դաժան ծեծի ենթարկվել, երբ վերջիններս փորձում էին նրանից խոստովանություն կորզել իր երկու դուստրերին խոշտանգումների ենթարկելու և նրանցից մեկին բռնաբարելու մասին:

Նույն հաղորդման համաձայն Դավթյանը մատնանշել էր իրեն խոշտանգումների ենթարկած մի քանի անձանց՝ ոստիկաններ Էրիկ Պողոսյանին, Արթուր Պողոսյանին, Արթուր Հովհաննիսյանին և ոստիկանության քննիչ Ռուբեն Վարդանյանին: Համատեղ հայտարարության համաձայն երկու ՀԿ-ների նախագահները փետրվարի 5-ին բանտում այցելել են Դավթյանին, արձանագրել նրա հանդեպ վատ վերաբերմունքի մասին իր վկայությունը և համոզվել, որ ծեծի արդյունքում նա կորցրել է իր ատամներից 8-ը: 2009թ. հոկտեմբերին լրատվամիջոցներում ներկայացված մեկ այլ հաղորդմամբ ոստիկանությունը բռնություն է գործադրել նաև Դավթյանի երկու դուստրերի հանդեպ, որոնցից մեկը բռնաբարության գործով տուժողն է, որպեսզի նրանք իրենց հոր դեմ ցուցմունք տան: Կրտսեր աղջկան ըստ հաղորդումների բերման են ենթարկել Երևան քաղաքի ոստիկանության Կենտրոն բաժին, որտեղ Էրիկ Պողոսյանը, Ռուբեն Վարդանյանը և մյուս ոստիկանները նրան պարբերաբար ծեծի են ենթարկել, թողել են առանց հացի ու ջրի, արգելել օգտվել սանհանգույցից այնտեղ գտնվելու երեք օրերի ընթացքում: Սկզբնական քննության ժամանակ նա հոր դեմ ցուցմունք տվեց, սակայն հետո դատարանում հրաժարվեց իր ցուցմունքից: Մյուս աղջիկը ևս երկու օր պահվել էր ոստիկանությունում, որի ընթացքում նրան թույլ չէին տվել նստել, ապա պարբերաբար հարվածել էին ու նվաստացրել: 2009թ. դեկտեմբերին դատավորը հոր դեմ տված աղջիկների նախնական ցուցմունքները, ինչպես նաև ոստիկանության կողմից ներկայացված այլ ապացույցները գնահատեց անընդունելի այն հիմքով, որ դրանք ոչ օրինական ճանապարհով էին ձեռք բերվել. այնուհանդերձ դատավորը Դավթյանին արդարացրեց բռնաբարության մեղադրանքի մասով: Միաժամանակ դատավորը Դավթյանին դատապարտեց չորս տարվա ազատազրկման խոշտանգումներ գործադրելու մեղադրանքով, քանի որ նա ընդունել էր դուստրերին ծեծի ենթարկելու փաստը: Դեպքը լուսաբանող լրագրողի հաղորդմամբ ոստիկանները ճնշումների են ենթարկել ընտանիքին՝ իրական բռնաբարողի անձը թաքցնելու նպատակով, ով ըստ հնչող մեղադրանքների բարձրաստիճան ոստիկանի որդի է: Բռնաբարության գործի քննությունը կասեցվել է 2009թ.՝ հանցագործի անձը չբացահայտված լինելու հիմքով: Ըստ պաշտոնական տեղեկատվության դատավարության ընթացքում չէին հիմնավորվել ոչ Դավթյանների ընտանիքին ոստիկանների կողմից բռնությունների ենթարկելու վերաբերյալ հնչեցված մեղադրանքները, և ոչ էլ քրեական դատավարության օրենսդրության որևէ խախտում:

2009թ. դեկտեմբերին կարճվեց Գյումրու նախկին ոստիկանապետ Շիրակ Շահնազարյանի դեմ հարուցված քրեական գործը: 2009թ. նրան «բռնության կիրառմամբ զուգորդված» պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանք էր ներկայացվել հուլիսին իր մոտ բողոքով եկած քաղաքացուն ծեծելու և ապօրինաբար կալանքի տակ պահելու համար:

Արձագանքելով օմբուդսմենի 2009թ. խնդրանքին կապված 2009թ. ապրիլին Ոստիկանության Արաբկիրի բաժնում հինգ հոգու նկատմամբ ոստիկանների կողմից ոտնձգություններ թույլ տալու փաստով քննություն անցկացնելու հետ, պատկան մարմինները պատասխանեցին, որ հինգից երկուսը ոստիկանական բաժնում գտնվելու ժամանակ հարձակվել են ոստիկանների վրա, իսկ ոստիկանների կողմից ոտնձգություններ թույլ տալու մասին հնչեցրած մեղադրանքները չեն հիմնավորվել: Ըստ օմբուդսմենի հաղորդված ոտնձգությունները ներառել էին ազատությունից անօրինականորեն զրկելը, սնվելու ու քնի հնարավորության մերժումը, ծեծի ենթարկելը, բուժօգնություն չտրամադրելը և նվաստացնող վերաբերմունքը:

2008թ. հետընտրական բողոքներից երկու շաբաթ անց Երևան ժամանած Խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովի ներկայացուցիչների քրեակատարողական հիմնարկներ կատարած այցի մասին մարտի 19-ին հրապարակված զեկույցում նշվում էր, որ հանձնաժողովի ներկայացուցիչները զրույց են ունեցել հետընտրական դեպքերի հետ կապված մեղադրանքներով կալանքի տակ գտնվող շուրջ 70 հոգու հետ: Գրեթե բոլորը նշում էին, որ ձերբակալելիս իրենց նկատմամբ ֆիզիկական բռնություն է կիրառվել, թեպետ իրենք որևէ դիմադրություն ցույց չեն տվել: Հնչեցված բռնությունները ներառել են հրելը, մահակով հարվածելը, ոտքով և բռունցքով մարմնին և գլխին հասցված հարվածները, քարշ տալով ոստիկանական մեքենա հասցնելը: Երբեմն, այս վատ վերաբերմունքը շարունակվել է ոստիկանական բաժանմունք հասնելու ճանապարհին ու ոստիկանական բաժանմունքներում: Կալանքի տակ գտնվող որոշ անձանց զննությունը պատվիրակության բժշկական փորձագետի կողմից բացահայտեց որոշ ֆիզիկական նշաններ և պայմաններ, որ համահունչ են հնչեցված մեղադրանքներին: Քրեակատարողական հիմնարկների բժշկական փաստաթղթերում ևս կան գրառումներ քրեակատարողական հիմնարկի բժիշկների կողմից այն մասին, որ պատվիրակության այցին նախորդող երկու շաբաթների ընթացքում քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելիս մի շարք մարդիկ նախնական զննմամբ ունեցել են տարբեր վնասվածքներ: Կալանավորներից ոմանք պնդում էին, որ ոստիկանները եղել են դիմակներով և առանց տարբերանշանների: Պատվիրակության հետ զրուցած կալանավորներից ոմանք գտնում էին, որ բռնության են ենթարկվել ինքնամեղադրական խոստովանություններ կամ ուրիշներին վնասող տեղեկություններ տրամադրելու համար:

Տարվա ընթացքում առաջընթաց չի գրանցվել իրավապահների կողմից 2008թ. վիճարկելի նախագահական ընտրությունների ու հետագա բռնությունների հետևանքով ձերբակալված ընդդիմադիր գործիչների դեմ ցուցմունք տալու համար բազմաթիվ վկաների հանդեպ խոշտանգումների ու սպառնալիքների վերաբերյալ հնչեցված մեղադրանքներով ոստիկանության կողմից իրականացվող քննության հարցում:

Փետրվարի 7-ին Վերաքննիչ դատարանն անփոփոխ թողեց ստորին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի որոշումը Լևոն Գուլյանի ընտանիքի բողոքը մերժելու վերաբերյալ՝ կապված հանցանքը հիմնավորող ապացույցների բացակայության հիմքով գործը 2009թ. ապրիլին կարճելու ՀՔԾ-ի որոշման հետ: Սակայն օգոստոսի 27-ին Վճռաբեկ դատարանը բեկանեց Վերաքննիչ դատարանի որոշումը և գործը ետ ուղարկեց ՀՔԾ՝ հետագա քննության: ՀՔԾ-ն պնդում էր, որ սպանության հնարավոր վկա Գուլյանը մահացել է 2007թ. ոստիկանության բաժանմունքի երկրորդ հարկի պատուհանից դուրս նետվելու հետևանքով, երբ փորձել է փախուստի դիմել: Գուլյանի ընտանիքի անդամները և մարդու իրավունքների հարցերով ակտիվիստները նշում էին, որ հետաքննությունն արժանահավատ և թափանցիկ կերպով չի անցկացվել և պնդում էին, որ Գուլյանը մահացել է ոստիկանների բռնությունների հետևանքով:

Հունիսի 15-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) վճիռ կայացրեց, որ իշխանությունները խոշտանգումների կամ ոչ մարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ են կիրառել բանտարկյալ Աշոտ Հարությունյանի նկատմամբ՝ չապահովելով նրան համապատասխան բուժօգնություն և վերաքննիչ դատական քննության ընթացքում նրան մետաղյա ճաղավանդակի մեջ պահելով: ՄԻԵԴ-ը նաև վճռեց, որ խախտվել են Հարությունյանի արդարացի

դատաքննության իրավունքը և անմեղության կանխավարկածը: Հարությունյանը յոթ տարվա ազատազրկման պատիժ էր ստացել բիզնեսում իր գործընկերոջ միջոցների յուրացման համար. նա տառապում էր մի քանի լուրջ հիվանդություններով: ՄԻԵԴ-ին ներկայացված իր գանգատում նա նշում էր, որ քրեակատարողական հիմնարկն անտեսել էր բուժօգնության ու հատուկ սննդակարգի ապահովման իր խնդրանքները: Հարությունյանն առաջին անգամ սրտի կաթված տարավ 2004թ. ու չնայած Երևանի դատապարտյալների հիվանդանոցի խորհրդին, նրան չթույլատրեցին շտապ վիրահատություն անցնել: Հարությունյանը մահացավ 2009թ. հունվարին Կոշ քրեակատարողական հիմնարկում սրտի երկրորդ կաթվածից: Լրատվամիջոցներում անդրադարձ եղավ Հարությունյանի փաստաբանի պնդմանն այն մասին, որ 2007թ. վաղաժամկետ ազատ արձակվելուց հետո Հարությունյանը կրկին վերադարձվել է բանտ Գլխավոր դատախազության ջանքերով ՝ Հարությունյանի խաբված գործընկերոջ դատախազության հետ ունեցած սերտ կապերի շնորհիվ:

Բանակում տիրող անպատժելիությունն ու հրամանատարների կողմից հաշվետվողականության բացակայությունը, անկառավարելի կոռուպցիան և վատ կենցաղային պայմանները շարունակել են պատճառ հանդիսանալ դաժան վերաբերմունքի դրսևորման և մարտական գործողությունների հետ կապ չունեցող վնասվածքների համար: Չնայած հուսալի վիճակագրություն չկա զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների տարածվածության վերաբերյալ, սակայն զինվորները հաղորդել են մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ներին, որ նման չարաշահումները շարունակվել են: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ կոռումպացված պաշտոնյաները վերահսկում են զորամասերը, իսկ մարդու իրավունքների դիտորդները և օմբուդսմենը հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են զորակոչվել անձինք, ովքեր առողջական լուրջ խնդիրների պատճառով պիտանի չեն եղել զինվորական ծառայության համար: Ըստ պաշտոնական տվյալների տարվա ընթացքում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորման ու դրանց հետ կապված բռնությունների համար դատապարտվել է 176 զինծառայող, ևս 12 գործ տարեվերջի դրությամբ դեռ գտնվում էին դատաքննության փուլում:

Սեպտեմբերի 18-ին ընդդիմադիր «Հրապարակ» թերթը հրապարակեց զինծառայությունը կարճ ժամանակ առաջ ավարտած մի երիտասարդի անանուն հաղորդումը, որտեղ ներկայացվում էին Արարատի մարզի զորամասերից մեկի գումարտակի հրամանատար Վարդան Մարտիրոսյանի կողմից թույլ տրված չարաշահումների մանրամասները: Ըստ նրա պատմածի Մարտիրոսյանը դաժանաբար ծեծում և պատժում էր զինվորներին չնչին թերացումների համար կամ ընդհանրապես առանց պատճառի: Երիտասարդը նաև նշում էր, որ իրենց զորամասում եղել է ինքնասպանության հասցնելու դեպք, որի մասին պաշտոնապես չի տեղեկացվել և ոչ ոք դրա համար պատիժ չի կրել: Հոկտեմբերի 14-ին Ազատություն ռադիոկայանը հաղորդեց, որ Պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը ձերբակալել է Վարդան Մարտիրոսյանին իշխանության չարաշահման մեղադրանքով այն բանից հետո, երբ հայտնի է դարձել, որ նա զորակոչիկներին ստիպել է տեղական բանկից ստանալ և իրեն տալ 500 000 ՀՀ դրամի չափով (մոտ 1 400 ԱՄՆ դոլար) վարկեր: Հետագա հաղորդումներով պարզ դարձավ, որ զորամասի մեկ այլ սպա՝ Արթուր Կարապետյանը նույնպես ձերբակալվել է զինվորներից գումար շորթելու համար: Ըստ պաշտոնական տեղեկատվության քննությունը բացահայտել է, որ հետևելով Մարտիրոսյանի հրահանգներին գումարտակի շտաբի պետ մայոր Արսեն Ներսիսյանը 2009թ. հունիսից մինչև 2010թ. օգոստոս տարբեր զինծառայողներից հավաքել է

610 000 ՀՀ դրամ (մոտ 1 500 ԱՄՆ դոլար): Ներսիսյանը նաև հավաքել է 170 000 ՀՀ դրամ (մոտ 425 ԱՄՆ դոլար) և զորամասի հրամանատարի տեղակալ Արթուր Կարապետյանից գնել նոթբուք համակարգիչ և նվիրել այն Մարտիրոսյանին: Երեք սպաների նկատմամբ հարուցվեց քրեական գործ՝ իշխանությունը չարաշահելու մեղադրանքով: Դեկտեմբերի 29-ին Մարտիրոսյանի և Կարապետյանի դեմ գործը կարճվեց «գործուն զղջալու» հիման վրա, իսկ Ներսիսյանի դեմ գործը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Տեղական «Զինվորի մայր» ՀԿ-ի կողմից 2009թ. կատարված հետազոտության համաձայն զինվորների իրավունքների խախտումների ամենամեծաթիվ խախտումները, շուրջ 46 տոկոսը, տեղ են գտել բուժզննության ընթացքում: Այս խախտումները ներառում են ոչ ամբողջական բուժզննությունը նախքան զորակոչելը և առողջական խնդիրներ ունեցող անձանց զորակոչելը: Օմբուդսմենի 2009թ. ամենամյա զեկույցում հիշատակվում էր մի դեպք, երբ հիշյալ պրակտիկան հանգեցրել է զինվորի մահվան: Օմբուդսմենի զեկույցում նշվում էր, որ զորակոչիկների ընտանիքները, որ դժգոհում էին զինվորական կոմիսարիատների գործողություններից, չէին ցանկանում գրավոր բողոք ներկայացնել՝ վախենալով, որ ի պատասխան իրենց որդիները կարող են ծառայության նշանակվել հեռավոր զորամասերում: Օմբուդսմենի գրասենյակն առողջական խնդիրներ ունեցող զինծառայողների հանդիպել է այցելած գրեթե բոլոր զորամասերում: Օմբուդսմենի զեկույցում նաև նշվում էր, որ սահմանային հերթապահության իրականացման մեջ ներգրավված են եղել տարբեր աստիճանի հոգեկան հիվանդության ունեցող զորակոչիկներ: Այդ թվում եղել են զորակոչիկներ, որոնց համար բժշկական եզրակացությամբ սահմանված էին սահմանափակումներ, ընդհուպ մինչև զենքի կրման արգելքը, ինչպես նաև մարդիկ, ովքեր նախկինում ինքնավնասման փորձեր են արել: Զեկույցում նշվում էին զորամասերի հրամանատարների կարծիքներն առ այն, որ որոշ հոգեկան լուրջ խանգարումներ ունեցող զորակոչիկները նշանակալի վտանգ էին ներկայացնում մյուսների համար:

Նոյեմբերի 5-ին լրատվամիջոցները հաղորդեցին զորամասի փոխհրամանատար փոխգնդապետ Արմեն Բարեղամյանի ձերբակալության մասին, ով հոկտեմբերի 28-ին բարբարոսաբար ծեծի էր ենթարկել զինվոր Էրիկ Գրիգորյանին: Գրիգորյանը մոտ ժամ տևած ծեծից հետո կոտրված քթով, ուղեղի ցնցումով և այլ վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց: Բարեղամյանին զայրացրել էր այն փաստը, որ Գրիգորյանը չի ներկայացել առավոտյան շարային վարժանքին: Տարեվերջի դրությամբ իշխանության չարաշահման մեղադրանքով հարուցված գործի քննությունը դեռ ընթացքի մեջ էր, իսկ Բարեղամյանը գտնվում էր կալանքի տակ: Այս միջադեպից առաջ Բարեղամյանի նկատմամբ քննություն էր իրականացվել հունիսի 17-ին նույն զորամասի մեկ այլ զինվորի՝ Բագրատ Եղիշյանին ծեծի ենթարկելու համար. քննության ընթացքում նա շարունակել էր զբաղեցնել փոխհրամանատարի պաշտոնը: Եղիշյանին ծեծի ենթարկելու փաստով գործն հարուցվել էր օգոստոսի 19-ին: Նոյեմբերի 9-ին Եղիշյանի հանդեպ ցուցաբերած բռնության համար Բարեղամյանը դատապարտվեց 2.5 տարվա ազատազրկման:

Սեպտեմբերի 11-ին YouTube-ում հայտնվեց սիրողական մի տեսանյութ, որտեղ գյուղական բացօթյա միջավայրում ոմն մի անձնավորություն ապտակում ու այլ կերպ նվաստացնում էր զինվորականի համազգեստով երկու երիտասարդների: Այդ անձնավորությունը նստած էր գետնին և ուտելիք էր վայելում, իսկ երկու երիտասարդները հերթով ծնկի էին գալիս նրա առջև, և նա քաշում էր նրանց ականջները, թափ էր տալիս և ձեռքով հարվածներ էր հասցնում նրանց պարանոցին ու գլխին: Տեսանյութն անմիջապես

դուրս բերվեց YouTube-ից, սակայն մեծ հնչեղություն ստացավ: Պաշտպանության նախարարությունը սկզբում դատապարտեց այդպիսի տեսանյութի պատրաստումն ու տեղադրումը, սակայն սեպտեմբերի 17-ին հայտարարություն արեց, որ տեսանյութն իրական է, և որ հայ զինվորական անձնակազմին վերաբերող այդ միջադեպը տեղի է ունեցել հուլիսին: Նախարարությունը պարզեց, որ բռնություն գործադրողը մայոր Սասուն Գալստյանն էր, ով գտնվում էր ալկոհոլի ազդեցության տակ, իսկ տուժողներն էին սերժանտ Գարիկ Հարությունյանը և զորակոչիկ Բակուր Եղիկյանը: Պատկան մարմինները քրեական գործ հարուցեցին, և մայոր Գալստյանը ձերբակալվեց իշխանությունը չարաշահելու մեղադրանքով: Դեկտեմբերի 9-ին Գալստյանը դատապարտվեց երեք տարվա ազատազրկման:

Հուլիսի կեսերին հետաքննող լրագրողների «Հետք» շաբաթաթերթում հաղորդում եղավ 11 զորակոչիկների դատավարության մասին, ովքեր շուրջ վեց ամիս՝ սկսած 2009 թ. սեպտեմբերից ծեծել ու նվաստացումների էին ենթարկել իրենց ծառայակից Աբրահամ Կուպալյանին: Երկրորդ տուժողը՝ Արմեն Բորիսովը նույնպես արժանացել էր վատ վերաբերմունքի, երբ փորձել էր պաշտպանել Կուպալյանին: Ըստ «Հետքի» հաղորդման Կուպալյանը մտաբերում էր 12 դեպք, երբ ծեծի ու ոտնձգությունների էր ենթարկվել զորակոչիկներ Յուրա Սարջյանի, Դավիթ Մանուկյանի, Անդրանիկ Տերտերյանի, Աղասի Տոնոյանի, Գևորգ Դավթյանի, Լևոն Գալստյանի, Դավիթ Ղազարյանի, Դավիթ Ղուկասյանի, Արթուր Թարլոյանի, Արա Մանուկյանի և Արամ Վաղարշակյանի կողմից: Կուպալյանը բողոքել է իր հրամանատար Գրիգոր Ավետիսյանին, որը ոչ մի քայլ չի ձեռնարկել: Հոդվածում նշվում էր, որ ծեծի ենթարկելու մասին տեղյակ են եղել առնվազն երկու այլ սպա՝ Գևորգ Երիցյանը և Արա Մելքոնյանը, սակայն նրանք ևս քայլեր չեն ձեռնարկել: 11 բռնացողներից 4-ը դատապարտվեցին 3 տարվա ազատազրկման, իսկ մյուսները պայմանական պատիժներ ստացան: Սակայն պատասխանատվության չկանչվեցին ոչ հրամանատարը, ոչ էլ երկու սպաները: Գրիգոր Ավետիսյանին սկզբում ներկայացվեց մեղադրանք անգործության համար, սակայն հետո մեղադրանքը հանվեց:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Բանտային պայմանները տարվա ընթացքում զգալիորեն վատացել են հիմնականում գերբնակեցվածության հետևանքով: Ավելացել են բանտերում գրանցվող մահվան դեպքերը՝ 2009թ. 15 դեպքի համեմատ տարվա ընթացքում դառնալով 37 դեպք: Մահվան դեպքերի մեծ մասը վերագրվել են հիվանդություններին, իսկ որոշ մասը՝ ինքնասպանություններին: Սեպտեմբերի 6-15-ն անցկացված դիտորդական առաքելության ավարտին կատարված նախնական հայտարարությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խումբը նկատեց, որ որոշ բանտեր գերբնակեցված էին, վատ էին սանիտարահիգիենիկ պայմանները, նվազագույն կերպով էին ապահովվում բուժօգնությունն ու չկար բավարար օդափոխություն: Աշխատանքային խմբի դիտարկմամբ գերբնակեցվածությունը նպաստում էր բանտերում կոռուպցիոն դրսևորումներին, այդ թվում՝ բանտարկյալների կողմից բանտապաններին կաշառքի վճարմանը, որպեսզի տեղափոխվեն ոչ խիտ բնակեցված խցեր: Այնուամենայնիվ, աշխատանքային խումբը նաև արձանագրել էր որոշ դրական տեղաշարժեր: Իշխանություններն ընդհանուր առմամբ թույլատրել են անկախ իրավապաշտպան դիտորդների այցելությունները:

Հուլիսի 26-ին Հասարակական դիտորդների խումբը նշեց, որ նախորդ տասներկու ամիսների ընթացքում անազատության մեջ գտնվողների թիվն ավելացել է 20 տոկոսով: Հասարակական դիտորդների խմբի հաղորդմամբ ըստ պաշտոնական տեղեկատվության հուլիսի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց թիվը կազմում էր 4850 հոգի, սակայն այդ հիմնարկներում տեղերի առավելագույն նախատեսված թիվը 4396 է: Հասարակական դիտորդների խումբը նշում էր, որի երկրի ամենամեծ քրեակատարողական հիմնարկում՝ Նուբարաշենում ութ հոգու համար նախատեսված խցերում պահվում էին 16-20 հոգի և բանտարկյալները քնում էին հերթով: Ըստ Հասարակական դիտորդների խմբի գերբնակեցումն ու վատ օդափոխությունը պատճառել են հոգեբանական ու առողջական խնդիրներ, հանգեցրել են բանտարկյալների միջև լարվածության ու կոնֆլիկտների: Ըստ Հասարակական դիտորդների խմբի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն այս իրավիճակը կարող է բնութագրվել որպես դաժան, անմարդկային, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, իսկ որոշ դեպքերում՝ համարվել խոշտանգում:

Ըստ Հասարակական դիտորդների խմբի գերբնակեցվածության պատճառներից մեկը դատարանների կողմից կալանքը որպես խափանման միջոց լայնորեն կիրառելու պրակտիկան է և այլընտրանքային պատիժների կամ պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու սահմանափակ կիրառումը: Խումբը նշում էր, որ 2009թ. տվյալներով պայմանական վաղաժամկետ ազատ արձակվելու պահանջներին բավարարող բանտարկյալներից միայն 14 տոկոսն է փաստացի ազատ արձակվել: Տարվա ընթացքում մարդու իրավունքների ակտիվիստները և փաստաբանները շարունակել են մտահոգություն հայտնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով հանձնաժողովների որոշումների ընդունման գործընթացի վերաբերյալ. մասնավորապես նշվում էր, որ որոշումների ընդունման համար հանձնաժողովները չունեն հստակ չափորոշիչներ, բացակայում են բողոքարկման մեխանիզմները, իսկ հանձնաժողովների կազմում գերակշիռ մասը կազմում են իրավապահ կառույցների ներկայացուցիչները, ովքեր հակված են կողմնակալություն ցուցաբերել նախկինում հանցանքներ գործածների դեմ:

Տարվա ընթացքում Հասարակական մոնիտորինգի խումբը մի շարք հրատապ զեկույցներ է ներկայացրել Արդարադատության նախարարությանը կապված մի շարք դատապարտյալների առողջության վատթարացման հետ. չնայած առողջական վիճակից ելնելով՝ այս դատապարտյալները տեսականորեն բավարարում էին վաղաժամկետ ազատ արձակվելու պահանջներին, սակայն շարունակում էին մնալ բանտում: Ըստ Հասարակական դիտորդների խմբի միջգերատեսչական բժշկական հանձնաժողովը, որ քննության էր առնում առողջական պատճառներով բանտարկյալների վաղաժամկետ ազատ արձակելու հարցը, դանդաղ էր գործողություններ ձեռնարկում, ինչը հանգեցնում էր քննարկումների անհարկի ձգձգումներին:

Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց միջին թիվը կազմել է 4807 հոգի: Սա ներառում է նախնական կալանքի տակ գտնվողներին, որոնց միջին տարեկան թիվը կազմել է 456 հոգի և 416 կալանավորներ, որոնց գործերը եղել է ընթացքի մեջ և ովքեր սպասել են իրենց դատավճիռներին: Նախնական կալանքի տակ գտնվողները բանտարկյալներից առանձին են

պահվել: Քրեակատարողական հիմնարկություններն ընդհանուր առմամբ հնարավորություն ունեն տեղավորել 4395 հոգու:

Տարեվերջի դրությամբ Աբովյանի կանանց և անչափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում կային 204 կին (143 դատապարտյալ և 61 կալանավորված) և 34 անչափահաս (22 դատապարտյալ և 12 կալանավորված): Անչափահաս կալանավորվածներից մեկն իգական սեռի ներկայացուցիչ էր: Կանայք և անչափահաս տղաները պահվում էին առանձին գոտիներում: Անչափահաս աղջիկ բանտարկյալների համար չկար առանձին տեղ, քանի որ անչափահաս աղջիկները հազվադեպ են դատապարտվում. այնուհանդերձ, դատապարտվելու դեպքում էլ նրանք պահվում են չափահաս կանանց հետ: Բանտարկյալները տեղավորված էին մեծ հանրակացարաններում՝ անչափահաս տղաները կանանցից առանձին: Ըստ տեղական դիտորդների այս կերպ ստեղծվում էին այնպիսի պայմաններ, որոնք ավելի վատ էին, քան այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ բանտարկյալները պահվում էին առանձին խցերում:

Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2009թ. զեկույցում որպես զգալի խնդիր առանձնացվում էր ոստիկանության կալանախցերը փաստացի որպես նախնական կալանքի տակ գտնվողների պահման վայր օգտագործումը: Երևանից դուրս՝ մարզերում նախնական կալանքի տակ գտնվողների թիվը ոստիկանական կալանախցերում գերազանցել է ձերբակալվածների թիվը՝ ավելի քան երկուսը մեկին հարաբերակցությամբ. եղել են 2276 նախնական կալանքի տակ գտնվողներ և 915 ձերբակալվածներ: Օրենքի համաձայն նախնական կալանքի տակ գտնվողները չեն կարող պահվել ոստիկանության կալանախցերում երեք օրից ավել, քանի որ այս խցերում կալանքի տակ գտնվողների համար ապահովված չեն այնպիսի պայմաններ, որպիսիք կան քրեակատարողական հիմնարկներում: Այնուհանդերձ դիտորդների խմբի հաղորդման համաձայն մարզերում եղել են դեպքեր, երբ նախնական կալանքի տակ գտնվողները ոստիկանության ձերբակալված անձանց պահման վայրերում մնացել են մինչև 27 օր: Թեպետ հասարակական դիտորդների խումբն իրականացնում էր Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերի մոնիտորինգ, սակայն ոստիկանության բաժանմունքի տարածք մուտքի հնարավորություն չուներ:

Դատապարտյալներին ու կալանավորվածներին միշտ չէ որ ապահովվում են տեսակցության ողջամիտ հնարավորություններ: Երկու խումբն էլ իրավասու են ունենալ կարճաժամկետ տեսակցություններ, իսկ բանտարկյալներն ունեն նաև երկարաժամկետ (ընտանեկան) տեսակցության իրավասություն: Նախնական կալանքի տակ գտնվողներն իրավասու են ամսվա ընթացքում ունենալ առնվազն երկու կարճաժամկետ (մինչև երեք ժամ տևողությամբ) տեսակցություն մոտ ազգականների, լրատվամիջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ, եթե վարույթ իրականացնող մարմինը չի արգելել այդպիսի տեսակցությունները: Դատապարտյալների մեծ մասն իրավասու են ամսվա ընթացքում ունենալ առնվազն մեկ կարճաժամկետ (մինչև չորս ժամ տևողությամբ) տեսակցություն մոտ ազգականների կամ այլ անձանց հետ և երկարաժամկետ (մինչև երեք օր տևողությամբ) տեսակցություն մոտ ազգականների հետ յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ: Այս նվազագույն իրավասությունները միշտ չէ որ պահպանվել են, սակայն հիմնականում դա պայմանավորված է եղել տեխնիկական պատճառներով: Գերբնակեցվածության պատճառով Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում գտնվող բանտարկյալները չէին օգտվում

տեսակցություն ունենալու իրենց իրավունքից կամ ստիպված էին գոհանալ տեսակցություններով, որոնք օրենքով սահմանված ժամանակից շատ ավելի կարճ էին տևում: Առանձնապես ծանր հանցանքների համար դատապարտվածների և ցմահ պատիժ ստացածների համար սահմանված են տեսակցության ավելի քիչ հնարավորություններ՝ երեք կարճաժամկետ և մեկ երկարաժամկետ տեսակցություն տարվա ընթացքում: Ըստ տեղական դիտորդների տեսակցությունների այս լրացուցիչ սահմանափակումները հանդիսանում են լրացուցիչ պատիժ՝ ի հավելումն դատարանի սահմանածին:

Ըստ տեղական դիտորդների պատկան մարմինները չեն հետաքննել անմարդկային պայմանների վերաբերյալ հնչեցված արժանահավատ մեղադրանքները և հրապարակայնորեն հասանելի կերպով չեն փաստաթղթավորել այդ քննությունների արդյունքները: Բացի այդ, պատկան մարմինները միշտ չէ, որ թույլ են տվել բանտարկյալներին և կալանավորներին ներկայացնել գրաքննություն չանցած բողոքներ՝ պահանջելով անմարդկային պայմանների մասին հնչեցված արժանահավատ մեղադրանքների քննություն: Օրենքի համաձայն նախնական կալանքի տակ գտնվողների նամակագրությունը կարող է գրաքննության ենթարկվել միայն դատարանի հրամանով: Այնուհանդերձ, ըստ տեղական դիտորդների եղել են բազմաթիվ դեպքեր, երբ քրեակատարողական հիմնարկի վարչական անձնակազմի կողմից դատապարտված անձանց նամակները կարդացվել են ու գրաքննության ենթարկվել:

Ըստ տեղական դիտորդների կառավարությունն արդյունավետ ձևով չի հետաքննել ու հսկել բանտերի ու պահման վայրերի պայմանները: Քրեակատարողական հիմնարկների կողմից իրավական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար պատասխանատու էր Արդարադատության նախարարության Վերահսկողության վարչությունը, սակայն ըստ տեղական դիտորդների այն չուներ բավարար կադրեր և ռեսուրսներ այս գործառույթն արդյունավետ կերպով իրականացնելու համար:

Տարվա ընթացքում չեն հարուցվել բանտարկյալների հանդեպ բռնություն կիրառելու հետ կապված գործեր քրեակատարողական հիմնարկների վարչական անձնակազմի կամ այլ պաշտոնյաների դեմ:

Հուլիսի 20-ին օմբուդսմենը գրություն ուղարկեց Արդարադատության նախարարություն՝ հայտնելով իր մտահոգություններն ինքնասպանությունների ու մահացու ելքով պատահարների վերաբերյալ, որոնք մայիս-հուլիս ժամանակահատվածում տեղ էին գտել Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում: Նա նախարարությանը խնդրում էր պարզաբանումներ տալ դեպքերի վերաբերյալ և ներկայացնել դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը: Ի պատասխան Արդարադատության նախարարությունը հայտնեց, որ բացահայտվել են մի շարք խախտումներ քրեակատարողական հիմնարկների վարչական անձնակազմի և քաղաքացիական բուժհաստատությունների բուժանձնակազմի կողմից, ու թեպետ դրանք այդ մահվան դեպքերին չեն նպաստել, սակայն առավել խոցելի են դարձրել անազատության մեջ գտնվողներին: Արդարադատության նախարարությունը հայտնեց, որ ձեռնարկում էր միջոցներ իրավիճակը շտկելու ուղղությամբ:

Քրեակատարողական հիմնարկների տեղական դիտորդները հավատացած էին, որ մահվան թվերի ավելացումը զուգորդված է բանտային պայմանների վատացման հետ: Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է մահվան 37 դեպք, մինչդեռ 2009թ. գրանցվել էր 15 դեպք: Մահվան դեպքերի մեծ

մասը պայմանավորված է եղել հիվանդություններով, մեկ դեպք գրանցվել է պատահարի հետևանքով և եղել է ինքնասպանության չորս դեպք:

Կոռուպցիան շարունակել է խնդիր հանդիսանալ քրեակատարողական հիմնարկներում, և դրանում ներգրավված էին թե բանտարկյալները, թե վարչական անձնակազմը (տես՝ Մաս 4): 2009թ. «Հելսինկյան կոմիտե» ՀԿ-ն հաղորդել է Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի նախկին բանտարկյալի պատմածը, ով պնդում էր, թե քրեակատարողական հիմնարկը ղեկավարվում էր կազմակերպված գաղտնի հանցավոր համակարգի կողմից, առկա էր հսկայական չափերի հասնող կոռուպցիա, որն անդրադառնում էր բանտարկյալների վրա և որում ներքաշված էր հիմնարկի վարչական անձնակազմը. նա որպես գերիշխող երևույթներ ներկայացնում էր գաղտնիությունը, շանտաժը, մոլախաղերը, խոշտանգումները, հոգեբանական ճնշումները, ահաբեկումը և բանտարկյալներին ինքնասպանության հասցնելը: Այդ պատմության մեջ նշվում էր, որ կաշառք պետք է վճարվեր օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու համար, ինչպիսիք են՝ տեսակցությունները, զբոսանքը, հեռախոսազանգերը և հանձնուկներ ստանալը:

Կառավարությունը հիմնականում թույլատրել է տեղական հասարակական կազմակերպություններին և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին դիտարկել բանտային պայմանները: Կարմիր խաչի միջազգային կոմիտեին թույլատրվել է այցելել թե բանտեր, թե նախնական կալանքի կենտրոններ, ինչն էլ վերջինս իրականացրել է անհրաժեշտության ու նպատակահարմարության իր սկզբունքների համաձայն: Իշխանությունները հիմնականում թույլատրել են Հասարակական դիտորդների խմբի ներկայացուցիչներին առանց նախնական զգուշացման այցելել բանտեր:

2008թ. Ազգային ժողովը ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության իրականացման գործառույթը երկրում պատվիրակեց օմբուդսմենին: Գործելով օմբուդսմենի գրասենյակի վերահսկողության ներքո օմբուդսմենի կողմից նշանակված ՀԿ-ների չորս ներկայացուցիչներից և երեք փորձագետներից կազմված խումբը տարվա ընթացքում սկսեց Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության իրականացումը և ամռան ամիսներից սկսած այցելեց տարբեր կալանավայրեր ու ոստիկանական բաժանմունքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը չի սահմանում, թե արդյոք օմբուդսմենն իրավասու է բանտարկյալների կամ կալանավորների անունից հանդես գալ քննության առնելու այնպիսի հարցեր ինչպիսիք են ոչ մարդկային պայմաններ ստեղծող գերբնակեցումը մեղմելու համար բանտարկության փոխարեն այլ միջոցների կիրառումը բռնություն թույլ չտված հանցագործների համար. անչափահաս հանցագործների կարգավիճակի ու բանտարկության պայմանների կարգավորումը. նախնական կալանքի, գրավի և հաշվառման ընթացակարգերի բարելավում՝ ապահովելու, որ բանտարկյալները չկրեն մեղադրանքի առավելագույն պատժից ավել պատիժ: Այնուամենայնիվ, օրենքն օմբուդսմենին թույլ է տալիս ցանկացած անձից մարդու իրավունքների խախտման վերաբերյալ բողոք ստանալուց հետո պետությանն առաջարկել շտկող գործողություններ, որոնցով կվերացվի տեղի ունեցած խախտումը, այդ թվում նաև ձեռնարկել իրավական քայլեր անվավեր ճանաչելու պետության այն իրավական ակտերը, որոնք խախտում են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի աշխատանքային խումբը սեպտեմբերի իր դիտորդական առաքելության ավարտին գրանցեց որոշ դրական տեղաշարժեր, այդ թվում խմբի այցելած բանտերում ու կալանավայրերում ֆիզիկական պայմանների բարելավմանն ուղղված քայլերը, և նշեց, որ վերանորոգվել են ոստիկանության ձերբակալված անձանց պահելու 40 վայրերից 33-ը: Հայտարարությունը նաև նշում էր բանտարկյալների, կալանավորների և բանտապահների միջև առերևույթ լավ փոխհարաբերությունները, և հայտնում, որ խումբը ոչ մի բանտարկյալից չի ստացել որևէ բողոք բանտապահների կողմից իշխանությունը չարաշահելու կամ վատ վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ:

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը: Թեպետ օրենսդրական իրավունքով նախատեսվում է համարժեք դատական քննություն, սակայն դատավորները հաճախ չեն կամենում վիճարկել անձանց կալանավորելու մասին դատախազների միջնորդությունները կամ քննել ոստիկանների պահվածքը կասկածյալների ձերբակալությունները կատարելիս: Օրենքը չի պահանջվում հետախուզման մեջ գտնվող անձին, որի համար կարգադրագիր տրված է, ձերբակալելուն պես ներկայացնել դատարան՝ ձերբակալությունից հետո կալանքի հարցը քննության առնելու համար: Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով դա պահանջվում է: Գործնականում իշխանությունները ժամանակ առ ժամանակ ձերբակալել և կալանավորել են քրեական գործերով կասկածյալներին առանց ողջամիտ կասկածների: Իշխանությունները շարունակել են կամայականորեն կալանավորել անհատների՝ քաղաքական կապերի կամ կառավարությանն ընդդիմադիր ընկալվող քաղաքական գործունեության համար:

Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար. երկու կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են նախագահի կողմից: Ոստիկանությունն ու ԱԱԾ դեռևս չունեն համապատասխան պատրաստվածություն, ռեսուրսներ և սահմանված ընթացակարգեր բարեփոխումների հաջող իրականացման կամ չարաշահումների դեպքերը կանխարգելելու համար: Իրավապահների կողմից իրենց շարքերում չարաշահումների մեղադրանքները հետաքննելու ուղղությամբ քիչ բան է արվել: Դրա արդյունքում անպատժելիությունը շարունակում էր մնալ որպես քրոնիկ, լուրջ խնդիր, մասնավորապես ոստիկանական անձնակազմի շարքերում:

Ոստիկանական չարաշահումների քննության առանձին մեխանիզմ չի եղել: Ըստ օրենսդրության քաղաքացիները կարող են ոստիկանության դեմ հայց ներկայացնել դատարան: Ըստ պաշտոնական տեղեկատվության ոստիկանությունում տարվա ընթացքում 24 ծառայողական քննություն է անցկացվել քաղաքացիների կողմից ներկայացված ձերբակալված կամ կալանավորված անձանց, վկաների կամ քաղաքացիների նկատմամբ ոստիկանության աշխատակիցների անօրինաչափ և դաժան վերաբերմունքի բողոքների հետ կապված: Գործերից 18-ն ապացույցներով չեն հիմնավորվել, երկու գործ գտնվում էին

ընթացքի մեջ, իսկ չորս գործերով չորս ոստիկան ենթարկվել է կարգապահական տույժերի, ընդ որում՝ մեկը հեռացվել է աշխատանքից:

Տարվա ընթացքում ՀՔԾ-ն քննել է իրավապահ կառույցների ներկայացուցիչների կողմից չարաշահում թույլ տալու չորս գործ: Այս գործերից երկուսով ութ մեղադրյալի հանդեպ մեղադրանք է ներկայացվել դատարան, գործերից մեկը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով, իսկ մեկը կասեցվել է՝ մեղավորին չգտնելու հիմքով:

Օրենսդրության համաձայն նախնական կալանքի տակ գտնվողները կարող են նախքան դատավարությունը բողոք ներկայացնել քննության ընթացքում իրավապահների թույլ տված հնարավոր բռնությունների վերաբերյալ. այնուհանդերձ կալանքի տակ գտնվող անձինք պետք է ոստիկանությունից կամ դատախազությունից բժշկական փորձաքննության թույլտվություն ստանան, որն անհրաժեշտ է ֆիզիկական բռնության փաստը հաստատելու համար: Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները շարունակել են հայտնել, որ իրավասու մարմինները հազվադեպ են այդպիսի թույլտվություն տալիս կամ տալիս են օրեր անց, երբ բռնության հետքերն այլևս տեսանելի չեն:

Մարտի 31-ին կառավարությունը հաստատեց Ոստիկանության բարեփոխումների 2010-11թթ. ծրագիրը: Ծրագիրը, որը մշակվել էր Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) օժանդակությամբ, և որն առաջարկում էր կառուցվածքային, կազմակերպական և կրթական բարեփոխումներ ոստիկանությունում: Իշխանությունները ԵԱՀԿ-ի հետ համագործակցելով շարունակել են զարգացնել համայնքային ոստիկանության նախաձեռնությունները, որի շրջանակում 2009թ. Արաբկիր համայնքում բացվել էր ոստիկանության երկու հենակետ:

2008թ. հետընտրական անհանգստությունների հարցերով կառավարության ձևավորած, ապա կազմալուծված փաստահավաք խմբի երկու ընդդիմադիր անդամները մայիսի 14-ի հրապարակեցին մի զեկույց այդ դեպքերում զինված ուժերի ներգրավվածության վերաբերյալ: Զեկույցը հայտնում էր, որ մարտի 1-ին նախքան արտակարգ դրություն հայտարարելն արդեն իսկ հրամայված է եղել զորամիավորումներ հասցնել Երևան, ինչը հանդիսանում է սահմանադրության խախտում: Որպես ապացույց հեղինակները ներկայացնում էին սահմանադրության իրավական վերլուծությունը, տարբեր պաշտոնյաների ասածների միջև հակասությունները, լուսանկարներ և տեսանյութեր և 2008թ. տրված գաղտնի հրահանգը, որը լրատվամիջոցները հրապարակել էին 2009թ. դեկտեմբերին: Հրահանգն իջեցվել էր այդ ժամանակ պաշտպանության նախարար հանդիսացող Միքայել Հարությունյանի կողմից և դրանով զինված ուժերը բերվել էին պատրաստության բարձր աստիճանի, ձևավորվել ու զինվել էին սպայական հատուկ խմբեր և Երևանի կայազորի հրամանատար, պաշտպանության նախարարի տեղակալ Յուրի Խաչատուրովի ղեկավարության ներքո ստեղծվել էր հատուկ հրամանատարական կառուցվածք լայն իրավասություններով՝ ղեկավարելու Երևանում և Երևանի շուրջ տեղակայված զորամիավորումները: Պաշտպանության նախարարության նախկին ավագ պաշտոնյա Արմեն Սարգսյանը մայիսի 4-ին դատապարտվեց երկու տարվա ազատազրկման՝ այդ փաստաթղթի արտահոսքի համար, իսկ նրա ենթակա Լյուսյա Այվազյանը մեկ տարվա պայմանական ազատազրկման՝ նույն մեղադրանքով: Գաղտնի հրահանգի հրապարակումից ու փաստահավաք փորձագիտական խմբի նախկին անդամների զեկույցից հետո քաղաքական ընդդիմությունը պնդում էր, որ իշխանությունների գործողություններն իրենցից ներկայացնում են հեղաշրջում:

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ պաշտոնապես ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժում ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը: Երբեմն ոստիկանությունն անձանց կանչել և պահել է երեք ժամից ավել առանց նրանց պաշտոնապես ձերբակալելու, այն պատրվակով, որ նրանք գործով անցնող վկաներ են (և ոչ կասկածյալներ): Տեղական դիտորդները պնդել են, որ ոստիկանությունը խուսափում էր նրանց կասկածյալներ որակելուց, որպեսզի շրջանցի իրավական պահանջն ապահովելու նրանց այդ կարգավիճակին համապատասխան իրավունքներ:

Ըստ Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2009թ. զեկույցի, ձերբակալված անձանց պահելու վայրերի մատյաններում արվել է 257 գրառում, երբ այդ վայրերում գտնվող 4158 անձիք օգտվել են փաստաբանի հետ հանդիպելու իրենց իրավունքից, ընդ որում այս թիվը ներառում է այն դեպքերը, երբ միևնույն անձը փաստաբանի հետ հանդիպել է մի քանի անգամ:

Նախնական դիտարկումների մասին հայտարարությունում, որով ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խումբը հանդես եկավ սեպտեմբերին, նշվում էր, որ ոստիկանության, ԱԱԾ-ի և սահմանապահների չափից լայն իրավասություններ ունենալը նպաստել է այն փաստին, որ բազմաթիվ անձինք կալանավորվել կամ ձերբակալվել են առանց կարգադրագրի: Ձերբակալությունները շատ հաճախ հանդիսանում են ոչ թե ընթացող քննության արդյունք, այլ մարդկանց կալանքի տակ են վերցնում, որպեսզի քննություն անցկացվի:

Օրենքը նախատեսում է գրավի համակարգ, սակայն գործնականում դատարանների մեծ մասը մերժում է գրավի հայտերը՝ փոխարենը կարգադրելով կամ երկարացնել նախնական կալանքը, կամ նախքան դատը մեղադրյալին ազատ արձակել՝ նրա ստանձնած պարտավորության հիման վրա : Վերջին տարբերակի դեպքում մեղադրյալներից երբեմն պահանջում են հանձնել անձնագիրը և փաստաթուղթ ստորագրել երկրի, որոշ դեպքերում քաղաքի սահմաններից չբացակայելու վերաբերյալ: Փաստաբանները և դատական դիտորդները դժգոհում էին, որ թեպետ օրենքը պահանջում է ողջամիտ որոշում կալանքի վերաբերյալ և որ կալանքը դիտարկվում է որպես ծայրահեղ միջոց, գործնականում կալանքի մասին որոշումները դատարանների կողմից հաճախ հաստատվում են ավտոմատ կերպով՝ հաշվի չառնելով թե արդյոք սահմանափակման ավելի նվազ աստիճան ունեցող միջոցները կարող են բավարար լինել ապահովելու արդարադատության պատշաճ իրացումը: Կալանքի չափից ավել օգտագործումն առկա էր նաև անչափահաս իրավախախտների դեպքում: Անչափահաս իրավախախտների հետ կապված առանձին համակարգ չկա, և որոշ դիտորդների գնահատմամբ չափահասների ու անչափահասների համակարգերի տարանջատված չլինելու հետևանքով ամբողջությամբ չի գիտակցվում անչափահասների գործերի արդարադատության առանձնահատուկ բնույթը:

Մարտի 8-ին Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) հրապարակեց 2008թ. ապրիլից 2009թ. հուլիսը կատարված դատական մոնիտորինգի վերջնական զեկույցը, որը ներկայացնում էր ԺՀՄԻԳ-ի դիտարկումները 2008թ. հետընտրական դեպքերի հիման վրա հարուցված քրեական գործերի դատավարությունների վերաբերյալ: Ըստ զեկույցի ձերբակալության ու կալանքի նկատմամբ դատական վերանայումը միշտ չէ, որ համապատասխանել է միջազգային չափանիշներին կամ տեղական օրենսդրության պահանջներին, և դատավարությանը սպասող մեղադրյալներին կալանքի տակ պահելու մասին որոշումները պատշաճ հիմնավորված չեն եղել և համարժեք կերպով չեն գնահատել առանձին գործերի փաստերը: ԺՀՄԻԳ զեկույցում նշվում էր, որ կալանքից բացի այլ միջոցները հազվադեպ են դիտարկվել, իսկ դրանց վերաբերյալ պաշտպանական կողմի դիմումները հաճախ հաշվի չեն առնվել: Ոստիկանության ձերբակալությունները հաճախ ձևակերպվել են ոչ պատշաճ կերպով և անճշտություններով, որը կասկածներ է առաջացրել ձերբակալությունների և ոստիկանությունում պահելու օրինականության վերաբերյալ: Զեկույցում նշվում էր, որ օրենքի համաձայն կալանք կիրառելու մասին դատական լսումները համարվում են փակ լսումներ: Դատական մարմինները փակ լսումները հիմնավորում էին քրեական գործի քննությամբ ձեռք բերված տեղեկությունները պաշտպանելու անհրաժեշտությամբ. այնուհանդերձ, այս ընթացակարգը թույլ չէր տալիս լրատվամիջոցներին և հասարակությանը հսկել կալանքի մասին որոշումների տեղին լինելը և պատսպարում էր դատարաններին, որ այդ որոշումները զննություն չանցնեն:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց լռություն պահպանելու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու իրավունքների մասին: Անվճարունակ լինելու դեպքում տրամադրվում է հանրային պաշտպան: Այնուհանդերձ, գործնականում ոստիկանությունը հաճախ առանց փաստաբանի ներկայության հարցաքննել ու ճնշում է գործադրել արգելանքի վերցված անձանց վրա՝ մինչև մեղադրանք առաջադրելը և առանց իրավական պաշտպանի ներկայության: Մարդկանց պահելը որպես «գործով անցնող վկաների»՝ նախքան նրանց կասկածյալ որակելը, հանգեցրել է այն փաստին, որ այդ անձինք հարցաքննվել են առանց փաստաբանի: Ոստիկանությունը երբեմն սահմանափակել է ընտանիքի անդամների կամ փաստաբանների շփման հնարավորությունն արգելանքի վերցված անձանց հետ:

Մայիսի 28-ից 31-ը ընկած ժամանակահատվածում ոստիկանությունը՝ Երևան քաղաքի փոխոստիկանապետ Ռոբերտ Մելքոնյանի հրամանատարության ներքո, կամայականորեն բերման է ենթարկել տասնյակ անձանց, հիմնականում երիտասարդ ակտիվիստների, քաղաքական ընդդիմության ներկայացուցիչների և որոշ լրագրողների, ովքեր փորձում էին մուտք գործել քաղաքի կենտրոնում գտնվող Ազատության հրապարակն այն բանից հետո, երբ ոստիկանները հրամայել էին այնտեղ չգնալ՝ մի քանի դեպքում նրանց կանգնեցնելու համար դիմելով ուժի (տես՝ Մաս 2.բ):

Նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված որոշում, որով հիմնավորվում է կալանքի տակ պահելու ժամկետի երկարաձգումը, դատավորները հաճախ երկարաձգել են կալանքն առերևույթ անհասկանալի հիմքերով: Գործնականում իշխանությունները հարգել են օրենքի այն դրույթը, որ նախքան

դատավարության սկսելը մեղադրյալը չի կարող պահվել կալանքի տակ 12 ամսից ավել: Սակայն օրենքը չի սահմանափակում այն ժամկետը, թե մեղադրյալն ինչքան կարող է մնալ կալանքի տակ գործը դատարան ուղարկելուց հետո:

Պաշտոնական տվյալներով տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում գտնվող բանտարկյալների միջին թիվը կազմել է 4807 հոգի, որոնցից 456-ը նախնական կալանքի տակ գտնվողներ էին, իսկ 416-ն այն անձինք են, որոնց դատավարությունն ընթացքի մեջ էր:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբի սեպտեմբերի 6-15-ը կատարած այցի մասին հայտարարության մեջ նշվում էր, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների ու կալանավորվածների թվի հարաբերակցությունը կարծես թե համամասնական է և համարժեք, ու կալանավորվածները կազմում են անազատության մեջ գտնվողների մեկ քառորդը:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ. այնուամենայնիվ դատարանները շարունակում էին ենթարկվել գործադիր իշխանության քաղաքական ճնշումներին, ինչպես նաև կար ինքնապարտադրված ակնկալիք, որ դատավորները մեղավոր են ճանաչելու գրեթե բոլորին, ում առաջադրվում է մեղադրանք: Չնայած դատական կոռուպցիան շարունակում էր գոյություն ունենալ, սակայն դատական գործերի դիտարկողները հավատացած էին, որ այն ավելի քիչ էր, քան նախկինում: Սա պայմանավորված էր մի շարք գործոններով. զգալիորեն բարձրացվել էին դատավորների աշխատավարձերը, շատ կոռուպցիոն գործեր էին հարուցվել միջին և ցածր օղակի պետական պաշտոնյաների դեմ (այդ թվում ոստիկանների և դատախազների դեմ). և դատավորներն ավելի զգուշավոր էին դարձել, քանի որ նախորդ տարիների համեմատ մեծացել էր կարգապահական տույժերի կամ այլ պատիժների կիրառման հավանականությունը:

Դատաքննությունները սովորաբար բավարարել են արդարության ընթացակարգային ստանդարտներից շատերին. այնուհանդերձ, դրանք հաճախ անարդարացի են եղել էությամբ, քանի որ շատ դատավորներ իրենց հարկադրված են զգում աշխատել դատախազների հետ՝ հասնելու դատապարտման: Դատավորները չեն կամեցել կասկածի տակ դնել ոստիկանության փորձագետների եզրակացությունները կամ պահանջել մեղադրող կողմից ներկայացնել մեղքի համարժեք բարձ մակարդակի ապացույցներ, դրանով իսկ խոչընդոտելով մեղադրյալի պատշաճ պաշտպանության հնարավորությունը:

2008թ.-ից ՄԻԵԴ-ը գտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված արդար դատաքննության քաղաքացիների իրավունքի տասներեք խախտում: Դեպքերից մեկով, որի վերաբերյալ որոշումը կայացվել է տարվա ընթացքում, ՄԻԵԴ-ը հայտարարեց, որ խախտվել է քաղաքացու դատարանի հասանելիության իրավունքը, երբ Վճռաբեկ դատարանը, առանց հաշվի առնելու քաղաքացու կողմից անկառավարելի պատճառների առկայությունը, հրաժարվել է ընդունել սահմանված ժամկետից հետո քաղաքացու ներկայացրած բողոքը: Վճիռը գործողության մեջ մտավ հոկտեմբերի 4-ին կառավարության կողմից ՄԻԵԴ-ի վերին պալատում այն բողոքարկելու անհաջող փորձից հետո:

Դատաքննություն

Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լսումները լինեն դռնբաց, սակայն կան բացառություններ, ներառյալ, երբ լսումների փակ լինելը բխում է «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից: Դատավարությունների ժամանակ չկան երդվյալ ատենակալներ: Առաջին ատյանի դատարանում դատավճիռ կայացվում է մեկ դատավորի կողմից (բացի այն դեպքերից, երբ հանցանքի համար կարող է սահմանվել ցմահ բանտարկություն), իսկ ավելի բարձր ատյանի դատարաններում՝ դատավորների խորհրդի կողմից: Ամբաստանյալներն ընդհանրապես իրավունք ունեն և սովորաբար պահանջվում է, որ ներկա գտնվեն իրենց դատավարություններին: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ կառավարությունը պարտավոր է ամբաստանյալներին փաստաբան՝ հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Սակայն այս պարտավորությունը մարզերում՝ Երևանից դուրս, որտեղ չկան բավարար թվով փաստաբաններ, միշտ չէ որ հարգվել է: Ամբաստանյալները նաև որոշ դեպքերում հրաժարվում են հանրային պաշտպաններից՝ առաջնորդվելով այն ընկալմամբ, որ հանրային պաշտպանները գաղտնի համաձայնության են գալիս դատախազների հետ:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն գործնականում ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու կառավարության վկաներին, մասնավորապես՝ ոստիկաններին: Օրենքի համաձայն ոստիկաններին արգելվում է ի պաշտոնե ցուցմունք տալ դատարանում, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Այսպիսով, հանցանքի վայրում հայտնաբերված իրեղեն ապացույցների մասին ոստիկանության պաշտոնական հաշվետվությունները կամ ամբաստանյալի խոստովանությունը ընդունվել են որպես ապացույց՝ առանց դատարանում դրանց վերաբերյալ ոստիկանական ցուցմունքների: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբաններն այս պաշտոնական հաշվետվությունները վիճարկելու հնարավորություն համարյա չունեն և դրանք հիմնականում դատարանների կողմից ընդունվում են որպես անառարկելի: Դատավորներն էին վերահսկում «վկաների ցանկը», որով որոշվում էր, թե որ վկաներն են գործից բխող ապացույցներ ներկայացնում, իսկ պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ իրենց թույլ չի տրվել կանչել կամ դատավարությանն ապահովել այնպիսի վկաների հրավիրումը, որոնք իրենց գնահատմամբ ունեին ապացույցներ, որ կարող էին օգտակար լինել իրենց պաշտպանյալի համար:

Մեղադրյալները, մեղադրական և տուժող կողմերն իրավունք ունեն բողոքարկելու դատավճիռները: Դատավորները սովորաբար չեն մերժում գործին նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու ամբաստանյալների դիմումները: Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն գործնականում այս իրավունքը հաճախ խախտվել է:

Բոլոր մակարդակի դատարաններում պատշաճ ուշադրություն չի դարձվել մեղադրյալների կամ վկաների հայտարարություններին, որ քննության ընթացքում իրենց ենթարկել են խոշտանգումների: Դատապաշտպանները կարող են խոշտանգումների մասին ապացույցներ ներկայացնել, որպեսզի օրենքի խախտումներով ձեռք բերված

խոստովանությունները չօգտագործվեն, սակայն դատավորները հաճախ չեն արձագանքում այդ հայտարարություններին, համարելով դրանք ոչ արժանահավատ կամ ուղղակիորեն հերքում են այդ հայտարարությունները և կայացնում են մեղադրական դատավճիռներ այն գործերով, որտեղ վկաները հնչեցրել են պնդումներ խոշտանգումների մասին: Բացառություն էր 2009թ. դեկտեմբերի Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի ընդունած որոշումը, որի համաձայն Սաշա Դավթյանի դուստրերի ցուցմունքները դատարանն համարեց անընդունելի՝ ոչ օրինական ճանապարհով և ճնշմամբ ձեռք բերված լինելու համար: Չնայած այս որոշմանը, հետագա քննություն կամ հետապնդում չիրականացվեց բռնաբարություն կատարած անձին հայտնաբերելու ուղղությամբ, ինչպես նաև որևէ քննություն չիրականացվեց ընտանիքի անդամներին ոստիկանների կողմից բռնության ենթարկելու հնչեցված մեղադրանքների վերաբերյալ (տես՝ Մաս 1. գ): Դատավորները նաև չեն բացառել անօրինական ձերբակալություններով ստացված ապացույցները:

Մարտի 8-ին հրապարակված դատավարությունների մոնիտորինգի մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի զեկույցում նշվում էր, որ գործնականում միշտ չէ որ հարգվել են ցուցմունք տալուն չհարկադրելու իրավունքը և անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույցները բացառելու պարտավորությունը: Պաշտպանության կողմի միջնորդություններն այդպիսի ապացույցները բացառելու վերաբերյալ մեծամասամբ անտեսվել կամ մերժվել են: Որոշ դեպքերում դատավորները հիմք են ընդունել մեղադրյալների նախքան դատաքննությունը կատարած հայտարարությունները, որոնք հակասել են դատարանում նրանց տված ցուցմունքներին՝ չնայած այն պնդումներին, որ նախքան դատաքննությունը կատարված հայտարարությունները կատարվել են ճնշման և ահաբեկման ներքո: Նույն կերպ, դատավորները հիմք են ընդունել վկաների հայտարարությունները՝ չնայած պնդումներին, որ դրանք ճնշման ներքո են ձեռք բերված: Այս թեմայի շուրջ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ուսումնասիրությունը, որը կատարվել էր օմբուդսմենի հետ համատեղ, եզրակացնում էր, որ նույնիսկ դատաքննության կողմերից մեկին խոշտանգումների ենթարկելու մասին օբյեկտիվ նշանների առկայության դեպքում, դատարանները հարցը չեն բարձրացրել, իսկ որոշ սակավաթիվ դեպքերում ապացույցներն ընդունվել են նույնիսկ այն բանից հետո, երբ պաշտոնապես ճանաչվել է, որ դրանք ձեռք են բերվել խոշտանգիչ գործողության արդյունքում:

Տեղական դիտորդները գտնում էին, որ դատավորները նախորդ տարիների համեմատ փոքրիշատե ավելի զգայուն են դարձել պաշտպանության կողմի իրավունքների նկատմամբ. այնուհանդերձ, դատարանները գրեթե բոլոր դեպքերում, բացառությամբ մի քանիսի, հակված են եղել նախապատվությունը տալ մեղադրող կողմին: Որպես ապացույց նրանք նշում էին դատարանների կողմից պաշտպանության կողմի միջնորդությունների մերժումն ու դատական լսումների արձանագրությունների անպատեհ խմբագրումը:

Քրեական գործերով վկաների շրջանում տարածված էր դատարանում հրաժարվել այն ցուցմունքներից, որ մինչ այդ տվել էին ոստիկանությունում: Սա կարող է արվել մասամբ այն պատճառով, որ վկաները վախենում են մեղադրյալի հաշվեհարդարից կամ էլ նախնական ցուցմունքները տրվել են ոստիկանության ճնշման ներքո, սակայն մեծամասամբ սա արվում է, որովհետև սովորույթ և պրակտիկա է ձևավորված հրաժարվել նման հայտարարություններից անձին հրապարակավ չմեղադրելու համար: Քանի որ ցուցմունքից հրաժարվելու այսպիսի դեպքեր քրեական գործերի հետ կապված հաճախ են դիտարկվում,

դատարանները սովորաբար մեղադրական վճիռ կայացնելիս հիմք են ընդունում վկայի նախնական ցուցմունքները:

Մեղադրող կողմից ներկայացրած փորձագիտական գնահատականներն արդյունավետ կերպով չեն վիճարկվել: Երբեմն պատճառն այն է եղել, որ դատարանները չեն կամեցել բավարարել լրացուցիչ փորձաքննություն անցկացնելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունները: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում նշվում էր, որ պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները կանոնավոր կերպով դատարանին միջնորդում են վկաներ հրավիրել, փորձաքննություն պատվիրել կամ թույլ տալ լրացուցիչ ապացույցներ ներկայացնել: Դատարանները հիմնականում դժկամությամբ են բավարարում նման միջնորդությունները և հաճախ մերժում են՝ առանց որևէ հիմնավորման, ինչը պահանջվում է օրենքով: Պաշտպանության կողմի փաստաբանները պնդում էին, որ նման վերաբերմունքը թույլ չէր տալիս ապահովել իրենց հաճախորդների պաշտպանությունը, հատկապես եթե վերջիններս դիտարկվում էին որպես կառավարության ընդդիմադիրներ:

Հունվարի 14-ին Սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական ճանաչվեց «դատարանի նկատմամբ անհարգալի վերաբերմունքի» մասին քրեական օրենսգրքի դրույթը, քանի որ այն քրեական պատասխանատվություն էր նախատեսում միայն վկաների, տուժողների, պաշտպանության կողմի փաստաբանների համար, սակայն ոչ դատախազների համար: Վճիռը կայացվեց օմբուդսմենի ներկայացրած դիմումի հիման վրա ի պատասխան Փաստաբանների պալատի խնդրանքի այն բանից հետո, երբ դատարանի հանդեպ անհարգալի վերաբերմունքի համար երկու քրեական գործ հարուցվեց չորս դատապաշտպանների դեմ: Դատապաշտպանները դուրս էին եկել դատարանի դահլիճից, որտեղ իրենց պաշտպանյալ ընդդիմության կողմնակից, Ազգային ժողովի պատգամավոր և գործարար Խաչատուր Սուքիասյանին վերաբերող գործով դատավարությունն էր ընթանում, ցույց տալու, որ դատը կարող է շարունակվել նաև առանց իրենց, քանի որ քրեական գործերի դատաքննությունը կրում էր ձևական բնույթ և վճիռը դատավորները որոշել էին մինչև դատը սկսելը: Այս և այլ փաստաբանները պնդում էին, որ սրանով իրենք հայտնվում են դժվարին իրադրության մեջ, երբ ներկա են դատավարությանը, բայց անկարող են պաշտպանել իրենց հաճախորդին: Սահմանադրական դատարանի վճռից հետո չորս փաստաբաններն արդարացվեցին:

Տարվա ընթացքում ընդունված երկու դատավճիռ կարծես թե փոքր-ինչ թեքում են հավասարակշռությունը դեպի մեղադրյալները: Մարտի 26-ին Վճռաբեկ դատարանը որոշեց, որ ոստիկանության՝ երկրում քննություն իրականացնող մարմնի կողմից որպես «վկա» որակված անձի քննիչներին տված ցուցմունքը չի կարող օգտագործվել այդ անձի դեմ քրեական գործում, քանի որ իրականում այդ անձը եղել է կասկածյալ, սակայն ոստիկանությունը որակել է նրան որպես վկա և կասկածյալին մերժվել է փաստաբան ունենալու իրավունքը: Դատարանի որոշումը հաջորդեց ՄԻԵԴ-ի մի վճռի այն մասին, որ անձի փաստացի կարգավիճակն է որոշում անձի իրավունքները, և որ ոստիկանի կողմից կարգավիճակի արհեստական սահմանումը չի կարող որոշել անձի իրական կարգավիճակն ու իրավունքները:

Ապրիլի 2-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց քրեական դատավարության օրենսգրքի 2007 թ. այն դրույթը, որը թույլ էր տալիս դատաքննություն իրականացնող դատավորներին կասեցնել դատաքննությունը և դիմել Գլխավոր դատախազությանը՝ վերանայելու մեղադրական արձանագրությունը, որպեսզի

ավելացնել նոր կամ ծանրացուցիչ հանգամանքներ: Սահմանադրական դատարանը գտավ, որ այս դրույթը խախտում է արդարացի դատաքննության ու անմեղության կանխավարկածի հիմնական սկզբունքները: Այս որոշումը, որ շատ դիտորդների կողմից ընկալվեց որպես զգալի քայլ, վերահաստատում էր, որ դատական համակարգը պետք է անկախ լինի մեղադրող կողմից, և որ այս կառույցները չեն կարող համակարգել իրենց ջանքերը՝ դատապարտում ապահովելու նպատակով:

Ինչպես և նախկինում դատարան ուղարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունն ավարտվում էր դատապարտումներով: Դիտորդները հայտնում էին, որ դա այդպես է, քանի որ շատ դատավորներ գտնում էին, որ իրենց գործը մեղադրող կողմի հետ աշխատելն է ու մեղադրական վճիռ կայացնելը: Ավելին, շատ դատավորներ վախենում էին հաշվեհարդարից, եթե արդարացման դատավճիռ կայացնեին իշխանությունների համար կարևոր զգայուն գործով: Չնայած այն հանգամանքին, որ թույլ գործերից շատերն ավարտվում են դատապարտմամբ, սակայն դատապարտումների բարձր ցուցանիշը նաև կարող է վերագրվել այն հանգամանքին, որ ոստիկանության քննիչները զտում են թույլ գործերն ու դրանք չեն ուղարկում դատարան: Ըստ դատական վիճակագրության տարվա ընթացքում կայացված 3307 դատավճիռներից միայն 31 են եղել արդարացման դատավճիռ (մասնակի և լիակատար արդարացման դատավճիռ 39 անձանց վերաբերյալ) և արդարացումները կազմել են մոտավորապես 0.9 տոկոս: Այնուհանդերձ, 2009թ. համեմատ արդարացումների թիվն ավելացել է:

2009թ. օմբուդսմենը ներկայացրեց արտահերթ հրապարակային զեկույց, որում նշում էր, որ արդար դատաքննության իրավունքի խախտումները նենգափոխում են դատարանի՝ իբրև արդարության անաչառ մարմնավորողի դերը՝ պահելով արդարադատության իրագործման հանդեպ հասարակության վստահությունը շատ ցածր մակարդակում:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Տարվա ընթացքում իշխանություններն ազատ արձակեցին չորս անձանց, ովքեր դատապարտվել էին 2008թ. նախագահական ընտրությունների ու հետընտրական անհանգստությունների հետ կապված: Այդ դեպքերի առնչությամբ դատապարտված ևս երկու անձ բանտից ազատ արձակվեցին նշանակված պատիժն ամբողջությամբ կրելուց հետո, իսկ մի քանիսը դեռ մնում էին անազատության մեջ: Մեծ մասը քաղաքական ընդդիմության կողմնակիցներ կամ ներկայացուցիչներ էին, ովքեր վիճարկել էին 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքները կամ մասնակցել հետընտրական ցույցերին: Ազատազրկված անձանց ձերբակալությունների ու դատավարությունների մեծ մասը կամ բոլորն առերևույթ կրել են տարբեր աստիճանի քաղաքական ազդեցություն: Ոմանք մեղադրվել են լայն սահմանում ունեցող քրեական մեղադրանքների հատկանիշներով՝ «պետական իշխանության յուրացում» կամ «զանգվածային անկարգությունների կազմակերպում», մինչդեռ մյուսների նկատմամբ հետապնդում է իրականացվել զենք պահելու մեղադրանքներով կամ ձերբակալման ժամանակ ցուցաբերած դիմադրության համար: Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում «պետական իշխանության յուրացման» մեղադրանքը հանվեց, սակայն մյուս մեղադրանքները մնացին: Իշխանությունները շարունակում էին ժխտել երկրում քաղբանտարկյալների առկայությունը:

Հունվարի 29-ին և հուլիսի 29-ին համապատասխանաբար երկու և երկուսուկես տարվա ազատազրկման պատիժ կրելուց հետո ազատ արձակվեցին Մկրտիչ Սափեյանը և նրա եղբայր Ժորա Սափեյանը: Նրանք դատապարտվել էին 2008թ. ընտրարշավի ընթացքում Թալին քաղաքում ընդդիմության նախագահական թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը ընդհատող իշխանությունների մի կողմնակցի ծեծի ենթարկելու համար: Շատ դիտորդների գնահատմամբ նրանց դատավարությունը չի ընթացել պատշաճ իրավական ընթացակարգերի ապահովմամբ և ունեցել է քաղաքական շարժառիթներ:

Ընդդիմադիր գործիչներ Աշոտ Մանուկյանը, Մուշեղ Սաղաթելյանը, Գաբրիել Գաբրիելյանը և Ֆելիքս Գևորգյանը, ովքեր բանտարկվել էին 2008թ. դեպքերից հետո, համապատասխանաբար հոկտեմբերի 29-ին, նոյեմբերի 24-ին, դեկտեմբերի 6-ին և դեկտեմբերի 9-ին վաղաժամկետ ազատ արձակվեցին շատերի գնահատմամբ քաղաքական շարժառիթներով պայմանավորված պատիժների կեսը կրելուց հետո:

Փետրվարի 10-ին իշխանությունները մասնավոր կլինիկայում սրտի երկրորդ վիրահատություն անցնելուց հետո դատապարտյալների հիվանդանոց վերադարձրեցին Սասուն Միքայելյանին: Ազգային ժողովի նախկին պատգամավոր Սասուն Միքայելյանը 2008թ. նախագահական ընտրություններում պաշտպանում էր ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին և 2008թ. դեպքերից հետո շատերի գնահատմամբ քաղաքական շարժառիթներ ունեցող դատաքննությամբ դատապարտվեց ութ տարվա ազատազրկման անօրինական զենք պահելու և զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար: Կլինիկայի բժիշկ Արևիկ Ստեփանյանը գտնում էր, որ Սասուն Միքայելյանին, ով սրտի հետ կապված խնդիրներից զատ ուներ նաև պատերազմական վերքեր, անհրաժեշտ էին ֆիզիկական վարժություններ և հատուկ սննդակարգ և սրտաբանի մշտական հսկողություն: Արդարադատության նախարարությունը հավաստիացնում էր, որ դատապարտյալների հիվանդանոցում Միքայելյանը կստանա անհրաժեշտ բուժումը, ինչի հետ կապված խիստ կասկածներ ուներ նրա ընտանիքը: Տարվա ընթացքում հաղորդումներ եղան Միքայելյանի առողջական վիճակի վատթարացման վերաբերյալ և մեկից ավել անգամներ անհապաղ բուժօգնության համար նա տեղափոխվեց քաղաքացիական հիվանդանոց: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) պնդում էր, որ Միքայելյանի նկատմամբ կարող էր և պետք է կիրառվեր վաղաժամկետ ազատ արձակում համաձայն քրեական դատավարության օրենսգրքի՝ պայմանավորված առողջական վիճակով: Այնուամենայնիվ, տարեվերջի դրությամբ նա շարունակում էր գտնվել դատապարտյալների հիվանդանոցում:

Հունվարի 19-ին ակնառու ընդդիմադիր գործիչ և «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանը 2008թ. դեպքերի հետ կապված «զանգվածային անկարգությունների» կազմակերպման համար շատ դիտորդների գնահատմամբ քաղաքական շարժառիթներ ունեցող դատաքննությամբ դատապարտվեց յոթ տարվա ազատազրկման: Միաժամանակ, 2007թ. ընդդիմության մեկ այլ նախընտրական ցույցի ժամանակ ոստիկանին հարվածելու դրվագով Փաշինյանն արդարացվեց: Վերաքննիչ դատարանը մարտի 9-ին անփոփոխ թողեց վճիռը, սակայն որոշեց, որ նրա նկատմամբ կիրառելի է 2009թ. հունիսի համաներումը և նրա պատիժը կիսով չափ կրճատվեց:

Փետրվարի 12-ին ոստիկանության կողմից ձերբակալվեց Սարիբեկ Սուքիասյանը և 72 ժամ պահվեց՝ իր եղբայր Խաչատուր Սուքիասյանին պատկանող ընկերություններից մեկի սեփականության պայմանները վերաբանակցելու նպատակով գործարար Գոռ Դավթյանին ենթադրաբար որպես պատանդ իր գրասենյակում պահելու համար: Խաչատուր

Սուքիասյանի ընտանիքն ու ընկերությունները շարունակում էին թիրախ հանդիսանալ կառավարության համար՝ ակնհայտորեն ի պատասխան այն բանի, որ 2008թ. նախագահական ընտրություններում նա պաշտպանեց Տեր-Պետրոսյանի թեկնածությունը: Սարիբեկի դեմ մեղադրանքները հունիսի 14-ին հանվեցին՝ ապացույցների բացակայության հիմքով: Ըստ պաշտոնական տեղեկատվության հոկտեմբերի 19-ին ՀՔԾ-ն կարճեց Սուքիասյանի դեմ քրեական գործը, քանի որ չապացուցվեց նրա մասնակցությունը ենթադրյալ քրեական հանցանքին:

Մարդու իրավունքների տարածաշրջանային դատարանների որոշումներ

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները կարող են դիմել ՄԻԵԴ-ին՝ բավարարելու իրենց գանգատները կապված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ: ՄԻԵԴ-ը հայտարարել է, որ ընդդեմ պետության կայացրել է հինգ վճիռ, իսկ տասնյակ գանգատներ տարեվերջի դրությամբ դատարանի կողմից դեռ լուծված չէին: 2009թ. ՄԻԵԴ-ը վճիռ էր կայացել պետության ներգրավմամբ ինը գործերով, որոնցից ութում կար կոնվենցիայի առնվազն մեկ խախտում պետության կողմից:

Կառավարությունն ընդհանուր առմամբ արձագանքում էր ՄԻԵԴ-ի որոշումներով սահմանված կոնկրետ դրամական փոխհատուցումների պահանջներին: Այնուհանդերձ, այն էականորեն ավելի պասիվ էր մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտումների և ՄԻԵԴ-ի համապատասխան որոշումներին հանգեցրած գործերով դատական որոշումների վերանայման հարցում, և նմանատիպ խախտումները կանխելու նպատակով շտկող օրենսդրական ու վարչական փոփոխություններ կատարելու հարցում: Օրինակ՝ օգոստոսի 13-ին Վճռաբեկ դատարանը կրկին մերժեց հեռարձակման լիցենզիայի տրամադրումը Մելտեքս ՍՊԸ-ին՝ Ա1+ հեռարձակող ընկերության մայր ընկերությանը, չնայած ՄԻԵԴ-ի որոշմանը, որ կառավարությունը 2002թ. խախտել էր խոսքի/արտահայտման ազատության մասին կոնվենցիայի դրույթները՝ չտրամադրելով գրավոր հիմնավորում լիցենզիայի տրամադրումը մերժելու վերաբերյալ: Այնուհանդերձ, կառավարությունը ՄԻԵԴ-ի որոշման համաձայն Մելտեքս ՍՊԸ-ին վճարեց 30 000 եվրո (42 900 ԱՄՆ դոլար):

2007թ. ՄԻԵԴ-ը Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով նշեց, որ քրեական գործի դատաքննության ժամանակ ոտնահարվել է Հարությունյանի արդար դատաքննության իրավունքը, երբ խոշտանգումների միջոցով ձեռք բերված վկայությունն օգտագործվել է որպես այս գործի մեղքի ապացույց: 2009թ. ապրիլին ընդունված որոշմամբ Վճռաբեկ դատարանը բեկանեց Հարությունյանի դեմ ընդունված նախորդ վճիռները և գործը վերադարձրեց Սյունիքի ընդհանուր իրավասության դատարան վերաքննության: Մարտի 22-ին Հարությունյանը կրկին դատապարտվեց և ազատազրկվեց 10 տարով, որը ճիշտ այնքան էր կազմում, ինչքան նա արդեն անցկացրել էր բանտում: Պաշտպանության կողմը բողոքարկեց վճիռը Վերաքննիչ դատարանում, որտեղ տարեվերջի դրությամբ գործը ընթացքի մեջ էր: Հարությունյանի դատապաշտպանները հարց էին բարձրացնում ՄԻԵԴ-ի որոշման պատշաճ կիրառման վերաբերյալ: ՄԻԵԴ-ի վճիռն իրավականորեն պարտավորեցնում էր երկրին դադարեցնել խախտումը և վերացնել դրա հետևանքները, որպեսզի հնարավորինս առավելագույն ձևով ապահովվի Հարությունյանի այն վիճակի վերականգնումը, որ եղել է նախքան դատավճիռը: Պաշտպանության կողմը վիճարկեց կառավարության գործողությունը՝ նշելով, որ վերստին դատապարտելով Հարությունյանին կառավարությունը

չի հետևել հատուցման/ռեստիտուցիայի սկզբունքին: Պաշտպանության կողմը նաև պնդում էր, որ երկրորդ դատավարության ժամանակ օգտագործված ապացույցը բավարար չէր նշանակված պատժի համար:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Քաղաքացիները կարող են դիմել դատարաններ մարդու իրավունքների ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով, այնուհանդերձ, դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռումպացված կառույց ու քաղաքացիական գործերի հնարավոր հայցվորները հաճախ հայց հարուցելուց առաջ քննության էին առնում այն հանգամանքը, թե ով ունի ավելի շատ ռեսուրսներ դատավորների վրա ներազդելու համար՝ իրենք, թե պատասխանողը: Քաղաքացիները կարող են նաև դիմումներ ու բողոքները ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ինչպես նաև դիմել Սահմանադրական դատարան՝ վիճարկելու օրենսդրության սահմանադրականությունը:

Տարվա ընթացքում առաջընթաց չի եղել Երևանում հասարակական շահից ելնելով գույքի օտարման գործերի հետ կապված, չնայած 2006թ. Սահմանադրական դատարանը որոշում էր կայացրել, որ կառավարության 2002թ. որոշումը, որով քանդվել էին տները, հակասում էր Սահմանադրությանը: Հունիսին ՄԻԵԴ-ը վճիռ կայացրեց Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ որոշելով, որ գույքի օտարման ժամանակ խախտվել են երկու քաղաքացիների սեփականության իրավունքները: Տարեվերջի դրությամբ սակայն ՄԻԵԴ-ը չէր ընդունել փոխհատուցման չափի վերաբերյալ ուղեկցող որոշումը:

զ) Կամայական միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցման գաղտնիությունը, սակայն գործնականում իշխանությունները խախտել են այս իրավունքները:

Ըստ օրենքի հեռախոսային խոսակցությունները լսելու կամ նամակագրությանը հետևելու թույլտվություն տալու իրավասություն ունեն դատավորները՝ հանցավոր գործունեության մասին հիմնավոր փաստարկների հիման վրա, այնուհանդերձ, տարվա ընթացքում դատավորները կամայականորեն այդպիսի թույլտվություն տվել են, ինչպես նաև տեղի են ունեցել խուզարկություններ առանց կարգադրագրերի: Սարիբեկ Սուքիասյանի փաստաբանների փետրվարի 23-ի հայտարարության համաձայն ոստիկանությունը փետրվարի 13-ին անօրինական խուզարկություն է անցկացրել Սուքիասյան ընտանիքին պատկանող ՍԻԼ Կոնցեռն ՓԲԸ-ի գրասենյակում: Ըստ փաստաբանների չնայած խուզարկության կարգադրագիրը տրված էր այլ հասցեի համար, քննիչը գրավոր փոխել է հասցեն, որպեսզի խուզարկությունը կատարվի: Հայտարարությամբ նաև նշվում էր, որ ոստիկանությունն ապօրինաբար առգրավել է գրասենյակում գտնվող համակարգիչը, որտեղ կային Սարիբեկ Սուքիասյանի գործի վերաբերյալ փաստաբանական գաղտնիք հանդիսացող կարևոր պաշտպանության ենթակա նյութեր:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի և մամուլի ազատություն

Սահմանադրությամբ ամրագրվում է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն գործնականում կառավարությունը միշտ չէ, որ հարգել է այս իրավունքները: Տարվա ընթացքում շարունակվել են գրանցվել բռնության և ահաբեկման դեպքեր մամուլի դեմ ու ինքնագրաքննության դեպքեր մամուլում: Լրատվամիջոցները, հատկապես՝ հեռուստատեսությունը, շարունակում էին չապահովել կարծիքների բազմազանություն ու օբյեկտիվ լրատվություն: Տեղական և միջազգային դիտորդները մտահոգություն էին հայտնում, որ թվային հեռարձակմանն անցում կատարելու հետ կապված տարվա ընթացքում լրատվամիջոցների մասին օրենսդրության մեջ կատարված զգալի փոփոխությունները կարող են նվազեցնել բազմակարծությունը լրատվամիջոցներում և կրճատել քաղաքացիների համար բազմազան տեղեկատվության ու կարծիքների հասանելիությունը:

Անհատներն ընդհանուր առմամբ կարող էին հրապարակավ ու մասնավոր կերպով քննադատել կառավարությանը՝ առանց հաշվեհարդարի վախի, սակայն լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռարձակողները վախենում էին հաշվեհարդարից կառավարությանը քննադատող լրատվություն ներկայացնելու դեպքում: Հնարավոր հաշվեհարդարը կարող էր ներառել հեռարձակման լիցենզիայից զրկվելը կամ ընտրովի հարկային ստուգումները, ինչպես նաև եկամուտների կորուստը, երբ գովազդատուներն իմանան, որ լրատվամիջոցը չի վայելում կառավարության բարեհաճությունը: Հաշվեհարդարի այս վախը հանգեցրել է ինքնագրաքննության բարձր աստիճանի:

Լրագրերի գերակշիռ մասը մասնավոր են, բացառությամբ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ու դրա ռուսալեզու «Ռեսպուբլիկա Արմենիի» տարբերակի, որոնք հրատարակվում են պետական ֆինանսավորմամբ: Տպագիր լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ապահովել են տարբեր տեսակետների ներկայացումն առանց սահմանափակումների, սակայն շարունակել են լինել տնտեսական և քաղաքական շահեր ներկայացնող խմբերի ու անհատների ազդեցության ներքո:

Ավելի մեծ բազմակարծություն էր տիրում առցանց հրապարակումներում, չնայած առցանց ընթերցողների թիվը սահմանափակ էր, հատկապես՝ Երևանից դուրս:

Լրագրերի շրջանառությունը շարունակում էր մնալ շատ սահմանափակ: Նույնը կարելի է ասել նաև 20 ռադիոկայանների լսարանի մասին, որոնցից երեքը հանրային ռադիոկայաններ են, իսկ երկուսը հեռարձակվում են արտերկրից: Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա ընթացքում գործել են 82 հեռուստաընկերություն, որոնցից երեքը հանրային հեռուստաընկերություն էին, իսկ չորսը հեռարձակվում էին արտերկրից: Բացի երեք հանրային հեռուստաընկերություններից մնացած բոլոր հեռուստակայանները մասնավոր էին, իսկ երկրում գործող հեռուստաընկերությունների կեսից ավելին մարզերում տեղակայված փոքր տեղական հեռարձակողներն էին: Միայն պետական ֆինանսավորմամբ գործող հանրային (Հ1) հեռուստատեսությունն է, որի հաղորդումները սփռվում են երկրի ողջ տարածքով, չնայած կան որոշ հեռուստաընկերություններ, որոնք սփռում են իրականացնում նաև իրենց մարզերից դուրս: Հեռուստակայանների մեծ մասի սեփականատերերն են կառավարամետ քաղաքական գործիչները կամ լավ կապեր ունեցող գործարարները, մի գործոն, որ հուշում է այս ընկերություններում աշխատող լրագրողներին դիմել

ինքնագրաքննության: Խոշոր հեռարձակող լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ներկայացրել են կառավարամետ դիրքորոշումներ և խուսափել են խմբագրական մեկնաբանություններ ու կառավարությանը քննադատող նյութեր ներկայացնելուց:

Տարվա ընթացքում եղել են հաղորդումներ լրագրողների վրա ֆիզիկական հարձակումների մասին՝ կապված նրանց լրագրողական գործունեության հետ: Մեղավորներից շատերը մնացել են անհայտ: Իրավապահ կառույցները ևս ժամանակ առա ժամանակ տարվա ընթացքում ոտնձգություններ են թույլ տվել լրագրողների նկատմամբ: Նախորդ տարվա ընթացքում լրագրողների վրա գործած հարձակումների գծով քննությունների հետ կապված նոր զարգացումներ չեն եղել:

Կառավարության հարաբերությունները լրագրողների հետ, հատկապես անկախ կամ որպես հակահիշխանական ընկալվող լրագրողների հետ եղել է ոչ կառուցողական: Չեն եղել հաղորդումներ, որ իշխանությունները տարվա ընթացքում որևէ հատուկ միջոցներ են ձեռնարկել սպառնալիքներ ստացած կամ խոցելի լրագրողներին պաշտպանելու կամ նրանց ահաբեկելու փորձ անողներին պատժելու ուղղությամբ:

Փետրվարի 24-ին ՀՔԾ գործուղված ոստիկան Գագիկ Մարգարյանն ըստ հաղորդումների հարձակվել էր ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի վրա, երբ վերջինս մամուլի ասուլիսը լուսաբանելու նպատակով պատրաստվում էր մուտք գործել Գլխավոր դատախազություն: Երբ Շամշյանը հրաժարվեց դադարեցնել շենք մուտք գործելիս Մարգարյանին լուսանկարելը, Մարգարյանն ըստ հաղորդման հայհոյեց նրան և պայուսակով հարվածեց նրա գլխին: Մամուլի ասուլիսի ընթացքում Գլխավոր դատախազը հորդորեց ֆոտոլրագրողին բողոք ներկայացնել և իրավապահներին տրամադրել իր կադրերը: Փետրվարի 25-ին հնարավոր բռնություն գործադրելու ու լրագրողի մասնագիտական գործունությանը խոչընդոտելու մեղադրանքով գործ հարուցվեց Մարգարյանի դեմ, իսկ նույն օրը տարածած մամուլի հաղորդագրության մեջ Գլխավոր դատախազությունը «դատապարտեց բռնության ցանկացած դրսևորում անկախ այն հանգամանքից, թե ում դեմ է ուղղված» և իր կայքում տեղադրեց միջադեպը ներկայացնող տեսանյութը, որ տեսագրվել էր Գլխավոր դատախազության անվտանգության տեսախցիկներով: Տեսանյութում երևում էր Մարգարյանի ու Շամշյանի միջև քաշքշուկ, որտեղ նրանք հիմնականում հրում են միմյանց, երևում էր նաև, որ Մարգարյանը պայուսակով հարվածում է Շամշյանի գլխին: Միջադեպից հետո Շամշյանն այցելել էր հիվանդանոց, որտեղ հարվածի հետևանքով նրա մոտ նկատվել էր ականջաթաղանթի վնասում, այնուհանդերձ, քննության նպատակով մարտի 1-ին անցկացված դատաբժշկական փորձաքննությունը եզրակացրել էր, որ նման վնասվածք հնարավոր չէր ստանալ այդ միջադեպի արդյունքում:

Ապրիլի 9-ին Մարգարյանի դեմ գործը կարճվեց «հանցակազմի բացակայության» հիմքով, քանի որ ըստ պաշտոնական տեղեկատվության վկաների մեծամասնությունն ասել էր, որ միջադեպը հրահրել էր Շամշյանը:

Հետաքննող լրագրողական գործունեությանը հաճախ բացասաբար են վերաբերվում, հատկապես նրանք, ովքեր դառնում են այդ հետաքննության առարկա: Հետաքննող լրագրողների հանդեպ շարունակվել են ֆիզիկական բռնությունները, ինչպես նաև այլ քայլերը՝ ուղղված ետ պահելու լրագրողներին խնդիրները հնչեցնելուց: Ապրիլի 2-ին «Ազգ» օրաթերթը հաղորդեց, որ հարձակում է եղել թերթի լրագրողի վրա շինարարության աշխատողի կողմից, երբ լրագրողը փորձել է լուսանկարել Երևան քաղաքի կենտրոնում

գտնվող շինհրապարակը: Շինարարության աշխատողն ըստ հաղորդման հարվածել է լրագրողի գլխին և ուսերին ու փորձել խլել ֆոտոխցիկն ու պայուսակը: Մոտակայքում գտնվող ուսանողներն օգնել են լրագրողին ազատվել նրա ձեռքից: Ըստ հաղորդման շինարարության աշխատողը սպառնացել է լրագրողին՝ ասելով «քեզ հաշված ժամեր են մնացել»: Լրագրողը որոշեց բողոք չներկայացնել ու չբացահայտել իր անձը:

Մայիսի 31-ին ընդդիմության փոքր հավաքի ժամանակ ոստիկանությունը բերման ենթարկեց ընդդիմադիր «Հայկական ժամանակ» և «Հայք» թերթերի լրագրողներ Սուսաննա Պողոսյանին և Լիլիթ Թադևոսյանին, երբ վերջիններս իրականացնում էին իրենց լրագրողական գործունեությունը: Նույն օրն ավելի ուշ նրանք ազատ արձակվեցին:

Նույն օրն ընդդիմադիր «Հայկական ժամանակ» թերթի մեկ այլ լրագրող՝ Անի Գևորգյանը ձերբակալվեց, երբ նկարահանում էր Ազատության հրապարակի մոտ ոստիկանության ու ընդդիմության կողմնակիցների առճակատումը: Անի Գևորգյանին առաջադրվեց մեղադրանք ոստիկանի հանդեպ բռնություն գործադրելու համար: Հունիսի 3-ին դատարանը նրան ազատ արձակեց՝ երկրից չբացակայելու պայմանով: Նոյեմբերի 29-ին Գևորգյանի դեմ հարուցված քրեական գործը կարճվեց:

Սեպտեմբերի 7-ին Շիրակի մարզում մշակութային կենտրոնի բացման արարողության ժամանակ վարչապետ Սարգսյանին ուղեկցող խմբի անդամներն ըստ հաղորդման խոչընդոտել են անկախ ԳԱԼԱ հեռուստաընկերության լրագրողական գործունեության իրականացմանը և կոտրել են ընկերությանը պատկանող խոսափողը: Սեպտեմբերի 7-ին ներկայացված հայտարարության մեջ ԳԱԼԱ-ն միջադեպը որակում էր որպես լրագրողական գործունեության խոչընդոտում: Հայտարարության մեջ նաև նշվում էր, որ միջադեպից հետո վարչապետի մամուլի ծառայության աշխատակիցը բանավոր ներողություն է խնդրել ԳԱԼԱ-ի լրագրողից: Այնուհանդերձ, նույն օրը վարչապետի օգնականներից մեկը հերքեց ԳԱԼԱ-ի պնդումները և հայտնեց, որ վարչապետի թիկնապահներից մեկը պատահաբար կոտրել է խոսափողի հենակալը, և ներկա մյուս լրագրողները կարող են փաստել, որ դա եղել է պատահականություն: Վարչապետի օգնականը նաև հայտարարեց, որ սարքավորումների վնասի համար ԳԱԼԱ-ն կստանա վնասի փոխհատուցում, սակայն տարեվերջի դրությամբ դեռ այդպիսի փոխհատուցում չէր տրամադրվել:

Տարեվերջի դրությամբ չկար որևէ նշան առ այն, որ ոստիկանությունը հետաքննել է 2009թ. ապրիլին լրագրող Դավիթ Ջալալյանի հանդեպ ոստիկանության թույլ տված հարձակման մասին հնչեցված մեղադրանքները: Ըստ հաղորդումների նախքան 2009թ. մայիսի Երևան քաղաքի ավագանու ընտրությունները, երբ Ջալալյանը լուսաբանում էր քաղաքի կենտրոնում անցկացվող ընդդիմության հավաքը, նրա վրա հարձակում էր եղել ոստիկանների կողմից: Հարձակման մասին նախնական հաղորդումներից հետո, որոնց հետ միասին ներկայացվում էին Ջալալյանի վնասվածքների լուսանկարները, հաղորդում եղավ այն մասին, որ Ջալալյանը ցուցմունք է տվել ոստիկանությունում, որ իրեն չեն ծեծել, այլ ոստիկանները հրել են իրեն և ինքն ընկել է մեջքի վրա: Լրատվական հաղորդագրություններում կասկածներ էին հնչում, որ Ջալալյանը հերքում է տվել այն բանից հետո, երբ երկու ոստիկաններ եղել են նրա տանը և սպառնացել նրան:

Տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր գտնվում 2009թ. ապրիլին փաստաբան և երկու անկախ առցանց լրատվամիջոցների խմբագիր Արգիշտի Կիվիրյանի դեմ սպանության

փորձի վերաբերյալ ԱԱԾ քննությունը: Երեք անհայտ անձինք հարձակվել էին նրա վրա փայտե մահակներով և փորձել կրակել նրա վրա իր շենքի մուտքի մոտ, երբ նա աշխատանքից տուն էր վերադառնում վաղ առավոտյան: Կիվիրյանը ծանր վիճակում՝ գլխի և մարմնի ծանր վնասվածքներով և կտրվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց և ընդունվել վերակենդանացման բաժին: Ազգային անվտանգության ծառայությունը 2009թ. հուլիսին ձերբակալեց երկու կասկածյալների՝ Գուրգեն Կիլիկյանին և Վլադիկ Մերաբյանին և նրանց ներկայացրեց սպանության փորձ կատարելու մեղադրանք, սակայն մարտի 8-ին նրանք ազատ էին արձակվել, իսկ գործի քննությունը շարունակվում էր:

Զարգացումներ չեն գրանցվել 2009թ. մայիսին «Շանթ» մասնավոր հեռուստաընկերության մեկնաբան և թոք շոու վարող Նվեր Մնացականյանի վրա գործած հարձակման քննության հետ կապված: Անհայտ անձինք հարձակում էին գործել Նվեր Մնացականյանի վրա և նրան ծեծի ենթարկել, երբ նա աշխատանքից տուն էր վերադառանում: Նա ստացել էր վնասվածքներ գլխին, ոտքին ու ձեռքին և հիվանդանոցային բուժման կարիք էր եղել: 2009թ. սեպտեմբերին ոստիկանությունը կարճել էր գործը, քանի որ հանցագործները չէին բացահայտվել:

Զարգացումներ չեն գրանցվել 2009թ. մայիսին Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ընթացքում լրագրողների դեմ գործած հարձակումների քննության հետ կապված: Ընտրության օրը լրագրողների դեմ կատարվող բռնություններն ու ոտնձգությունները հաճախ տեղի են ունեցել ոստիկանների և ընտրական պաշտոնյաների ներկայությամբ, որոնք չեն միջամտել դրանք կանխելու կամ դադարեցնելու համար:

Տարվա ընթացքում որևէ առաջընթաց չի գրանցվել 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների ժամանակ լրագրողների ահաբեկման, նրանց հանդեպ բռնությունների ու նրանց գույքին հասցված վնասի բազմաթիվ դեպքերին լուծում տալու առումով: Նմանապես, ոչ մի առաջընթաց չի եղել 2008թ. հետընտրական ցույցերի ընթացքում լրագրողների նկատմամբ լայն տարածում ստացած հետապնդումների ու ահաբեկումների բազմաթիվ դեպքերի մասով: Այս միջադեպերի հետ կապված կասկածյալներ չեն բացահայտվել և չի իրականացվել քրեական հետապնդում, բացառությամբ մեկ դեպքի, երբ ընտրատեղամասի նախագահը տուգանվել է տեղամասում դիտորդների և մեկ լրագրողի իրավունքները սահմանափակելու համար:

Ոստիկանությունն ըստ հաղորդումների շարունակում էր կոռուպցիոն բացահայտումներով զբաղվող հետաքննող լրագրող Էդիկ Բաղդասարյանի վրա 2008թ. բռնի հարձակում գործած երեք անձանցից երկուսին որոնելու աշխատանքները: 2009թ. մեկ հոգի՝ Կարեն Հարությունյանը դատապարտվեց 5 տարվա ազատազրկման հարձակման մեջ իր ունեցած դերակատարման համար: Ոստիկանությունը մյուս երկու մեղավորներին չկարողացավ ձերբակալել և 2009թ. հոկտեմբերի քննությունը կասեցվեց:

Որևէ առաջընթաց չի եղել Գյումրում գտնվող լրագրողների «Ասպարեզ» ակումբի դեմ 2008թ. կատարված հարձակումների քննության մասով:

Տարվա ընթացքում Գյումրու ԳԱԼԱ հեռուստաընկերությունը շարունակում էր գտնվել իրավական վեճերի մեջ և ենթարկվել իշխանությունների ճնշումներին, որը հանգեցրեց այն փաստին, որ գովազդատուների մեծ մասը հրաժարվեց գովազդ պատվիրելուց: Ապրիլի 6-ին Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) հրաժարվեց ԳԱԼԱ-ի կողմից ներմուծվող սարքավորումները մաքսազերծել՝ պնդելով, որ հեռարձակողն ունի 822 200 դրամ (մոտ 2100

ԱՄՆ դոլար) պարտք՝ որպես 2007-08թթ. չվճարված հարկերի դիմաց հաշվարկված տույժ: ԳԱԼԱ-ն պնդում էր, որ չկատարված հարկային պարտավորություններ չունի, սակայն սարքավորումները մաքսազերծվեցին միայն այն բանից հետո, երբ ՊԵԿ-ն ընկերությունից բռնագանձեց 822200 դրամը (2100 ԱՄՆ դոլարը): Մայիսին ԳԱԼԱ-ի գործադիր տնօրեն Կարինե Հարությունյանը հայտարարեց, որ գովազդատուներն իրենց պատվերներն հանում են իշխանությունների ճնշման ներքո: Հեռուստաընկերության միակ գովազդատուն մնացել էր «Օրանժ» ընկերությունը՝ բջջային կապի ֆրանսիական օպերատորը: Հեռուստաընկերության համար դժվարությունները սկիզբ առան 2007թ. վերջին, երբ հեռուստաընկերության կողմից հեռարձակվեց նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը՝ նախքան 2008թ. նախագահական ընտրություններում նրա թեկնածությունն առաջադրելու մասին հայտարարելը: Ելույթի հեռարձակմանն հաջորդեցին հարկային խիստ ստուգումներ, որոնց արդյունքում 2008թ. որոշվեց, որ ընկերությունից գանձման է ենթակա մոտ 26 միլիոն ՀՀ դրամ (85000 ԱՄՆ դոլար)՝ որպես նախկինում չկատարված հարկային պարտավորությունների, հաշվարկված տույժերի ու ուշացված վճարումների հանրագումար:

Դեկտեմբերի 19-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) 13-րդ անգամ մերժեց 2002թ. եթերից դուրս մղված Ա1+ անկախ հեռուստաընկերության հաճախականություն ստանալու հայտը: Ըստ ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանի Ա1+-ը վերջին մրցույթում պարտվեց մեկ այլ ընկերության և հեռարձակման լիցենզիա չստացավ իր հայտում ֆինանսական աջակցության մասին կեղծ նամակներ ներկայացնելու պատճառով: Ըստ Ա1+-ի իրավաբանների ՀՌԱՀ-ը նոր լիցենզիայի համար մրցույթի անցկացման ժամանակ թույլ է տվել ընթացակարգային խախտումներ. նրանք պնդում էին, որ ՀՌԱՀ-ը պարտավոր էր ետ վերադարձնել հայտը, պահանջել պարզաբանումներ կամ Ա1+-ին ամբողջությամբ դուրս հանել մրցույթից, եթե կային մտայնություններ հայտի բովանդակության առումով: Ա1+-ի ներկայացուցիչները նաև պնդում էին, որ նույնիսկ առանց խնդրահարույց երաշխիքային փաստաթղթերի, լրատվամիջոցն ուներ բավարար ֆինանսական միջոցներ իրականացնելու առաջարկվող բիզնես պլանը: Դեկտեմբերի 20-ին Ա1+-ը հայտարարեց, որ բողոք է ներկայացրել վարչական դատարան, որպեսզի ՀՌԱՀ-ին պարտադրվի իրենց ներկայացնել իրենց մրցակից և հաղթող հեռուստաընկերության՝ Արմնյուզի մրցութային հայտի պատճեն: Մրցույթից անմիջապես հետո ՀՌԱՀ-ը հրաժարվել էր Ա1+-ին տրամադրել այդ փաստաթղթերը՝ նշելով, որ փաստաթղթերն անհրաժեշտ են իրենց աշխատանքի համար և կկարողանան տրամադրել փաստաթղթերը միայն 2011թ. հունվարի 20-ից հետո: Ա1+-ը հայտարարեց, որ դեկտեմբերի 16-ին ՀՌԱՀ-ի անցկացրած մրցույթի տարբեր հարցերի շուրջ մտադիր են դատարան այլ բողոքներ ներկայացնել. այնուհանդերձ, տարեվերջի դրությամբ այդպիսի հայցեր չէին ներկայացվել:

2008թ. հունիսին ՄԻԵԴ-ն ի պատասխան Ա1+-ի գանգատի վճիռ էր կայացրել, որ ՀՌԱՀ-ի կողմից լիցենզիայի տրամադրման բազմակի մերժումների վերաբերյալ գրավոր պարզաբանումներ տալուց հրաժարվելը հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խոսքի ազատության մասին հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ի որոշմամբ կառավարությունն ա1+-ի հեռուստաընկերության հիմնադիր «Մելտեքս» ՍՊԸ-ին վճարեց 30000 եվրո (մոտ 42900 ԱՄՆ դոլար): Սակայն Վճռաբեկ դատարանը մերժեց Ա1+-ի հայցն ավելի վաղ ընդունված որոշումները վերանայելու վերաբերյալ՝ ՄԻԵԴ որոշումն ի կատար ածելու համար, այն հիմնավորմամբ, որ ՄԻԵԴ-ի որոշումը բացահայտորեն նման բան չի պահանջում: Ապա «Մելտեքս» ՍՊԸ-ն բողոքարկեց այդ որոշումը Սահմանադրական

դատարանում, որն էլ փետրվարի 23-ին որոշում կայացրեց, որ քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքի այն դրույթը, որի վրա հիմնվել է Վճռաբեկ դատարանը, հակասահմանադրական է: Սահմանադրական դատարանը նաև նկատեց, որ Վճռաբեկ դատարանն այս հարցում պետք է արդեն առաջնորդվեր՝ գործի հետ կապ չունեցող այլ հարցով ավելի վաղ ընդունված վճռով: Այնուհանդերձ, օգոստոսի 13-ին Վճռաբեկ դատարանը կրկին մերժեց Մելտեքսի հաջորդ հայցը և վերահաստատեց իր նախկին որոշումն այն մասին, որ Ա1+-ին գործունեության լիցենզիա չտալու ՀՌԱՀ որոշումը մնում էր անփոփոխ:

Մայիսի 18-ին Ազգային ժողովն ընդունեց փոփոխություններ քաղաքացիական, քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում՝ ապաքրեականացնելով «զրպարտությունն» ու «վիրավորանքը»: Փոփոխությունները կատարվեցին ի պատասխան միջազգային հանրության խոսքի ազատության ավելի մեծ պաշտպանվածություն ապահովելու կոչերին: ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը նշեց, որ «երկիրը զգալի առաջընթաց քայլ է կատարել խոսքի ազատության պաշտպանության ուղղությամբ»: Լրատվամիջոցների շահերը պաշտպանող խմբերն այնուհանդերձ նշում էին, որ դրամական վնասի առավելագույն չափը տեղի պայմանների համար բարձր էր. նրանք զգուշացնում էին, որ, թեպետ իշխանությունները փոփոխությունները հիմնավորում էին ապաքրեականացմամբ, սակայն «սուտ մատնությունը», որի սահմանումը շատ նման է «զրպարտության» ու «վիրավորանքի» սահմանմանը, շարունակում էր համարվել քրեորեն պատժելի արարք և կարող էր օգտագործվել լրագրողների դեմ: Միաժամանակ, քրեական օրենսգրքում պահպանվում էր հոդված, որով քրեականացված էր դատավորներին, դատախազներին և այլ իրավապահ կառույցների ներկայացուցիչներին զրպարտելը: Տարեվերջի դրությամբ չեն եղել հաղորդումներ նոր դրույթների կիրառմամբ գործերի մասին:

Անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցում կատարելու հետ կապված լրացուցիչ փոփոխություններ կատարվեցին Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում, որոնք, չնայած հայտարարված նպատակին լայնորեն ընկալվում էին որպես հեռարձակող լրատվամիջոցների նկատմամբ կառավարության վերահսկողության հետագա մեծացման ու անկախ լրատվամիջոցների ձայները սահմանափակելու միջոց 2012-13թթ. համապետական ընտրաշրջաններից առաջ: Մայիսի 10-ին կառավարությունը հրապարակեց օրենքի փոփոխությունների նախագիծը, որոնք ըստ իրենց պնդումների անհրաժեշտ էին այս անցումը կարգավորող իրավական դաշտն ապահովելու համար: Ազգային ժողովն ամառային ընդմիջումից առաջ, շատ ժամանակ չունենալով քննարկումների համար, հունիսի 10-ին ընդունեց օրենքը, որը մեկ շաբաթ անց վավերացվեց նախագահ Սարգսյանի կողմից: Փոփոխությունները մշակողները հավաստիացնում էին, որ տեղական լրատվամիջոցների միությունների ու միջազգային կազմակերպությունների առաջարկները հաշվի կառնվեն Ազգային ժողովի կողմից նախագիծը լրամշակելիս, սակայն վերջնական տարբերակում դրանց մեծ մասն անտեսված էր: Այս փոփոխությունները հաջորդեցին 2008թ. նույն օրենքի վիճարկելի փոփոխություններին, որոնք նույնպես կատարվել էին շտապողականորեն՝ շատ քիչ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի դիրքորոշումները : Այդ փոփոխություններով սահմանվել էր հեռարձակման լիցենզիաների տրամադրման երկու տարվա ժամանակավոր դադարեցում՝ կրկին այն արդարացմամբ, որ սա կապված էր սպասվող թվային հեռարձակմանն անցում կատարելու հետ:

Թեպետ հունիսի փոփոխությունները չէին լուծում թվայնացման հետ կապված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են բջջային և համացանցային հեռարձակման, թվային փոխանցասարքերի և ցանցային օպերատորների կարգավորումը, սակայն պարունակում էին դրույթներ, որոնք շատերի գնահատմամբ տեխնիկապես անհրաժեշտ չէին թվայնացման համար, և ինչպես տեղական դիտորդներն են նկատում, զգալիորեն սահմանափակում էին լրատվամիջոցների ազատությունն ու բազմակարծությունը: Հունիսի փոփոխություններով Երևանում հեռարձակման իրավասություն ունեցող հեռարձակողների թիվը պակասում էր՝ 22-ից դառնալով 18, իսկ Հայաստանի 10 մարզերից յուրաքանչյուրում բազմաթիվ անալոգային հեռարձակող հեռուստաընկերություններին փոխարինում էր մեկ թվային հեռարձակող: Մարզային անալոգային հեռուստաընկերություններին թույլատրվում էր իրենց հեռարձակումները շարունակել մինչև 2015թ.:

Թվային հեռարձակման լիցենզիաների առերևույթ կամայական թիվն անհասկանալի էր տեղական դիտորդների համար՝ հաշվի առնելով թվային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները հեռուստաընկերությունների թվի մեծացման առումով: Կառավարությունը նշում էր, որ թվի նվազեցումը պայմանավորված էր հաճախականությունների լանդշաֆտի առանձնահատկություններով: Այնուամենայնիվ, չնայած տեղական լրատվամիջոցների ասոցիացիաների և միջազգային կազմակերպությունների զգալի ճնշումներին՝ կառավարությունը չհրապարակեց առկա հաճախականությունների մասին տեխնիկական աուդիտը, որն իբր հիմք էր հանդիսանում պլանավորած նվազեցման համար՝ անհնար դարձնելով սահմանափակումներում համոզվելու հնարավորությունը: ՀՌԱՀ-ի ներկայացուցիչները, այդ թվում նախագահ Գրիգոր Ամալյանը սկզբում խոստացել էին աուդիտի արդյունքները հրապարակել սեպտեմբերին, ապա հոկտեմբերին, սակայն դա տարեվերջի դրությամբ դեռ չէր արվել: Ավելին, տեղական «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ի հարցմանն ի պատասխան դեկտեմբերի 2-ին գրություն էր ստացվել Էկոնոմիկայի նախարարությունից, որ տեխնիկական աուդիտն իրականացրած օտարերկրյա ընկերությունը վերջնական աուդիտային հաշվետվությունը ներկայացրել է օգոստոսի 26-ին, մի ամսաթիվ, որը հունիսին օրենքում փոփոխություններ կատարելուց բավականին հետո էր: Էկոնոմիկայի նախարարությունը նաև նշում էր, որ կառավարությունը չի ընդունել հաշվետվությունը և հոկտեմբեի 27-ին այն հետ է ուղարկել վերանայման: Փոփոխություններով նաև ծրագրային թեմատիկ ուղղություններ էին պարտադրվում ապագա հեռարձակողներին, օրինակ՝ երիտասարդական և գիտակրթական, ժամանցային, երաժշտական, տեղական և միջազգային լրատվության ծրագրեր և արտերկրյա հեռուստաընկերությունների հաղորդումների վերահեռարձակում, ինչը սահմանափակում էր հեռուստաընկերությունների հեռարձակումների բովանդակությունը:

Հունիսի 15-ին ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը, ում գրասենյակը տրամադրել էր իրավական փորձաքննություն և առաջարկներ փոփոխությունների ողջ գործընթացում, հայտարարեց, որ խորհրդարանի կողմից ընդունված օրենքի վերջնական տարբերակը չի նպաստում թվային դարաշրջանի հեռարձակումներում բազմակարծության ապահովմանը: Չնայած Միյատովիչի գրասենյակը ընդունեց, որ ԵԱՀԿ-ի որոշ առաջարկներ ներառվել են, սակայն նշեց, որ թվային հեռարձակմանը սահուն անցում կատարելու համար խիստ կարևոր այլ առաջարկներ հաշվի չեն առնվել:

Հուլիսի 20-ին, երբ լրացավ նոր լիցենզիաների տրամադրման մասին 2008թ. սահմանված երկամյա դադարի ժամկետը, ՀՌԱՀ-ը մրցույթ հայտարարեց ազգային, երևանյան և մարզային հեռարձակողների 18 լիցենզիաների համար: Հուլիսի 27-ին այն երկրորդ մրցույթը հայտարարեց յոթ լրացուցիչ լիցենզիաների համար, որն ըստ հաղորդումների Հայաստանի մարզերի հեռարձակողների համար էր, չնայած հունիսին ընդունված փոփոխություններով սահմանվել էր, որ մրցույթ լինելու է միայն հեռարձակման 18 լիցենզիաների համար: Հոկտեմբերին ՀՌԱՀ-ը հայտարարեց, որ հուլիսին հայտարարված մրցույթին հեռարձակման 18 լիցենզիաների համար հայտ են ներկայացրել 20 լրատվամիջոց: Երկու հաճախականության համար հայտ էին ներկայացրել երկուական ընկերություն: Դեկտեմբերի 16-ին ՀՌԱՀ-ը ընտրեց հեռարձակման 18 լիցենզիաների հաղթողներին: Ա1+-ը պարտվեց Արմնյուզ երևանյան հեռուստաընկերությանը, որը լայնորեն ընկալվում է որպես կառավարամետ ընկերություն. երևանյան ԱԼՄ հեռուստաընկերությունը, որն ի տարբերություն Ա1+-ի ուներ գործող լիցենզիա և տարեվերջի դրությամբ դեռ գործում էր, պարտվեց երևանյան Երևան հեռուստաընկերությանը:

Դեկտեմբերի 23-ին ՀՌԱՀ-ը հայտարարեց մարզային յոթ մրցույթների հաղթողներին: Յոթից միայն երկուսում էին ներկայացվել մեկից ավել մրցութային հայտեր: Շիրակի մարզի ԳԱԼԱ հեռուստաընկերությունն այս մրցակցային հայտերից մեկում զիջեց այդ մարզում գործող մեկ այլ հեռուստաընկերության, որը լայնորեն դիտարկվում էր որպես կառավարամետ ընկերություն:

Հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքում հունիսին կատարած փոփոխությունների շուրջ հակասական գնահատականներից ելնելով՝ սեպտեմբերի 28-ին նախագահականից առաջարկ արվեց օմբուդսմենի ղեկավարությամբ ձևավորել աշխատանքային խումբ՝ օրենսդրությունը վերանայելու ու դրա ազդեցությունը թվայնացման վրա գնահատելու նպատակով: Օմբուդսմենն ընդունեց առաջարկը և տարբեր ՀԿ-ների ու պետական կառույցների ներկայացուցիչներից կազմված խումբը հոկտեմբերի 12-ին գումարեց իր անդրանիկ նիստը: Տարեվերջի դրությամբ խումբը դեռ չէր ներկայացնել հունիսին փոփոխված օրենքում լրացումներ կատարելու մասին առաջարկներ ու պարզ չէր, թե երբ կանի դա:

Սեպտեմբերի 16-ին Ազգային ժողովն ընդունեց փոփոխություններ, որոնք զգալիորեն ավելացրեցին հեռարձակողներից գանձվող գումարների չափը՝ թե հեռարձակման ամենամյա վճարները, թե հեռարձակման լիցենզիայի մրցույթի մասնակցության վճարը: Ըստ որոշ դիտորդների, նոր վճարաչափերը թեպետ հասկանալի էին՝ հաշվի առնելով նախկինում հեռարձակողների կողմից վճարվող էականորեն ցածր վճարները, սակայն դրանց կտրուկ ավելացումը կարող էր անհաղթահարելի բեռ դառնալ ավելի փոքր ընկերությունների համար, մասնավորապես՝ երկրի մարզերում գործող ընկերությունների համար:

Համացանցի ազատություն

Տարվա ընթացքում չեն եղել կառավարության կողմից համացանցի/ինտերնետի հասանելիության սահմանափակումներ կամ հաղորդումներ կառավարության կողմից էլեկտրոնային փոստի կամ համացանցային ճեպազրույցների գաղտնադիտման կասկածների մասին: Տարվա ընթացքում չեն եղել հաղորդումներ կառավարության կողմից անկախ և

ընդդիմադիր միտվածության կայքերի միտումնավոր արգելափակման վերաբերյալ, ինչպես արվել էր 2008թ.-ին՝ արտակարգ դրության պայմաններում:

Քաղաքներում կան բազմաթիվ ինտերնետ-սրճարաններ, չնայած ինտերնետ ծառայության մատուցման կապը խիստ դանդաղ է, ինչն էլ սահմանափակում է համացանցի գործածման արդյունավետությունը: Որոշ ինտերնետ–սրճարաններ գործել են նաև քաղաքային բնակավայրերից դուրս: Միջազգային հեռահաղորդակցության միության 2010թ. վիճակագրական տվյալներով համացանցից օգտվում են երկրի բնակիչների մոտ 7 տոկոսը:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Ապրիլի 16-ին Կրթության ու գիտության նախարարությունն արգելեց Տիգրան Պասկևիչյանի «Ընտրություն» ֆիլմի առաջին ցուցադրումը Գեղագիտական կրթության ազգային կենտրոնում: Ֆիլմում նկարագրվում էին 2008թ. վիճելի նախագահական ընտրություններից առաջ և հետո տեղի ունեցած զարգացումները: Որոշումը պարզաբանելով՝ նախարարության պաշտոնյա Արման Այվազյանը հղում կատարեց կառավարության որոշմանը, որն արգելում է կրոնական ու քաղաքական կազմակերպություններին շահույթ չհետապնդող կառույցներում միջոցառումներ անցկացնել: Պասկևիչյանը պնդում էր, որ այդ պահանջը չէր վերաբերվում ֆիլմերի ցուցադրմանը և գտնում է, որ ոտնահարվել է իր խոսքի ազատությունը: Ի վերջո՝ ֆիլմը հեռարձակվեց ԳԱԼԱ հեռուստաընկերության կողմից ու ցուցադրվեց ընդդիմությանը պատկանող փոքր սրահներում:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Հավաքների ազատություն

Սահմանադրությամբ նախատեսվում է հավաքների ազատություն, սակայն իշխանությունները գործնականում սահմանափակել են այս իրավունքի իրականացումը, մասնավորապես, այն անձանց համար, ովքեր ընկալվում են որպես քաղաքական ընդդիմադիրներ: Իշխանությունները շարունակել են կամայականորեն մերժել ընդդիմադիր կուսակցությունների և այլ խմբերի կողմից հանրահավաքների անցկացումը Երևանում վերջիններիս կողմից հայցվող վայրերում: Որոշ խմբերից եղել են նաև հաղորդումներ փակ տարածքների անհասանելիության վերաբերյալ:

Տեղական դիտորդների ընկալմամբ Ժողովներ, հանրահավաքներ, երթեր կամ ցույցեր անցկացնելու մասին ներկայիս օրենքը և դրա իրականացումն անարդարացիորեն սահմանափակում է անձանց հավաքներ անցկացնելու իրավունքը՝ օրենքի իրականացման միջոցով իշխանություններին ընձեռելով անսահմանափակ հայեցողություն՝ ժողովների կամ հանրահավաքների անցկացումը թույլատրելու կամ արգելելու հարցում: Օրենքի համաձայն կազմակերպիչները պարտավոր են լիազոր մարմնին իրազեկում ներկայացնել ցանկացած պլանավորվող հավաքի մասին՝ բացառությամբ ոչ-զանգվածային հրապարակային (100 հոգուց պակաս մասնակիցներով) և ինքնաբուխ միջոցառումների: Դիտորդները դժգոհում էին, որ այս ընթացակարգերը չափից դուրս էին կանոնակարգված և պարունակում էին սողանցքներ, որոնք չարաշահումների հնարավորություն էին ապահովում իշխանությունների համար: Օրինակ՝ չնայած օրենքը սահմանում է, որ լիազոր մարմինը պարտավոր է 72 ժամվա ընթացքում քննարկել զանգվածային հրապարակային միջոցառման

(100 հոգուց ավել մասնակիցներ) իրազեկումը և որոշման մասին անմիջապես տեղյակ պահել կազմակերպիչներին, սակայն օրենքն առերևույթ արգելում է միջոցառման անցկացումը, եթե լիազոր մարմինն ընդհանրապես որոշում չընդունի: Ավելին, դիտորդները նկատում էին, որ այն չափանիշները, որոնց հիման վրա հանրահավաքները կարող են արգելվել, խիստ սուբյեկտիվ են, քանի որ՝ ցանկացած «հիմնավոր պաշտոնական կարծիք» ոստիկանությունից կամ Ազգային անվտանգության ծառայությունից կարող է օգտագործվել որպես հիմք հրապարակային միջոցառման թույլտվության մերժելու կամ արդեն իսկ սկսված միջոցառումը դադարեցնելու համար:

Մայիսի 25-ին օմբուդսմենը հավաքների ազատության հետ կապված 2008-09թթ. զարգացումների մասին զեկույցում եզրակացնում էր, որ խաղաղ հավաքների պրակտիկան երկրում չի համապատասխանում կիրառվող միջազգային չափորոշիչներին: Զեկույցում ասվում էր, որ թեպետ հավաքների ազատության մասին օրենսդրությունը 2004թ. մեծապես համապատասխանեցվել է միջազգային չափորոշիչներին, սակայն այն դեռ պարունակում է երկիմաստ դրույթներ, որոնք հանգեցնում են օրենքի ոչ հետևողական կիրառմանը, մասնավորապես՝ իրազեկումները քննության առնելիս, որի արդյունքում իրավական անորոշություն կա այն մասին, թե երբ կարող են հայտերը մերժվել: Զեկույցը եզրակացնում էր, որ իշխանությունների պահվածքը հաճախ գալիս էր հաստատելու այն պնդումը, որ իշխանությունները համարժեք կերպով չեն գնահատվում հավաքների ազատության կարևորությունը կամ դրա օգտակարությունը երկրի ազգային խնդիրները լուծել հարցում,:

Տարվա ընթացքում իշխանությունները կանխել են, ցրել կամ այլ կերպ միջամտել են իրենց քաղաքականության ընդդիմադիրների հետ առնչություն ունեցող կազմակերպությունների հավաքներին: Տարվա ընթացքում առնվազն ութ անգամ իշխանությունները կասեցրել են ընդդիմադիր ՀԱԿ-ի և մյուս խմբերի ջանքերն անցկացնել փոքրամասշտաբ ցույցեր Ազատության հրապարակում կամ մերժել են դրա վերաբերյալ ներկայացրած հայտերը: Ազատության հրապարակը ստորգետնյա կայանատեղի կառուցման աշխատանքների հետ կապված երկու տարի փակ լինելուց հետո մայիսին վերաբացվեց: Հրապարակը հատկապես խորհրդանշական դեր ունի, քանզի այն ծառայել է որպես իշխանությունների դեմ ցույցերի պատմական վայր: Այս հրապարակն այն վայրն էր, որտեղ տասն օր խաղաղ ցույցեր էին ընթանում 2008թ. վիճարկված նախագահական ընտրություններից հետո, մինչև անվտանգության ուժերի կողմից ցուցարարներին ուժի կիրառմամբ այնտեղից հեռացնելը:

Այս ցույցերից մեկն արգելելիս ոստիկանությունը ցույցի առաջնորդին ասել է, որ իրենց խումբը կարող է Երևանում ցանկացած վայրում հանրահավաք անցկացնել, բացի Ազատության հրապարակից: Առնվազն երկու առիթով իշխանությունները նշել են, որ նույն ժամանակ այլ միջոցառում է նախատեսված այդ վայրում. այնուհանդերձ, դիտորդները նշում էին, որ այդ միջոցառումների մասին իրազեկումներ հրապարակված չեն եղել: Մի շարք դեպքերում ցույցերը կանխելու նպատակով ոստիկանության գործադրած ջանքերը հանգեցրել են բռնության, վնասվածքների պատճառման, իսկ որոշ ցուցարարներ բերման են ենթարկվել:

Մայիսի 31-ին քաշքշուկ տեղի ունեցավ ՀԱԿ-ի կողմնակիցների և ոստիկանության միջև, երբ ոստիկանություն թույլ չտվեց ՀԱԿ-ի մոտ 50 կողմնակիցների մուտք գործել Ազատության հրապարակ: Ոստիկանությունն ուժով բերման ենթարկեց մոտ քսան ցուցարարների և ընդդիմադիր օրաթերթերի երեք լրագրողների: Բերման ենթարկված

լրագրողներից մեկը մեղադրում էր ոստիկաններին, որ նրանք հարվածել ու հրմշտել են այդ վայրում գտնվող անձանց անկախ այն հանգամանքից ՀԱԿ-ի կողմնակիցներ էին, թե շարքային քաղաքացիներ: Երեք հոգուց բացի մնացած բոլոր բերման ենթարկված անձինք մի քանի ժամից ազատ էին արձակվել: Երեք բացառություններն էին լրագրող Անի Գևորգյանը և երկու երիտասարդ ակտիվիստներ՝ Սարգիս Գևորգյանը և Դավիթ Քիրամիջյանը: Իրենց գործողությունները պաշտպանող գրավոր հայտարարության մեջ ոստիկանները նշել էին, ո Սարգիս Գևորգյանն ու Քիրամիջյանը հարվածել են ոստիկանության սերժանտին և պոկել նրա ուսադիրները. Անի Գևորգյանի ձերբակալության համար պատճառ չէր նշվում: Երեք ձերբակալվածների փաստաբանը պնդում էր, որ նրանց նկատմամբ եղել է բռնություն և նրանք ստացել են վնասվածքներ: Անի և Սարգիս Գևորգյանները 72 ժամից ազատ արձակվեցին, սակայն նրանց մեղադրանք ներկայացվեց իշխանության ներկայացուցչի հանդեպ բռնություն գործադրելու համար: Դավիթ Քիրամիջյանը մեղադրվում էր խուլիգանության մեջ և ոստիկանության քննության ընթացքում խափանման միջոց էր ընտրվել կալանքը՝ առանց գրավի. այնուհանդերձ, հուլիսի 2-ին դատարանի որոշմամբ նա ազատ արձակվեց: Դավիթ Քիրամիջյանի և Սարգիս Գևորգյանի ընդհանուր դատը մեկնարկեց հուլիսի 14-ին, իսկ դեկտեմբերի 28-ին երկուսն էլ դատապարտվեցին երկու տարվա պայմանական ազատազրկման: Անի Գևորգյանի դեմ երկու ոստիկանների նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով հարուցած առանձին գործը կարճվեց նոյեմբերի 29-ին:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն Ազատության հրապարակում և դրա շուրջ մայիսի 26-ից հունիսի 1-ը ժամանակահատվածում տեղ գտած միջադեպերի առնչությամբ հարուցված քրեական գործերի քննությունը ցույց տվեց, որ ոստիկանության գործողությունները եղել են իրավաչափ: Քննությունը եզրակացրել էր, որ ՀԱԿ-ի կողմնակիցները զանգվածային հավաքներ են անցկացրել Ազատության հրապարակում առանց քաղաքապետարանի թույլտվության, խախտել են քաղաքացիների ու տարբեր կազմակերպությունների անդորրը, խոսքերով վիրավորել ու հարձակվել են ոստիկանների վրա՝ մի շարք ոստիկանների հասցնելով մարմնական վնասվածքներ: ՀԱԿ-ը հերքում էր այս բոլոր պնդումները՝ հավաստիացնելով, որ հավաքների փորձերը եղել են խաղաղ, փոքրաթիվ մասնակիցներով, հետևաբար՝ նախապես թույլտվություն ստանալ չէր պահանջվում:

Ազատության հրապարակում ցույցերը կանխելուց բացի ոստիկանությունը տարվա ընթացքում միջամտել է խաղաղ հանրահավաքների հետ կապված ընդդիմադիր խմբերի մի շարք այլ փորձերին:

Փետրվարի 19-ին ՀԱԿ երիտասարդները 2008 վիճարկված նախագահական ընտրությունների երկու տարին լրանալու առիթով փորձ արեցին Երևանի կենտրոնում երթի դուրս գալ: Ոստիկանությունը նրանց դուրս մղեց երթևեկելի մասից և շուրջկալի մեջ առավ նրանց հանրահավաքի վայրը: Վեց երիտասարդներ բերման ենթարկվեցին և մի քանի ժամից ազատ արձակվեցին:

Մարտի 1-ին ՀԱԿ-ը հանրահավաք անցկացրեց Մատենադարանի դիմաց: Ոստիկանությունը հանրահավաքը չցրեց, սակայն ըստ հաղորդումների միջոցներ էին ձեռնարկվել Երևան եկող ճանապարհների հասանելիությունը սահմանափակելու, ավտոբուսների մուտքը մայրաքաղաք թույլ չտալու ուղղությամբ: Կային նաև հաղորդումներ, որ Երևանից դուրս ՀԱԿ-ի կողմնակիցներին հրավիրել են ոստիկանության բաժիններ և փորձել համոզել, որ չմասնակցեն հանրահավաքին: Այլ ցույցերին մասնակցելու նպատակով

մարզերի բնակիչների Երևան գալը կանխելու համար ոստիկանության կողմից եղել են նմանատիպ քայլեր:

Մարտի 27-ին ՀԱԿ-ը փորձեց քաղաքացիների հետ հանդիպում ունենալ Գյումրիում՝ մի մասնավոր սպորտային կենտրոնում: Տարածքի սեփականատերը ընդունեց վարձավճարը, սակայն հանդիպման մասին մամուլում հայտարարելուց հետո ըստ հաղորդումների նրան այցելեցին ԱԱԾ ներկայացուցիչները և պարտադրեցին, որ նա պայմանագիրը չեղյալ համարի: ՀԱԿ-ի երկրորդ փորձը հանդիպումն անցկացնել կինոթատրոնի շենքում անհաջողության մատնվեց, երբ ըստ հաղորդումների ԱԱԾ ճնշման ներքո կինոթատրոնի տնօրենն էլ չեղյալ համարեց պայմանագիրը:

Երևանի քաղաքապետարանը մերժեց «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցներին» նախաձեռնության հայտը հունիսի 19-ին Մոսկվա կինոթատրոնի դիմաց՝ Ազնավուրի հրապարակում համերգ կազմակերպելու վերաբերյալ:

Ըստ մամուլի հաղորդումների հուլիսի 28-ին ոստիկաններն ուժ կիրառեցին՝ կանխելու բնապահպանական ակտիվիստների Երևանի կենտրոնում գտնվող ՎՏԲ ռուսական բանկի մուտքն արգելափակելու փորձը: Ցուցարարներն իրենց բողոքն էին հայտնում Թեղուտի անտառում, հիմնականում այդ բանկի ֆինանսավորմամբ կատարվող, հանքերի շահագործման աշխատանքների վերաբերյալ: Ըստ հաղորդումների Կանաչների միության նախագահ Արմեն Դովլաթյանը ստացել էր վնասվածք, իսկ Մարիամ Սուխուդյանը հարված էր ստացել:

Սեպտեմբերի 29-ին Հայ հեղափոխական դաշնակցություն քաղաքական կուսակցությունը կարողացավ փոքրիկ հանրահավաք անցկացնել Աշտարակ քաղաքում՝ չնայած տեղական իշխանությունները հրաժարվել էին արտոնել դրա անցկացումը, որին հաջորդել էր վարչական դատարանի սեպտեմբերի 28-ի որոշումը մերժումն անփոփոխ թողնելու վերաբերյալ:

Նոյեմբերի 9-ին ծեծկռտուք տեղի ունեցավ ոստիկանության ու ՀԱԿ-ի ոչ մեծ թվով երիտասարդ ակտիվիստների միջև, ովքեր ԵՄ-ի կազմակերպած մարդու իրավունքների թեմայով սեմինարը մեկնարկելու ժամանակ Երևանի հյուրանոցներից մեկի դիմաց բողոքի ակցիա էին անում: Ծեծկռտուքը, որ տեսագրվել է, սկսվեց երբ ոստիկաններն ուժով փորձեցին ցուցարարներին տեղաշարժել արգելապատնեշից այն կողմ, որը տեղադրվեց, երբ երիտասարդներն արդեն իսկ սկսել էին իրենց խաղաղ բողոքի ակցիան: Ոստիկանությունը կարճ ժամանակով բերման ենթարկեց երիտասարդ ակտիվիստներ Արեգ Գևորգյանին, Սարգիս Ղազարյանին, Սարգիս Գևորգյանին և Վահագն Գևորգյանին՝ պնդելով, որ նրանք չեն ենթարկվել օրինական պահանջներին, վիրավորել ու հարձակում են գործել ոստիկանի վրա և հարուցվեց քրեական գործ իշխանության ներկայացուցչի հանդեպ բռնություն գործադրելու համար: Ակտիվիստները պնդում էին, որ ոստիկանական բաժնում ոստիկանները ձեռքով և ոտքով հարվածել են իրենց: Ըստ պաշտոնական տեղեկատվության քրեական գործը դեկտեմբերի 28-ին կարճվեց, երբ քննությամբ պարզ դարձավ, որ երիտասարդները հասարակական կարգը խախտելու դիտավորություն չեն ունեցել: Խաղաղ բողոքի ակցիան ցրելու ոստիկանների գործողությունների իրավաչափության հարցն իշխանությունների կողմից կասկածի տակ չառնվեց և դրա հետ կապված քննություն չանցկացվեց:

Միավորումներ կազմելու ազատություն

Միավորումներ կազմելու ազատությունն ամրագրված է Սահմանադրությամբ, և, ընդհանուր առմամբ կառավարությունը գործնականում հարգել է այն: Այնուամենայնիվ, բոլոր քաղաքական կուսակցությունների, միությունների, աշխարհիկ և կրոնական կազմակերպությունների գրանցման պահանջները շարունակել են մնալ խրթին: Օրենքով սահմանվում է, որ քաղաքացիները, բացառությամբ զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողների, իրավունք ունեն կազմելու միություններ, ներառյալ՝ քաղաքական կուսակցություններ և արհմիություններ:

գ) Կրոնի ազատություն

Կրոնական ազատությունների նկարագրին ծանոթանալու համար տես՝ Պետքարտուղարության *Կրոնական ազատությունների մասին 2010թ. զեկույցը* www.state.gov/g/drl//irf/rpt/ էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք

Չնայած օրենքով ապահովվում է երկրի ներսում տեղաշարժվելու, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, սակայն գործնականում որոշ սահմանափակումներ են եղել: Ներքին տեղահանված անձանց, փախստականներին, վերադարձող փախստականներին, ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով կառավարությունը համագործակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ արժանահավատ հաղորդումներ առ այն, որ իշխանությունները կանխել են ընդդիմության հանրահավաքներին մասնակցելու նպատակով դեպի մայրաքաղաք ուղևորվող Երևանից դուրս բնակվող քաղաքացիների տեղաշարժը:

Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (մոտ 3 ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր տարվա համար:

Օրենքը չի արգելում հարկադիր աքսորը, բայց կառավարության կողմից դրա կիրառելու վերաբերյալ հաղորդումներ չեն եղել:

Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)

Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում կառավարությունը սահմանային գոտիներից տարհանել է մոտավորապես 65000 տնային տնտեսություն, բայց մեծամասնությունը հետո վերադարձել են իրենց բնակավայրերը կամ բնակություն հաստատել այլ վայրերում: Մնացած ՆՏԱ-ներից մոտ երկու երրորդը չէին կարող վերադառնալ իրենց գյուղերը, քանի որ դրանք շրջապատված են ադրբեջանական տարածքներով, իսկ մյուսները նախընտրում են չվերադառնալ սոցիալ-տնտեսական վատ

պայմանների պատճառով, կամ վախենում են ականապատ դաշտերից: Փախստականների նորվեգական խորհրդի և Տարածքային կառավարման նախարարությանն առընթեր Միգրացիոն պետական ծառայության 2005թ. համատեղ կատարած քարտեզագրման ուսումնասիրության համաձայն երկրում բնակվող ներքին տեղահանված անձանց թիվը կազմում էր 8399 հոգի: Հետագա ուսումնասիրություններ ՆՏԱ-ների ընթացիկ թիվն հաշվարկելու նպատակով չեն կատարվել:

Սեպտեմբերին երկիր կատարած այցի ընթացքում Ներքին տեղահանվածների մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի ներկայացուցիչ Վալտեր Քելինը երկրում գտնվող որոշ ՆՏԱ-ների համար որպես դեռևս պահպանված խոչընդոտներ առանձնացրեց համարժեք բնակարանային պայմանների բացակայությունն ու սահմանափակ տնտեսական հնարավորությունները:

Փախստականների պաշտպանություն

Օրենքների համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ:

2009թ. ընդունված Փախստականների և ապաստանի մասին նոր օրենքն արտացոլում է փախստականների պաշտպանության վերաբերյալ 1951թ. ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի հիմնական սկզբունքները՝ ապաստան հայցողների և փախստականների ընդունման ու նրանց հանդեպ վերաբերմունքի մասով հարցերի գերակշիռ մասը ներդաշնակեցնելով և համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին, երաշխավորելով հարգանք ապաստանի իրավունքի նկատմամբ և հասցեագրելով ազգային անվտանգության առումով մտահոգող խնդիրները: Դրա ընդունումից ի վեր կառավարությունը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի հետ խորհրդակցելով, ընդունել է ինը ենթաօրենսդրական ակտ, որոնցով սահմանվում են օրենքի իրականացման ընթացակարգային ստանդարտները:

Գործնականում իշխանությունները տրամադրել են փախստականներին պաշտպանություն այնպիսի երկրներ արտաքսվելուց կամ վերադառնալուց, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող էր վտանգ սպառնալ՝ ելնելով նրանց ռասայից, կրոնից, ազգությունից, որևէ սոցիալական խմբի անդամակցությունից կամ քաղաքական դիրքորոշումներից: Տարվա ընթացքում իշխանությունները նաև ապահովել են ժամանակավոր ապաստան: Ըստ Միգրացիոն պետական ծառայության տվյալների տարվա ընթացքում ապաստան են հայցել 50 հոգի. տարվա ընթացքում կառավարությունն ապաստան և փախստականի կարգավիճակ է շնորհել 14 հոգու:

Ապաստան տրամադրելու համար գործում է սահմանված ընթացակարգ, որը ներառում է ապաստան հայցողին անօրինական մուտքի համար ներման շնորհումը և երկրի տարածք ապաստան հայցողի մուտքին առնչվող հարցերը: Ապաստան հայցողների համար եղել են երկար ձգձգումներ օդանավակայանի միջազգային գոտում՝ ապաստանի վերաբերյալ հայտի գրանցմանը սպասելիս: Ապաստան հայցողները, ովքեր պատիժ էին կրում անօրինական մուտք գործելու համար, ընդհանուր առմամբ դիմումի գրանցումից անմիջապես հետո ազատ չեն արձակվել և նրանցից պահանջվել է կրել պատժի մնացած մասը:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը հաղորդել է առնվազն մեկ դեպք, երբ էքստրադիցիայի է ենթարկվել մի անձնավորություն, ով կապնվել էր ՄԱԿ-ի հետ և հայտնել ապաստան հայցելու հստակ ցանկություն: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարն այդ տեղեկությունն անմիջապես փոխանցել է համապատասխան պետական կառույցներին. այնուհանդերձ, այդ անձը էքստրադիցիայի ենթարկվեց չնայած դա կանխելուն ուղղված Միգրացիոն պետական ծառայության ու ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ջանքերին: Սեպտեմբերին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով խորհրդի Կամայական կալանավորումների հարցերով աշխատանքային խմբի հայտարարության մեջ մտահոգություն էր հայտնվում այն մասին, որ սահմանին կամ կալանավորումից հետո ապաստան հայցողները միանգամից հետ չուղարկվեն՝ առանց միջազգայնորեն ընդունված ընթացակարգերին համապատասխան ապաստան հայցելու հնարավորության:

Ինստիտուցիոնալ հզորությունների բացակայության պատճառով իշխանություններն ապաստան հայցողներին մշտական բնակության իրավունք տալուց հետո հաճախ դժվարանում էին նրանց հասարակությանն ինտեգրելու հարցում: Փախստականներին ու ապաստան հայցողներին տրամադրվող ժամանակավոր կացարանների թիվը համարժեք չէր և վատ պայմաններով: Փախստականներն ունեն սոցիալ-տնտեսական նույն խնդիրները, ինչ ընդհանուր բնակչությունը:

ՄԱՍ 3. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Չնայած օրենքով քաղաքացիներին տրված է խաղաղ եղանակով իշխանությունը փոխելու իրավունք, գործնականում այս իրավունքը սահմանափակվել է ընտրությունների անցկացման ժամանակ կրկնվող, նշանակալի խախտումների պատճառով:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Հունվարի 10-ին տեղի ունեցան լրացուցիչ ընտրություններ, որտեղ երեք թեկնածուներ մրցակցում էին համալրելու Ազգային ժողովում ընդդիմադիր պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի տեղը, ով 2009թ. վայր դրեց իր պատգամավորական լիազորությունները որպես բողոքի նշան, երբ խորհրդարանը նրան, ինչպես նաև 2008 նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը պաշտպանած երեք այլ պատգամավորների զրկեց պատգամավորական անձեռնմխելիությունից: Թեկնածուներից մեկն անազատության մեջ գտնվող հայտնի ընդդիմադիր գործիչ Նիկոլ Փաշինյանն էր, ով տարեվերջի դրությամբ շարունակում էր մնալ բանտում՝ 2008թ. հետընտրական անհանգստությունների հետ կապված մեղադրանքներով:

2009թ. ավելի քան քսան հոգանոց խումբը Երևանի կենտրոնում կանգնեցրել և ծեծի է ենթարկել երիտասարդ չորս ակտիվիստների, երբ նրանք ընտրական նյութեր էին բաժանում 2010թ. հունվարին նախատեսված Ազգային ժողովի լրացուցիչ ընտրություններում ընդդիմության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից: Ոստիկանությունը քրեական գործ հարուցեց և մեղադրանք ներկայացրեց միջադեպը հրահրելու համար Վահան Նաղարյանին և Դավիթ Սիմոնյանին, ովքեր ըստ հաղորդումների կառավարամետ նվիրյալներ էին: Ըստ ընդդիմադիր պաշտոնյաների պնդումների հարձակվողները եղել են Սիմոնյանի և

իշխանական Հանրապետական կուսակցության կողմնակիցները, սակայն Սիմոնյանը ժխտում էր այդ մեղադրանքները: Ավելի ուշ Նադարյանին ներկայացված մեղադրանքներն ապացույցների բացակայության հիմքով հանվեցին, իսկ Սիմոնյանը դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու ու ծեծի մեղադրանքով ապրիլի 2-ին դատապարտվեց 150000 դրամ (մոտ 345 ԱՄՆ դոլար) տույժի:

Լրացուցիչ ընտրությունների հետ կապված եղան խախտումների մասին բազմաթիվ հաղորդումներ, այդ թվում՝ ընտրողների ահաբեկման, լրագրողներին, դիտորդներին և թեկնածուների վստահված անձանց ուղղված բանավոր և ֆիզիկական սպառնալիքների, լցոնումների և տեղամասերում «Ազգային միաբանություն» կառավարամետ կուսակցության թեկնածուին սատարող, սակայն ընտրող չհանդիսացող անձանց չլիազորված ներկայության մասին: Որոշ դեպքերում, թվում էր, թե ընտրական գործընթացը ղեկավարում էին ոչ թե ընտրական հանձնաժողովների անդամները, այլ այդ անձինք:

Ընտրությունների օրը, Նիկոլ Փաշինյանի նախընտրական շտաբի պետ Պետրոս Մակեյանը և նրա երկու գործընկերներ հիվանդանոց են տեղափոխվել՝ ընտրատեղամասի մոտ ծեծի ենթարկվելուց հետո: Իշխանությունները քրեական գործ են հարուցել, սակայն գործը հետագայում կարճվել է:

Ըստ ընտրությունների ժամանակ դիտորդություն իրականացրած Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ տեղական ՀԿ-ի՝ թիվ 10/19 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահը, ընտրախախտումների մասին բողոքներ ստանալուց հետո, ուժով դուրս էր հանել բոլոր բողոքողներին և ավելի քան մեկ ժամով փակել ընտրատեղամասը: Այն ընթացքում, երբ տեղամասը փակված էր, ընտրացուցակները ժամանակավորապես անհետացել էին, հետո նախագահը դրանք վերադարձրեց՝ հանելով իր բաճկոնի միջից: Օրվա ընթացքում որոշ ընտրողներ՝ գալով ընտրատեղամաս հայտնաբերում էին, որ ինչ-որ մեկն արդեն քվեարկել է իրենց անվան տակ: Ընտրական հանձնաժողովը հրաժարվեց քննարկել քվեարկության ընթացքում իրեն ներկայացված մի շարք բողոքներ: Այս և մեկ այլ ընտրատեղամասի արդյունքները հետագայում չեղյալ հայտարարվեցին:

Իր եզրահանգումներում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նկատել է բաց քվեարկություն տաս ընտրատեղամասերում, ուղղորդված քվեարկություն և քարոզչություն 18 ընտրատեղամասերում և վստահված անձանց, դիտորդների ու լրագրողների ահաբեկում, սպառնալիք և իրավունքների սահմանափակում՝ ութ ընտրատեղամասերում: Լրացուցիչ ընտրությունների ժամանակ քվեարկությունն անցկացվում էր Երևանի Կենտրոն համայնքի 34 ընտրատեղամասերում:

Լրացուցիչ ընտրություններում մասնակցության աստիճանը շատ ցածր էր, որը շատ դիտորդներ վերագրում էին քաղաքականության նկատմամբ հասարակության շրջանում աճող անտարբերությանն ու երկրի ընտրական արատավոր գործընթացների նկատմամբ անվստահությանը: Քվեարկությանը մասնակցել էին քվեարկելու իրավունք ունեցող 56000 ընտրողների մոտ 23 տոկոսը: 2007թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ միևնույն ընտրատեղամասում ընտրողների մասնակցությունը կազմել էր 53 տոկոս:

Կանանց մասնակցության մակարդակը հասարակական և քաղաքական կյանքում, հատկապես որոշումներ կայացնող մարմիններում մնացել է ցածր: 131 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում կար 11 կին, կառավարությունում՝ երկու կին, իսկ կին մարզպետներ չկային: Երևանի ավագանու 52 անդամներից միայն հինգն էին կանայք, իսկ

Երևանի 12 վարչական համայնքներից որևէ մեկի ղեկավարը կին չէր: Օմբուդսմենի տարեկան զեկույցում, որը հրապարակվեց մարտին, ուշադրություն էր դարձվում երկրի քաղաքական կյանքում կանանց ոչ համարժեք մասնակցության վրա: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ խորհրդարանական ընտրությունների համար ներկայացված յուրաքանչյուր կուսակցության ցուցակում առնվազն յուրաքանչյուր տասներորդ անձը պետք է կին լինի և կուսակցությունների վերջնական ցուցակներում ներկայացված անձանց առնվազն 15 տոկոսը պետք է կանայք լինեն: Թեև շատ դիտորդներ համարում էին, որ քվոտաները բավարար չեն, կանաց հատկացված տեղերի վերջնական թիվը հաճախ ավելի քիչ էր լինում, քան նախատեսված էր Ընտրական օրենսգրքով: Օրինակ՝ իշխող Հանրապետական կուսակցությունը ներկայացնող 63 պատգամավորներից միայն երկուսն են կին:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիան շարունակում էր լինել խնդրահարույց, իսկ իշխանությունները ձեռնարկում էին ոչ այնքան շատ կանխարգելիչ ու պատժիչ միջոցներ դրա դեմ: Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ. այնուհանդերձ, կառավարությունն օրենքներն արդյունավետորեն կամ հավասարաչափ չի կիրառում և պաշտոնյաները հաճախ անպատժելիորեն կոռումպացված գործողությունների մեջ են ներգրավվում: Չնայած փետրվարին կաշառք վերցնելու մեղադրանքով երկու բարձրաստիճան պաշտոնյա ձերբակալվեց, իսկ Գյուղատնտեսության նախարարին հայտարարվեց հրապարակային նկատողություն պետական միջոցները նպատակին չօգտագործելու համար, սակայն կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվել կառավարությունում գոյություն ունեցող համակարգային կոռուպցիայի դեմ:

Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցանիշները նույնպես մատնանշում են, որ կոռուպցիան շարունակել է մնալ լուրջ խնդիր: Քաղաքացիական խմբերը, որ աշխատում էին կոռուպցիայի դեմ նշում էին, որ իշխանությունները շարունակում էին անտեսել լրատվամիջոցների հաղորդումները, որոնք ակնարկում էին պետական պաշտոնյաների կոռուպցիոն գործելաոճը:

2009թ. հունվարից սկսած հանրային պաշտոնյաների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև տարեկան 8 միլիոն ՀՀ դրամը գերազանցող եկամուտ (մոտ 21000 ԱՄՆ դոլար) ունեցող քաղաքացիների համար սահմանված էր եկամուտների հայտարարագրման մասին օրենսդրական պահանջ, որի համաձայն նրանք պարտավոր են իրենց ակտիվների մասին հայտարարագիր ներկայացնել մինչև ապրիլի 15-ը: Այնուհանդերձ, պարզ չէր, թե հանրային պաշտոնյաներն ու բարձր եկամուտներ ունեցող քաղաքացիներն ինչքանով էին հետևել օրենքին: Ըստ տեղական դիտորդների հարկային մարմինները չունեին հայտարարագրերի արժանահավատությունը ստուգելու կարողություններ ու ռեսուրսներ:

Տարվա ընթացքում քրոնիկ կոռուպցիան սանձելուն ուղղված կառավարության ծրագրերը շարունակել են բերել շոշափելի սակավ արդյունքներ: Կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի ու Հակակոռուպցիոն խորհրդի գործունեությանը շարունակել են վերաբերվել թերահավատորեն: 2009թ. կառավարությունը հաստատեց 2009-12թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունն այն երկու

տարի մշակելուց ու վեց ամիս դրա շուրջ Երևանում և մարզերում լայն քննարկումներ ծավալելուց և կառավարության կայքում տեղակայելուց հետո: Այնուհանդերձ, կառավարությունը չապահովեց ֆինանսավորում ռազմավարության իրականացման համար և չառանձնացրեց դրամական միջոցներ հակակոռուպցիոն աշխատանքների համար:

Հունվարի 22-ին նախագահ Սարգսյանը Վերահսկիչ պալատին (ստուգող պաշտոնական մարմին, որը վերահսկում է կառավարության բյուջետային գործունեությունը) ասաց, որ այն պետք է ավելի սերտորեն աշխատի իրավապահ մարմինների հետ և ավելի հետամուտ լինի պետական միջոցների յուրացման և կոռուպցիոն դրսևորումների մեջ կասկածվող պետական պաշտոնյաներին դատական կարգով հետապնդելու համար: Սարգսյանն ընդունեց, որ կոռուպցիայի մեղադրանքով պետական պաշտոնյաների դատապարտման դեպքերի պակասը նվազեցնում է հանրության վստահությունը: Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանը հայտնեց, որ 2009թ. ստուգումներ են անցկացվել բոլոր նախարարություններում ու պետական գերատեսչություններում և դատախազությանն են ներկայացվել յուրացման 21 դեպք:

Փետրվարի 18-ին Գլխավոր դատախազությունը մեղադրեց Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության պետ Տիգրան Գրիգորյանին և նրա տեղակալ Արսեն Պետրոսյանին շրջակա միջավայրի անվտանգության կանոնները խախտելու համար արդյունահանող ընկերության կողմից վճարվելիք տուգանքը նվազեցնելու նպատակով ընկերությունից հինգ միլիոն դրամի (մոտ 13000 ԱՄՆ դոլար) կաշառք վերցնելու մեջ: Օգոստոսի 6-ին կաշառք վերցնելու մեղադրանքով դատարանը Գրիգորյանին դատապարտեց յոթ, իսկ նրա տեղակալ Պետրոսյանին տասը տարվա ազատազրկման:

Մարտի 4-ին կառավարության նիստի ժամանակ վարչապետ Սարգսյանը հրապարակավ հանդիմանեց Գյուղատնտեսության նախարարին պետական միջոցները նպատակին չօգտագործելու համար: Վերահսկիչ պալատը հայտնաբերել էր, որ Գյուղատնտեսության նախարարությունը մասնավոր մատակարարից գյուղացիների համար գնել էր անասունների դեղորայք՝ խիստ ուռճացված գնով: Սարգսյանը խնդրեց քաղաքացիական ծառայությունը վերահսկող պետական մարմնից պաշտոնանկ անել Գյուղատնտեսության նախարարության գնումների համար պատասխանատու երկու ավագ պաշտոնյաներին:

Մարտի 26-ին թերթերը հայտնեցին, որ Նախագահի աշխատակազմի վերահսկողական ծառայության ղեկավար Հովհաննես Հովսեփյանը դերակատարում է ունեցել պետական պաշտոններում իր հարազատների նշանակման հարցում: Մի քույրը նշանակվել է պետական բժշկական ուսումնարանի տնօրեն, իսկ մյուս քույրը՝ ծննդատան տնօրեն: Հովսեփյանը նաև, հաղորդումների համաձայն, քրոջ ամուսնուն տեղավորել է անշարժ գույքի կադաստրի մի վարչության պետի տեղակալի պաշտոնում:

Դեկտեմբերի 27-ին քրեական գործ է հարուցվել Սեյսմիկ պաշտպանության ծառայության պետ Ալվարո Անտոնյանի նկատմամբ՝ ըստ հաղորդումների Ֆրանսիայի կառավարության ֆինանսավորմամբ երկրում սեյսմիկ կայանների ցանց ստեղծելու աջակցության ծրագրի շրջանակում երեք միլիոն դրամ (մոտ 8000 ԱՄՆ դոլար) յուրացնելու համար:

Մայիսի 5-ին դատախազությունը քրեական գործ հարուցեց Մշակույթի նախարարության իրավաբանական և վերահսկողության վարչության պետ Արեգ Հայրապետյանի դեմ՝ պաշտոնական դիրքը չարաշահելու համար: Ըստ հաղորդումների Հայրապետյանը կազմակերպել է, որպեսզի նախարարությունն իրեն պատկանող մասնավոր ապահովագրական ընկերությանը վճարի 19 600 000 դրամ (53 000 ԱՄՆ դոլար) այնպիսի ծառայությունների համար, որոնք երբեք չեն տրամադրվել:

Թեև սահմանադրությամբ արգելում է ակտիվ գործարար շահեր ունեցող անձանց պետական պաշտոն զբաղեցնել, իշխանությունները շարունակել են գործնականում անտեսել արգելքը և խախտումները: Հայտնի գործարարները շարունակել են տեղեր զբաղեցնել խորհրդարանում, իսկ պետական տարբեր պաշտոնյաներ, ըստ հաղորդումների, շարունակել են օգտագործել իրենց պաշտոններն ի շահ իրենց սեփական բիզնեսի:

Փետրվարի 9-ին թերթերը տպագրել են մի մեծ առանձնատան լուսանկար, որը ենթադրվում է, որ Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի տունն է: Հոդվածներից մեկը հաղորդել է, որ նախարարն ունի երեք գազալցակայան, ռեստորանային-հյուրանոցային համալիր և ասֆալտի գործարան: Մարտի 4-ին մեկ այլ թերթ հաղորդել է, որ ԱԺ պատգամավոր Հրանտ Գրիգորյանն ի հավելումն իր ամսական 311 000 դրամ (840 ԱՄՆ դոլար) պետական աշխատավարձի հայտարարագրել է 190 000 000 դրամի (մոտ 512 000 ԱՄՆ դոլար) տարեկան եկամուտ: Թերթը նշել է, որ հայտնաբերել է, որ Գրիգորյանն ունի տրանսպորտային մասնավոր ընկերություն, գազալցակայան, հյուրանոցային համալիր, ռեստորան և խանութ:

Կոռուպցիան շարունակել է նշանակալի խնդիր հանդիսանալ ոստիկանությունում և անվտանգության ուժերում: Չնայած ճանապարհային ոստիկանության կողմից կաշառք վերցնելն էլ ավելի նվազեցնելու ջանքերին՝ քաղաքացիները շարունակել են հայտնել, որ իրենցից կաշառք են պահանջել, թեև դա այնքան հաճախ չի եղել, որքան նախորդ տարիներին: Քաղաքացիները նաև հայտնել են, որ ոստիկանության աշխատակիցները կաշառք են պահանջել քրեական գործերը կարճելու կամ պատիժները նվազեցնելու համար: Կոռուպցիան բանտերում շարունակել է խնդիր հանդիսանալ, որն ավելի է սրվում բանտի աշխատակիցների ցածր աշխատավարձի, ինչպես նաև վատ, իսկ երբեմն էլ վտանգավոր աշխատանքային պայմանների պատճառով: Որոշ հիմնարկներում բանտարկյալները կաշառել են պաշտոնյաներին՝ մեկ տեղանոց խցեր և լրացուցիչ հարմարություններ ձեռք բերելու համար: Եղել են չստուգված հաղորդումներ, որ բանտի պաշտոնյաները բանտարկյալներին ուտելիք փոխանցելու համար ընտանիքի անդամներից և ընկերներից անօրինական վճարներ են գանձել:

Կոռուպցիոն դրսևորումների մասին լայն տարածում ունեցող հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գտնվող Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության վերաբերյալ (ԲՍՓԳ). սա մի մարմին է, որը սահմանում է մարդու հաշմանդամության կարգը (տես՝ Մաս 6):

Տարվա ընթացքում Վերահսկիչ պալատը հրապարակեց բազմաթիվ պետական կառույցներում տեղ գտած կոպիտ խախտումների ու ֆինանսական չարաշահումների նմանատիպ բացահայտումներ, սակայն նախորդ տարիների նման այս գործերով հազվադեպ էին սկսվում քրեական հետապնդումներ:

Համաձայն պաշտոնական վիճակագրության տարվա ընթացքում տարբեր իրավապահ կառույցների կողմից հարուցվել է կոռուպցիայի հետ կապված 420 գործ: Տարվա ընթացքում դատարանները դատապարտել են 159 հոգու, որից 79-ը պետական պաշտոնյաներ են: Պաշտոնյաների հետ կապված քննության ու դատապարտումների դեպքերի մեծ մասն առնչվում էին բաժնի պետերի կամ ցածր օղակի այլ պաշտոնյաների:

Թեև օրենքով սահմանվում է կառավարության տեղեկատվության հանրային հասանելիությունը, գործնականում սակայն, շատ կառույցներ և պաշտոնյաներ չեն կամեցել ապահովել այդ հասանելիությունը: Տարեվերջի դրությամբ կառավարությունը դեռ չէր ընդունել տեղեկատվության հավաքումն ու տրամադրումը կարգավորող իրավական ակտերը, որոնք պահանջվում են և լրացնում են 2003թ. ընդունված Տեղեկատվության ազատության մասին օրենքը: Պաշտոնյաները տեղեկատվության տրամադրումը մերժելիս հղում են կատարել այս ակտերի բացակայությանը: ՀԿ-ները դատարանների միջոցով տեղեկատվություն ստանալու հարցում ավելի հաջողակ են եղել, քան դրանք ուղղակիորեն պետական կառույցներից ստանալու հարցում:

2008թ. «Տեղեկատվական ազատության կենտրոն» ՀԿ-ն հրապարակեց լրագրողների համար տեղեկատվության հասանելիության մասին հետազոտության արդյունքները, որտեղ ասվում էր, որ պաշտոնական տեղեկատվության դժվար հասանելիությունը շարունակում էր մնալ լուրջ խնդիր: Հետազոտությունը նշում էր, որ պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցում հիմնական խոչընդոտը պաշտոնյաների մտածելակերպն է, ովքեր իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը դիտարկում են որպես իրենց մասնավոր ունեցվածք: Այլ խոչընդոտներից են տեղեկատվությունը տեսակավորելու ու տրամադրելու պաշտոնական ընթացակարգերի բացակայությունը, ինչպես նաև լրագրողների շրջանում տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքին լավատեղյակ չլինելու հանգամանքը:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ ազատորեն հետաքննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները:

Տարվա ընթացքում երկրում գործել են տեղական անկախ իրավապաշտպան կազմակերպություններ և միջազգային կազմակերպությունների տեղական մասնաճյուղեր: Իշխանության իրավասու մարմինները հիմնականում չեն մերժել հանդիպել տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդների հետ և հետևել են որոշ հասարակական կազմակերպությունների առաջարկներին, մասնավորապես՝ սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում: Իշխանությունները, սակայն, սովորաբար չեն արձագանքել ՀԿ-ների հնչեցրած մեղադրանքներին՝ կապված իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի ու չարաշահումների դրսևորումների հետ: Իշխանությունների ընդհանուր արձագանքը նմանատիպ դեպքերում եղել այն, որ քննություն է իրականացվել ու մեղադրանքները չեն հիմնավորվել:

Օգոստոսի 5-ին առանց նախապես խորհրդակցելու շահագրգիռ կողմերի հետ կառավարությունն ընդունեց մի խիստ հակասական որոշում, որով Արդարադատության նախարարությանն առընթեր ստեղծվեց շահույթ չհետապնդող կազմակերպությունների գործունեության «օրինականության» նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին: Նոր կառույցի համար որպես նպատակ հայտարարվեց տեղի օրենքներին շահույթ չհետապնդող կազմակերպությունների գործունեության համապատասխանության ապահովումը, օրենքի խախտումների բացահայտումը և նրանց ֆինասական հարցերի թափանցիկության մեծացումը: Որոշմամբ նոր վերստուգիչ մարմնին վերապահվում էր լիազորությունների լայն շրջանակ, որոնց ներքո ի թիվս այլ բաների հնարավոր էր դարձվում նաև ՀԿ-ների ստուգումների անցկացումը, և դրանց գործունեության կասեցման կամ փակման պահանջի ներկայացումը՝ առանց բողոքարկման մեխանիզմի: ՀԿ-ները քննադատեցին այս որոշումը՝ այն որակելով հակասահմանադրական, իսկ վերստուգիչ մարմնի ստեղծումը գնահատեցին որպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հանդեպ լիակատար պետական վերահսկողության սահմանման միջոց: Ըստ ՀԿ-ների վերստուգիչ մարմնի ստեղծումը հետևեց 2009թ. Ազգային ժողովում նմանատիպ սահմանափակումներ նախատեսող օրենսդրության ընդունմանն ուղղված կառավարության ապարդյուն ջանքերին:

Մարտի 11-ին գլխավոր դատախազությունը հայտարարեց, որ հանվել են երիտասարդ բնապահպանական ակտիվիստ Մարիամ Սուխուդյանին ներկայացված մեղադրանքները: 2009թ. օգոստոսին ոստիկանությունը նրան ներկայացրել էր սուտ մատնության մեղադրանք, այն բանից հետո, երբ նա 2008թ հրապարակավ նշեց, որ հատուկ կարիքներով երեխաների հանրային գիշերօթիկ մի դպրոցում սեռական ու այլ ոտնձգություններ են տեղ գտել: 2009թ. հոկտեմբերին մեղադրանքը մեղմացվեց և փոխվեց զրպարտության: Մեղադրյալը և տեղական իրավապաշտպան դիտորդները քննադատեցին այս մեղադրանքը՝ նշելով, որ դրանք առաջադրվել են Սուխուդյանին որպես հաշվեհարդար չարաշահումները բարձրաձայնելու համար:

Փետրվարի 5-ին դատարանն արդարացրեց ոստիկանների վրա հարձակում գործելու մեջ մեղադրվող Արշալույս Հակոբյանին՝ տեղական Հելսինկյան ասոցիացիա ՀԿ-ից , այն բանից հետո, երբ մեղադրող կողմն ապացույցների բացակայության հիմքով ետ կանչեց մեղադրանքը: Ոստիկանները ձերբակալել էին Հակոբյանին 2009թ. հունիսին ոստիկանների հանդեպ բռնության ենթադրյալ մեղադրանքով, երբ ոստիկանը նրան ծանուցագիր էր հանձնել 2009թ. մայիսին կայացած ավագանու ընտրություններում դիտարկված ընտրակեղծիքների վերաբերյալ Հակոբյանի պաշտոնական բողոքի հետ կապված ՀՔԾ ներկայանալու համար: Հակոբյանը նշում էր, որ ոստիկանները ոստիկանական բաժնում և ճանապարհին իրեն ծեծել են, իսկ կալանքի առաջին ժամերի ընթացքում մերժել են փաստաբանի հասանելիությունը: Հասարակական դիտորդների խմբի անդամները բանտում այցելել էին Հակոբյանին՝ արձանագրելով, որ կային բազմաթիվ վնասվածքներ ոտքերին, ձեռքերին, մեջքին և գլխին:

Զարգացումներ չեն եղել 2008թ. երիտասարդ ակտիվիստներ Արսեն Խառատյանի ու Նարեկ Հովակիմյանի վրա գործած հարձակումների քննության հարցում:

Գործել է օմբուդսմենի կամ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որը կոչված է պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն ազգային, մարզային և տեղական կառավարման մարմինների ու նրանց պաշտոնյաների

ոտնձգություններից: Տարվա ընթացքում երկրում առկա մարդու իրավունքների հետ կապված խնդիրների վերաբերյալ օմբուդսմենը ներկայացրել է թե արտահերթ, թե ընթացիկ զեկույցներ: Օրենքի համաձայն օմբուդսմենը պարտավոր է տարեկան զեկույցն ազգային ժողովին ներկայացնել տարվա առաջին եռամսյակում, սակայն խորհրդարանի օրակարգում 2009թ. տարեկան զեկույցի լսումը մինչև նոյեմբերի 15-ը չէր ներառվել: Կառավարությունն ընդհանուր առմամբ չի արձագանքել օմբուդսմենի զեկույցներին և այդպես էլ չի պատասխանել 2008թ. տարվա ընթացքում տեղ գտած հետընտրական բռնությունների մասին արտահերթ զեկույցում բարձրացված հարցերին՝ դրա փոխարեն նախընտրելով քննադատել զեկույցը: Տարվա ընթացքում օմբուդսմենի գրասենյակը 5221 քաղաքացիներից ստացել է 4089 բողոք, որից 123-ը գրասենյակը կարգավորել է՝ լուծում տալով 562 հոգու ունեցած բողոքներին:

2008թ. մարտի հետընտրական դեպքերն ուսումնասիրելու նպատակով ձևավորված ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը 2009թ. սեպտեմբերին իր զեկույցում նշեց, որ հանձնաժողովը չի կարողացել լույս սփռել տեղի ունեցած 10 մահվան դեպքերի վրա և կոչ էր անում իրավապահներին ավելին անել՝ մահվան դեպքերի մեղավորներին բացահայտելու և նրանց հանդեպ քրեական հետապնդում իրականացնելու ուղղությամբ: 2009թ. հունիսին նախագահ Սարգսյանը ցրեց ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին աջակցելու նպատակով իր ստեղծած փորձագետների երկկուսակցական փաստահավաք խումբը: Ըստ տեղական դիտորդների՝ փաստահավաք խմբի ցրումը պայմանավորված էր մահվան տասը դեպքերից մի քանիսում իշխանությունների հնարավոր դերակատարումը բացահայտող գաղտնի հաշվետվությունների արտահոսքի հետ:

2009թ. դեկտեմբերին ԵԽԽՎ մոնիտորինգի խումբը քննադատեց հանձնաժողովին ինքնագրաքննության համար՝ ուղղված իրադարձությունների պաշտոնական վարկածը բավարար կերպով չվիճարկելուն: Նաև քննադատվում էր զեկույցում դեպքերի միակողմանի նկարագրությունը և հետընտրական ձերբակալությունների ու ընդդիմության բազմաթիվ կողմնակիցների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ քննարկման բացակայությունը:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է ռասայի, սեռի, հաշմանդամության, լեզվի կամ սոցիալական կարգավիճակի հիման վրա խտրականությունը, սակայն այդ արգելքների գործնական կիրառումը կառավարության կողմից արդյունավետորեն չի ապահովվում:

Կանայք

Բռնաբարությունը քրեորեն հետապնդելի արարք է, որի համար սահմանված առավելագույն պատժաչափը կարող է հասնել 15 տարի ազատազրկման: Ամուսնական բռնաբարությունը քրեականացնող առանձին օրենսդրական դրույթներ չկան: Ըստ ոստիկանության տվյալների, որոնց հողում է կատարում Գլխավոր դատախազությունը, տարվա ընթացքում գրանցվել է բռնաբարության և բռնաբարության փորձի ինը դեպք: Այս դեպքերի հետ կապված քրեական հետապնդում է իրականացվել ինը հոգու հանդեպ, յոթը

հոգի դատապարտվել են, իսկ երկու գործով քննությունը դեռ ընթացքի մեջ էր: Ըստ պաշտոնական տեղեկատվության այս գործերից և ոչ մեկն ամուսնական բռնաբարության դեպք չէր հանդիսանում: Սոցիալական պիտակավորման պատճառով բռնաբարության նման հանցանքների մասին հաղորդումները շարունակում են շատ քիչ լինել:
Ընտանեկան բռնության դեմ ուղղված օրենք չկա: Տարվա ընթացքում ամուսնական և կանանց հանդեպ այլ բռնությունների դեպքերի վերաբերյալ հաղորդումները քիչ են եղել, չնայած այս երևույթը լայն տարածում ունի, ինչը փաստում է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից հուլիսին հրապարակված հետազոտությունը: Ուսումնասիրությունը, որ կատարվել է 2008 և 2009թթ. Ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ, մատնանշում է, որ զուգընկերոջ կողմից կանանց 61 տոկոսի հանդեպ եղել է վերահսկողական վերաբերմունք, կանանց 25 տոկոսը ենթարկվել է հոգեբանական բռնության, 8.9 տոկոսը՝ ֆիզիկական բռնության և 3.3 տոկոսը՝ սեռական բռնության: Ամուսին կամ այլ ինտիմ զուգընկեր չհանդիսացող բռնարարների կողմից դրսևորվել են ֆիզիկական բռնություններ կանանց 2.3 տոկոսի և հարկադիր սեռական հարաբերություններ կանանց 0.1 տոկոսի հանդեպ: Հետազոտության տվյալներով կանանց 7.4 տոկոսը դադարել է աշխատել կամ հրաժարվել է աշխատելուց, քանի որ նրանց զուգընկերները չեն ուզեցել, որ իրենք աշխատեն, նրանց 8.7 տոկոսն ասել է, որ իրենց եկամուտը/տնտեսածը վերցրել են իրենց զուգընկերները՝ հակառակ իրենց կամքին, իսկ երբևէ զուգընկեր ունեցած կանանց 60.9 տոկոսը չէր աշխատում: Հետազոտությունը նաև փաստում էր, որ կանանց դեմ բռնությունն անբարենպաստ ազդեցություն ունի կանանց առողջության և նրանց սոցիալական, հոգեկան, ֆիզիկական և տնտեսական բարեկեցության վրա:

Տեղական փորձագետների գնահատմամբ հետազոտության արդյունքները լիարժեք կերպով չէին արտացոլում ընտանեկան բռնությունների ծավալները, քանի որ անցկացված տնային տնտեսությունների հետազոտությունն անանուն չէր: Հոկտեմբերի 4-ին Արմավիրի զարգացման կենտրոն տեղական ՀԿ-ն ներկայացրեց անցկացված անանուն հետազոտության արդյունքները, որի շրջանակում 2009թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հարցվել էին 300 կին՝ Արմավիրի մարզում: Հետազոտության արդյունքներով հարցմանը մասնակցած կանանց 68 տոկոսն ընդունում էին, որ ենթարկվել են հոգեբանական բռնության (ընդ որում 42 տոկոսը նշում էր, որ բռնությունները եղել են հաճախ կամ երբեմն), 38 տոկոսն ընդունում էին, որ ենթարկվել են ֆիզիկական բռնությունների (ընդ որում 21 տոկոսը նշում էր, որ բռնությունները եղել են հաճախ կամ երբեմն): Ըստ հարցման արդյունքների ֆիզիկական բռնության ենթարկվածների 76 տոկոսն օգնության համար որևէ մեկին չի դիմել, իսկ նրանք ովքեր դիմել են, ապա՝ ընտանիքի անդամներին կամ հարևաններին: Հարցումը նաև ցույց էր տալիս, որ կապ կա կրթական մակարդակի ու բնակվելու վայրի (օրինակ՝ գյուղական և քաղաքային բնակավայրեր) հետ և առավել կիրթ, քաղաքաբնակ կանայք անընդունելի են համարում ամուսինների կողմից հոգեբանական կամ ֆիզիկական բռնությունները:

2007թ. տեղական «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի պատվերով անցկացված մեկ այլ անանուն հետազոտության տվյալներով հարցվողների 66 տոկոսն ընդունել է, որ ընտանիքի անդամների կողմից ենթարկվել են հոգեբանական ճնշման, իսկ 39 տոկոսն իրենց համարել են միջին կամ ծայրահեղ ֆիզիկական բռնության զոհեր:

Ըստ տեղական դիտորդների ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասի վերաբերյալ շարունակում են ոստիկանությանը չհայտնել, որովհետև տուժողները վախենում են

ֆիզիկական վնասից, անհանգստանում են, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին, կամ ամաչում են ընտանեկան խնդիրներն ի ցույց դնելուց:

Հոկտեմբերի 1-ին ոստիկանությունը գործ հարուցեց Մասիս քաղաքի բնակչուհի 20-ամյա Զարուհի Պետրոսյանի մահվան փաստով, որ սեպտեմբերի 30-ին ուշ երեկոյան հիվանդանոց էր տեղափոխվել գանգուղեղի հեմատոմայով, կոտրված մատով և մարմնի տարբեր շրջաններում արնազեղումներով: Ապա՝ ոստիկանությունը ձերբակալեց Յանիս Սարկիսովին, Զարուհու քաղաքացիական ամուսնուն՝ մեղադրելով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելու մեջ, որն անզգուշությամբ բերել է մահվան: Ավելի ուշ քրեական գործի քննությունը փոխանցվեց Պաշտպանության նախարարության քննչական վարչությանը՝ հաշվի առնելով Սարկիսովի զինծառայող լինելու փաստը: Ըստ Զարուհի Պետրոսյանի քրոջ՝ Հասմիկ Պետրոսյանի, Զարուհին արդեն երկար ժամանակ ֆիզիկական բռնության էր ենթարկվում ամուսնու և սկեսրոջ կողմից: Պաշտոնյաները նշում էին, որ սկեսրոջ կողմից բռնությունների փաստը քննությամբ չի հիմնավորվել: Տարեվերջի դրությամբ Սարկիսովի գործով քննությունը շարունակվում էր, իսկ նա գտնվում էր կալանքի տակ: Պետրոսյանի երեխան գտնվում էր մանկատանը, մինչդեռ և սկեսուրը, և Պետրոսյանի քույրը դիմել էին ստանձնելու երեխայի խնամակալությունը,:

Մարտին Հայաստանի կանանց ռեսուրս կենտրոն տեղական ՀԿ-ն մեկնարկեց հանրային իրազեկման արշավ՝ ներկայացնելու իրենց «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը» և օգնության թեժ գիծը: Երևանի քաղաքապետարանն ի վերջո մերժեց կազմակերպության դիմումը մեծ գովազդային վահանակների վրա կենտրոնի գովազդը տեղադրելու վերաբերյալ՝ հիմնավորելով որ վահանակի պատկերները կարող են անհարկի հոգեբանական ընկճվածություն պատճառել դեռահասներին ու կանանց: Հետո քաղաքապետարանը քայլեր ձեռնարկեց Կանանց ռեսուրս կենտրոնի բոլոր գովազդները հանելու ուղղությամբ: Կանանց ռեսուրս կենտրոնը պնդում էր, որ քաղաքապետարանը սահմանափակելով և վահանակների վրա թողնելով միայն թեժ գծի հեռախոսահամարը, նվազեցրել է կանանց դեմ սեռական բռնություններին ուղղված իրենց արշավի ազդեցությունը:

Երկրում գործել են ՀԿ-ների կողմից աշխատեցվող երկու ապաստան՝ Երևանում և Գյումրիում, որտեղ ընտանեկան բռնության զոհերին առաջարկվում է օթևան և այլ աջակցություն, այդ թվում՝ հոգեբանական և իրավական խորհրդատվություն: Երևանի ապաստանն աշխատեցնող ՀԿ-ն ուներ նաև թեժ գծի ծառայություն: Երկու ապաստանների գործունեությունն էլ կախված էր մասնավոր դոնորներից. Կառավարությունը ֆինանսավորում չէր ապահովում:

Հղում կատարելով Ոստիկանության տեղեկատվական կենտրոնի վերլուծած տվյալներին Գլխավոր դատախազությունը հայտնում էր, որ տարվա ընթացքում երկրում գրանցվել է ընտանեկան բռնության 392 դեպք, որոնք ներառում են ոչ միայն ամուսնական բռնությունները, այլ ցանկացած ընտանիքի անդամների կողմից թույլ տված բռնությունները: Մասնավորապես՝ գրանցվել է ծեծի ենթարկելու 229-ը դեպք, դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու 104 դեպք, սպանելու, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքի 25 դեպք, դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու 22 դեպք, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու 6 դեպք, որից երկուսը հանգեցրել են տուժողի մահվանը, խոշտանգումների 1 դեպք և սպանության կամ սպանության փորձի 5 դեպք:

Օրենքը հստակորեն չի արգելում սեռական ոտնձգությունները, չնայած այն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին: Չնայած հրապարակային տվյալներ խնդրի ծավալների վերաբերյալ չկան, սակայն դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն:

Ըստ օրենքի ամուսնական զույգերը և անհատներն իրավունք ունեն առանց խտրականության, հարկադրանքի կամ բռնության ազատ և պատասխանատու կերպով որոշում կայացնել, թե երբ, ինչ պարբերությամբ և քանի երեխա են ունենալու, և ունենան միջոցներ և տեղեկատվություն դրա համար: Սակայն գործնականում, հատկապես առավել ավանդական ընտանիքներում այս կարգի որոշումները սովորաբար ընդունվում են ամուսնու և նրա ծնողների կողմից: Հակաբեղմնավորիչների մասին տեղեկացվածությունը և դրանց հասանելիությունը ցածր է, հատկապես գյուղական վայրերում: Մասնագիտական ծննդօգնությունն առավել հասանելի է մեծ քաղաքներում ու բնակելի կենտրոններում: Կանանց և տղամարդկանց մոտ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, այդ թվում՝ ՄԻԱՎ ախտորոշվել և բուժվել են հավասար պայմաններում: Ըստ միջազգային կազմակերպությունների կողմից հավաքագրած տվյալների 2008 մայրական մահացությունը կազմել է մոտավորապես 29 հոգի յուրաքանչյուր 100000 կենդանի ծնունդներից: «Մայրական մահացությունը 2005թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և Համաշխարհային բանկի գնահատումներ» հրատարակության համաձայն մայրական մահացության, այսինքն՝ կյանքի ընթացքում հղիության հետևանքներով կնոջ մահվան հավանականությունը կազմում է մեկը 980-ից:

Հաղորդումներ են եղել, որ համարժեք ընդհանուր և վերարտադրողական առողջապահական ծառայությունների հասանելիությունը բավարար չի եղել կանանց համար, հատկապես գյուղական կամ հեռավոր բնակավայրերում: Դիտորդների գնահատմամբ վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված տարբեր աշխատանքներն արդյունավետ չեն եղել:

Միջազգային և տեղական դիտորդները տարվա ընթացքում առաջարկել են, որ կառավարությունը շարունակի միջոցներ ձեռնարկել կանանց համար ընդհանուր առողջապահական ծառայությունների և մասնավորապես՝ վերարտադրողական առողջապահական ծառայությունների հասանելիությունը բարելավելու ուղղությամբ: Դիտորդները տարվա ընթացքում իշխանություններին կոչ են արել ավելացնել աշխատանքներն ուղղված սեռական և վերարտադրողական (այդ թվում՝ ընտանիքի պլանավորման) ծառայությունների հասանելիության բարելավմանը, մոբիլիզացնել ռեսուրսներն այս նպատակի համար և հսկողություն իրականացնել կանանց համար այս ծառայությունների փաստացի հասանելիության նկատմամբ: Նաև առաջարկվում էր, որ կառավարությունը լայնորեն խթանի ընտանիքի պլանավորումն ու վերարտադրողական առողջության մասին իրազեկումն աղջիկների և տղաների շրջանում՝ հատկապես ուշադրություն դարձնելով անչափահաս աղջիկների հղիության, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը:

Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային և տարիքային խտրականությունը դեռևս խնդրահարույց էին պետական և մասնավոր հատվածներում: Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ

աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում կառավարության բոլոր օղակներում՝ ազգային, մարզային ու տեղական մակարդակներում:

Երեխաներ

Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից: Դիտորդները նշում են, որ ծնողները՝ մասնավորապես չքավոր ու սոցիալապես առավել խոցելի խմբերից, չեն կարողացել գրանցել երեխայի ծնունդը՝ դրանով իսկ զրկելով նրանց էական սոցիալական ծառայություններից ու առավել մեծացնելով իրենց երեխաների խոցելիությունը: Սակայն տարվա ընթացքում իրավիճակը շտկելու հարցում միջազգային դոնորները շարունակել են աշխատել կառավարության հետ:

Խիստ անհավասարություն է պահպանվել նախադպրոցական, տարրական և միջնակարգ կրթության հարցում՝ ըստ սեռի, բնակավայրի աշխարհագրական դիրքի և եկամուտների: Չնայած ընդհանուր հավասար հասանելիությանը՝ զգալի անհավասարություն է եղել կրթության որակի մասով աղքատ և հարուստ ընտանիքների ու քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև: Առավել բարեկեցիկ ու քաղաքային բնակավայրերի ընտանիքներն աղքատ և գյուղաբնակ ընտանիքների համեմատ ունեն ավելի լավ կրթության, ուսուցումների, և լրացուցիչ պարապմունքների հնարավորություն: Բազային կրթությունից հետո ուսումնառությունը չշարունակողների թիվը մնացել է զգալի, հատկապես աղքատ երեխաների շրջանում:

Անվճար հիմնական բուժօգնությունը հավասարապես հասանելի էր մինչև 18 տարեկան թե տղաներին, և թե աղջիկներին, սակայն հաճախ այն ցածրորակ էր և բուժաշխատողները բացահայտ կամ ծածուկ կերպով վճար էին պահանջում ծառայությունների համար:

Ապրիլ-մայիս ամիսներին «Փրկեք երեխաներին» միջազգային ՀԿ-ի տեղական մասնաճյուղը երեխաների հանդեպ չարաշահումների գնահատում անցկացրեց Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Ըստ գնահատման այս մարզերում երեխաների հանդեպ լինում են ոտնձգություններ տարբեր աղբյուրներից: Ամենատարածված ոտնձգությունը ներընտանեկան ֆիզիկական ու հոգեբանական բռնությունն է և անտեսվածությունը, մասնավորապես՝ համարժեք սնունդ, հագուստ ու կացարան չապահովելը: Երեխաների հաղորդմամբ տնից դուրս նույնպես նրանց նկատմամբ լինում են հոգեբանական ու ֆիզիկական բռնություններ՝ հաստատություններում, դպրոցներում, երբեմն էլ փողոցներում: Ըստ գնահատման ծնողները նաև տնտեսապես շահագործում են նրանց՝ ստիպելով, որ աշխատեն: Գնահատումը ցույց տվեց, որ երեխաները տեղյակ չեն իրենց իրավունքների ու պատասխանատվությունների մասին և անիրազեկության հետևանքով երեխաների դեմ բռնությունը դառնում է սոցիալապես ընդունելի:

Հակաթրաֆիկինգային հոդվածներով օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը: Այս հոդվածներով երեխաների թրաֆիկինգի համար նախատեսվում է 7-ից 15 տարվա ազատազրկում՝ կախված ծանրացուցիչ հանգամանքներից (Տես՝ Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Պետքարտուղարության ամենամյա զեկույցը www.state.gov/g/tip):

Անչափահասի բռնաբարությունը, որը սահմանվում է որպես սեքսուալ բնույթի գործողություն 16 տարին չլրացած անձի հետ, պատժվում է տույժով և մինչև երկու տարի ազատազրկմամբ: Քանի որ այս հանցակազմի համար նախատեսված պատիժը չի համարվում ծանր, ապա սեքսուալ բնույթի առաջարկները կամ այլ նմանատիպ գործողություններն անչափահասների հանդեպ, ինչպես նաև 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու մասին հաղորդում չտալն ապաքրեականացված են: Ըստ տեղական դիտորդների քրեական օրենսգիրքը չի ապահովում անհրաժեշտ իրավական դաշտ երեխաների հետ կապված սեռական բնույթի հանցանքներին համարժեք գնահատական տալու ու դրանց հանդեպ համարժեք քրեական հետապնդում իրականացնելու համար:

Մանկական պոռնկագրությունը պատժվում է առավելագույնը վեց տարի ազատազրկմամբ:

Եղել են հաղորդումներ հաստատություններում երեխաների հանդեպ չարաշահումներ թույլ տալու վերաբերյալ: Նոյեմբերի 30-ին դատարանը երեխաների թրաֆիկինգ իրականացնելու համար Սմբատ Ուրումյանին դատապարտեց ինը տարվա ազատազրկման: Հասարակության համար վտանգավոր վարքագիծ դրսևորող երեխաների հատուկ դպրոցի նախկին փոխտնօրեն Ուրումյանը մեղավոր ճանաչվեց հատուկ դպրոցի երեք սաներին մուրացկանության դրդելու մեջ: Միաժամանակ դատարանն արդարացրեց Ուրումյանին ներկայացված մյուս՝ երեխայի հանդեպ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու մեղադրանքով:

Հունվարի 11-ին Գլխավոր դատախազությունը հատուկ կարիքներով թիվ 11 դպրոցի ուսուցիչներից մեկի կողմից աշակերտուհիների հանդեպ սեռական և ֆիզիկական բռնություններ թույլ տալու մասին հնչեցված մեղադրանքների հիման վրա քրեական գործ հարուցեց՝ հակադարձելով 2009թ. օգոստոսին դատախազության որոշումը, որ քննությամբ այդ մեղադրանքները չեն հիմնավորվել: Ոտնձգությունների մասին ահազանգը 2008թ. հնչեցրեցին մի խումբ երիտասարդ ակտիվիստներ, ովքեր կամավորական աշխատանք էին իրականացնում այդ դպրոցում: Մայիսի 24-ին դպրոցի նախկին ուսուցիչ Լևոն Ավագյանը, ով իրեն մեղավոր էր ճանաչել, ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվեց երկու տարվա ազատազրկման: Մայիսի 31-ին Կրթության և գիտության նախարարությունն աշխատանքից ազատեց դպրոցի տնօրեն Մերուժան Ենգիբարյանին՝ անվստահություն հայտնելով նրան որպես դպրոցի տնօրեն պաշտոնավարելու հարցում: Երիտասարդ ակտիվիստների գնահատմամբ ուսուցչի պատիժը խիստ մեղմ էր: Նրանք պահանջում էին հետագա քննություն՝ պարզելու տնօրենի ու մյուս ուսուցիչների դերակատարումը, ովքեր ըստ հաղորդումների տեղյակ էին բռնությունների մասին, սակայն չէին կանխել դրանք: Տուժողների վերաքննիչ բողոքից հետո՝ օգոստոսի 4-ին վերաքննիչ դատարանն Ավագյանի ազատազրկման ժամկետը դարձրեց 3 տարի:

Մարտի 12-ին թիվ 11 հատուկ դպրոցի հետ կապված զարգացումներից ու քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության զգալի ճնշումներից ելնելով՝ Կրթության և գիտության նախարարությունը հատուկ և գիշերօթիկ դպրոցների հասարակական մոնիտորինգի խումբ ձևավորեց, որի կազմում ներառվեցին մոտ 18 ՀԿ-ներ:

2009թ. տեղական «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ն իրականացրեց մոնիտորինգ 12 հատուկ կրթական հաստատություններում և 4 գիշերօթիկ

հաստատություններում: Շատ երեխաներ նշում էին, որ ի թիվս այլ պատիժների իրենց ապտակել կամ ծեծել են, փակել դասասենյակում, կամ թույլ չեն տվել տուն գնալ: Որոշ ուսուցիչներ ընդունել են, որ կարգապահություն ապահովելու համար դիմում են բռնության: Ուսումնասիրությունը նաև նշում էր, որ այդ հաստատություններից շատերում ապահովված չեն նորմալ կենտրոնական ջեռուցման համակարգեր, իսկ սանիտարահիգիենիկ պայմանները չեն համապատասխանում ստանդարտներին: Նույն ժամանակահատվածում ՀԿ-ն ուսումնասիրություն է կատարել նաև Սյունիքի մարզի 12 հանրակրթական դպրոցներում, որով պարզվել է, որ որպես պատժամիջոց կանոնավոր կիրառվում են ֆիզիկական և հոգեբանական բռնությունների տարբեր ձևեր, այդ թվում՝ ծեծ, ապտակ, ականջ քաշել և նվաստացնող վերաբերմունքի այլ դրսևորումներ: Նաև նկատվել են անհավասարության դրսևորումներ դպրոցներում աշակերտների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի մեջ՝ կախված աշակերտի ուսուցչի հետ ունեցած հարաբերություններից, ուսուցչի մոտ մասնավոր դասերի գնալու փաստից և այն բանից, թե արդյոք աշակերտն ունի ազդեցիկ ծնողներ: Նույն կազմակերպության կողմից 2007 և 2008 թվականներին կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ըստ էության նույնն են եղել:

Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Երեխաների միջազգային ծնողական առևանգումների մասին տեղեկությունների համար տես՝ Պետքարտուղարության ամենամյա զեկույցը http://travel.state.gov/abduction/resources/congressreport/congressreport_4308.html էջում:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Տարվա ընթացքում հակասեմական բռնությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Հոկտեմբերի 19-ին Երևանի կենտրոնում 2006թ. տեղակայված հայ-հրեական ողբերգությունների հուշակոթողի հրեական հատվածում եղել է պղծում: Հուշակոթողի վրա լցված էր շագանակագույն ներկ, պատկերված էր կեռախաչ ու գրված «Մահ հրեային»: Հրեական համայնքի ներկայացուցիչները ժխտում էին հակասեմական տրամադրությունների առկայությունը և միջադեպը որակում էին որպես «խուլիգանություն», հավանաբար, օտարերկրացիների կողմից: Հրեական համայնքը գովեստով էր արտահայտվում նախագահի աշխատակազմի անհապաղ արձագանքի վերաբերյալ, որին հետևեցին տեղական իշխանությունների ու իրավապահների գործողությունները: Քաղաքային իշխանությունները հաջորդ առավոտյան վերացրեցին պղծման հետքերը, իսկ ոստիկանությունը քննություն սկսեց: Հոկտեմբերի 21-ին Նախագահի մամլո խոսնակը և Հայաստանյայց եկեղեցին հանդես եկան առանձին հայտարարություններով՝ դատապարտելով հուշարձանի անարգումը:

Մարդկանց թրաֆիքինգ

Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկությունների համար տես՝ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին ամենամյա զեկույցը www.state.gov/g/tip կայքում:

Հաշմանդամներ

Չնայած օրենքով արգելվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, բայց գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են նրանց համար եղել հասանելի: Հաշմանդամների իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որն այն արդյունավետ կերպով չի իրականացնում:

Չնայած երկրում պաշտոնապես գրանցված հաշմանդամների մեծ թվին՝ հաշմանդամ մարդկանց հազվադեպ կարելի է հանդիպել փողոցում, հաշմանդամության երևույթի հասարակական պիտակավորման արդյունքում: Որոշ ծայրահեղ դեպքերում այս հասարակական պիտակը դրդում է ընտանիքներին հասարակության աչքից հեռու պահել իրենց հաշմանդամ երեխաներին՝ դրանով իսկ նրանց զրկելով կրթական ու հասարակությանն ինտեգրվելու հնարավորություններից:

Բոլոր տեսակի հաշմանդամություններ ունեցող մարդիկ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում դժվարություններ են ունենում, լինի դա բուժօգնությունը, սոցիալ-հոգեբանական վերականգնումը, կրթությունը, տրանսպորտը, հաղորդակցությունը, աշխատանք ունենալը, և սոցիալական պաշտպանությունը: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ է տեսալսողական խնդիրներ ունեցողների համար: Ստանդարտներից ցածր էին նաև ծանր հաշմանդամների համար նախատեսված հիվանդանոցային, տնային խնամքի կամ այլ ինստիտուցիոնալ պայմանները: Ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ավելի քան 90 տոկոսն աշխատանք չունի:

2009թ. Սյունիքի ու Շիրակի մարզերի հոգեբուժական հաստատություններում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ տեղական ՀԿ-ի կողմից անցկացված մոնիտորինգն արձանագրել է բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ հիգիենայի անբավարար պայմաններ, անբավարար սնուցում, ոչ համապատասխան շինություններ, ոչ ժամանակակից ու ոչ արդյունավետ դեղամիջոցներ, մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձնակազմի բացակայություն, ֆիզիկական բռնության դեպքեր և հիվանդների աշխատանքի օգտագործում առողջապահական հաստատություններում: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեան նաև կարծիք էր հայտնել, որ թերի էր ընդհանուր առմամբ հոգեբուժական հաստատությունների ամբողջ աշխատանքը: Նշվում էր հոգեկան առողջության պետական քաղաքականության բացակայությունը, հոգեբուժական կլինիկաների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան օրենսդրության բացակայությունը, աշխատակազմի վարքագծի նորմերի և ստանդարտների բացակայությունը և այդ հաստատությունների ոչ բավարար ֆինանսավորումը:

Մայիսի 10-ին Առողջապահության նախարարությանն ուղղված նամակով օմբուդսմենն ուշադրություն էր հրավիրում Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայում օմբուդսմենի գրասենյակի ապրիլի 13-ի այցի ժամանակ բացահայտված խախտումներին: Օմբուդսմենի գրասենյակի աշխատակիցները նկատել էին, որ մի շարք հիվանդներ

կլինիկայում բուժման կուրսն ամբողջությամբ անցնելուց հետո իրենց կամքին հակառակ պահվում էին այնտեղ այն պատճառաբանությամբ, որ «բարեկամները չեն գալիս իրենց տանելու»: Օմբուդսմենը սա համարում էր անընդունելի: Օմբուդսմենի կողմից շեշտադրվում էին նաև գործելաոճի այլ անընդունելի դրվագներ, մասնավորապես՝ հոգեբուժական ստուգման համար կլինիկայում գտնվող նախնական կալանքի տակ գտնվող անձանց զբոսանքի ու հեռախոսազրույցների իրավունքի չապահովումը: Օմբուդսմենը կոչ էր անում նախարարությանը ներքին քննություն անցկացնել ու շտկել այս խնդիրները: Նախարարությունն օմբուդսմենի նամակին ի պատասխան խնդիրները քննության առնելու համար մայիսի 25-ին ստեղծեց հատուկ հանձնաժողով: Հանձնաժողովը հաստատեց բացահայտումների մի մասը և հաղորդեց, որ կլինիկան կլուծի այդ խնդիրները, մասնավորապես ձեռք կբերվեն անկողնային նոր պարագաներ ու զբոսանքի վայր կապահովվի նախնական կալանքի տակ գտնվողների համար: Իրենց կամքին հակառակ կլինիկայում պահվող հիվանդների հետ կապված նախարարությունը պատասխանեց, որ այդ անձինք անմեղսունակ են և բուժում են անցնում իրենց օրինական ներկայացուցչի պահանջով:

Կոռուպցիոն դրսևորումների ու կամայական որոշումների մասին լայն տարածում ունեցող հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գտնվող Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության վերաբերյալ (ԲՍՓԳ), որը զբաղվում է հաշմանդամության կարգի սահմանմամբ: Մայիսի 3-ին օմբուդսմենը նամակով գործակալության պետին հայտնեց, որ ԲՍՓԳ կամայական որոշումների հետ կապված քաղաքացիներից ստացվող բողոքները տարեցտարի ավելանում են: Քաղաքացիները բողոքում էին օմբուդսմենին, որ ԲՍՓԳ-ն կամայականորեն զրկում է իրենց հաշմանդամության կարգից այն պարագայում, երբ իրենց առողջությունն առավել վատացել է: Ըստ նամակի օմբուդսմենի գրասենյակը գործակալության դեմ ուղղված որևէ բողոքի հետ կապված չի կարողացել հասնել խնդրի լուծման, ինչն ըստ օմբուդսմենի չպատասխանած բողոքների առումով ԲՍՓԳ-ին տեղ է ապահովում ոստիկանության հետ նույն շարքում:

2008թ. առցանց լրատվական գործակալություններից մեկը հրապարակեց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Վանաձորի հոգենյարդաբանական դիսպանսերի հիվանդների շրջանում անցկացված հարցման արդյունքները: Հիվանդները հաղորդել էին սանիտարների ու բուժանձնակազմի կողմից ֆիզիկական չարաշահումների, խոշտանգումների ենթարկելու և հանգստացնող-զսպող միջոցները չարաշահելու մասին: Հիվանդները բողոքում էին նաև արտոնություններից զրկված լինելուց և ոչ բավարար սննդից:

Ըստ 2009թ. Երևանու ավագանու ընտրությունների մոնիտորինգ իրականացրած տեղական «Ունիսոն» ՀԿ-ի՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցողներից շատերի համար ընտրատեղամասերը հասանելի չէին և շատ քչերն են մասնակցել քվեարկությանը:

Սեռական կողմնորոշման ու սեռական ինքնության վրա հիմնված չարաշահումներ, խտրականություն և բռնության դրսևորումներ

Ընդհանուր առմամբ հասարակության վերաբերմունքն համասեռականության հանդեպ շարունակում էր մնալ խիստ անբարենպաստ և հասարակությունն ընդհանուր առմամբ դիտարկում էր համասեռականությունը որպես հիվանդություն:

Բացահայտ համասեռականներն ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանց նկատմամբ կարող են լինել բռնություններ համազորայինների կողմից: Այնուհանդերձ ազատումը հիմնավորվում էր հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ համասեռականների մոտ կա հոգեկան խանգարում, ինչի մասին նշում էր կատարվում փաստաթղթերում, որը կարող էր անդրադառնալ նրանց ապագայի վրա:

Մարդու իրավունքների ակտիվիստները նշում են, որ բանտերում լեսբուհիներին, գեյերին, բիսեքսուալ և տրանսսեքսուալ անձանց ենթարկում են ամենանվաստացուցիչ խտրականության՝ ստիպելով կատարել նվաստացնող աշխատանքներ և առանձնացնելով մյուս բանտարկյալներից:

Սեռական կողմնորոշման հիման վրա հասարակական խտրականության դրսևորումը շարունակում է խնդրահարույց լինել աշխատանքի, ընտանեկան հարաբերությունների և սեռական փոքրամասնությունների համար կրթական ու առողջապահական ծառայությունների հասանելիության մասով:

«Իրավունք» շաբաթաթերթի դեկտեմբերի 24-27 թողարկման մեջ ներկայացված հարցազրույցում Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, ով անվտանգության հարցերով խորհրդատվություն է ապահովում երկրի նախագահին, պատասխանելով համասեռականության մասին հարցին նշել էր. «Նման վարքագիծը հարիր չէ մեր ազգային նկարագրին: Քրիստոնեությունն առաջինն ընդունած ժողովրդի համար ընտանիքը, հայկական ավանդական արժեքները գերակա են: Ի վերջո, անբնական ամեն ինչ անընդունելի է: Ես դեմ եմ մարդու իրավունքների սահմանափակումներին ընդհանրապես, սակայն մասնավորապես համասեռամոլությունը խիստ վտանգավոր եմ համարում Հայաստանի համար»:

«Հրապարակ» օրաթերթին դեկտեմբերի 6-ին տված հարցազրույցում ազգային ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանը պատասխանելով Երևանի կենտրոնի այգիներից մեկում համասեռականների հավաքվելու մասին հարցին նշեց. «Փորձում ենք տանենք այպիսի տեղ, որ քիչ երևան, բայց իրենք սիրում են ժողովրդի աչքին երևալ: Մենք կոպիտ միջոցներ ձեռք չենք առնում, մարդու իրավունքներ չենք խախտում, դա իրենց գործն է, բայց մեր քաղաքում հարիր չի ժողովրդին, որ… Դրանց ֆիզիկապես տանել չեմ կարողանում»:

Բռնության և խտրականության այլ դրսևորումներ հասարակությունում

Տարվա ընթացքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների հանդեպ հասարակական բռնությունների ու խտրականություն դրսևորումների մասին հաղորդումներ չեն եղել:

Շատ գործատուներ ըստ հաղորդումների խտրականություն են դրսևորում հնարավոր աշխատողների նկատմամբ ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմողները լինեն 18-30 տարեկան: Չնայած որ այս խտրականությունը բավական լայն տարածում ուներ, իշխանությունները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել այն չեզոքացնելու համար: 40 տարեկանից հետո, հատկապես կանայք շարունակում են շատ քիչ

հնարավորություն ունենալ իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնելու համար:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու իրավունքը

Օրենքն աշխատողներին՝ բացառությամբ բանակում ծառայողներին և իրավապահ մարմինների աշխատակիցներին, իրավունք է վերապահում կազմելու անկախ միավորումներ և նրանց անդամակցելու՝ սեփական հայեցողությամբ, առանց նախնական լիազորության կամ հավելյալ պահանջների: Սակայն գործնականում աշխատողների մեծ մասն ի վիճակի չէ եղել օգտվել այս իրավունքից: Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Արհմիությունների կոնֆեդերացիայի հաշվարկներով փետրվարի դրությամբ կան 27 արհմիություններ՝ 250000 անդամներով, որը մոտավոր հաշվարկներով կազմում էր աշխատուժի 21 տոկոսը: Կային նաև այլ արհմիություններ, որոնք Արհմիությունների կոնֆեդերացիայի կազմում չէին: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ հանքարդյունահանման ոլորտի արհմիությունների:

Օրենքը թույլ է տալիս միություններին իրենց աշխատանքներն իրականացնել առանց կառավարության միջամտության: Օրենքով սահմանվում է գործադուլի իրավունք, բացառությամբ զինվորականների և իրավապահ մարմինների աշխատակիցների համար, բայց աշխատողները հազվադեպ են գործադուլ արել՝ վախենալով կորցնել իրենց աշխատանքը: Թեպետ օրենքն արգելում է նաև գործադուլավորների հետապնդումը, սակայն դա պարբերաբար իրականացվել է:

Երկրի հարավում գտնվող հանքարդյունահանող խոշոր ընկերություններից մեկի՝ Կապան գոլդ մայնինգ քոմփանի ընկերության աշխատողները հունվարին մեծամասշտաբ գործադուլ էին անցկացնում՝ պահանջելով աշխատավարձերի ու արտոնավճարների ավելացում, ինչպես նաև աշխատանքային պայմանների բարելավում: Քանի որ գործադուլն աշխատողների տեղական արհմիության կողմից արտոնված չէր, ընկերության ղեկավարությունն այն դիտարկեց որպես տեղական աշխատանքային օրենսդրության խախտում և շուրջ 50 աշխատողներ, ովքեր հատկապես ակտիվ էին գտնվել գործադուլի կազմակերպման հարցում, ազատվեցին աշխատանքից: Շատերը հետո վերականգնվեցին, իսկ վեճը լուծվեց ընկերության ղեկավարության ու մարզպետի միջև բանակցություններից հետո՝ ներգրավված կողմերի միջև փոխադարձաբար ընդունելի զիջումների ճանապարհով:

բ) Կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Չնայած օրենքով սահմանվում է կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունքը, գործնականում այն գոյություն չի ունեցել:

Հակամիութենական խտրականության դրսևորումների մասին որոշակի հաղորդումներ չեն եղել: Այնուհանդերձ, ըստ հաղորդումների որոշ արդյունահանող ձեռնարկություններ, այդ թվում օտարերկրյա ներդրողների կողմից ֆինանսավորվող,

արհեստակցական միություններին աշխատողների միանալը չեն խրախուսել՝ աշխատանքը կորցնելու ակնարկվող սպառնալիքով:

Արտահանման արտոնյալ գոտիներ չկան:

գ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում է հարկադիր կամ ստրկական աշխատանքը, ներառյալ՝ երեխաների: Սակայն եղել են հաղորդումներ, որ սեռական և աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի են ենթարկվել կանայք և աղջիկներ, իսկ շինարարության ոլորտում աշխատանքային շահագործման համար՝ տղամարդիկ: Ոչ մեծ թվով աղջիկներ և տղաներ ենթարկվել են ներքին թրաֆիքինգի՝ համապատասխանաբար սեռական շահագործման կամ մուրացկանության դրդելու նպատակով: Տես նաև՝ Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Պետքարտուղարության ամենամյա զեկույցը www.state.gov/g/tip կայքում:

դ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար ու վտանգավոր պայմաններում, տոն օրերին և գիշերային ժամերին. այնուամենայնիվ երեխաների աշխատանքին վերաբերող օրենսդրության կատարման համար պատասխանատու մարմինները չեն ապահովել օրենքի կիրառումը գործնականում:

Համաձայն դիտորդների՝ շատ երեխաներ, հատկապես գյուղական բնակավայրերում, ներգրավված են եղել ընտանեկան բիզնեսներում, հիմնականում՝ գյուղատնտեսության ոլորտում: Դիտորդների հաղորդմամբ նրանք նաև նկատել են Երևանում դասերից հետո ծաղիկներ, նկարներ վաճառող ու տեղական շուկաներում աշխատող երեխաներ: Երեխաները նաև աշխատել են առևտրի, շինարարության, մեքենաների սպասարկման ոլորտներում, շահագործել են մեքենաներ, հավաքել են մետաղի ջարդոն և շշեր: Ըստ 2008թ. երեխաների աշխատանքի վերաբերյալ ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի հրապարակած ուսումնասիրության արդյունքների 7-18 տարեկան երեխաների շրջանում վճարովի աշխատանք ունեցողները թիվը կազմել 5 տոկոսից պակաս՝ առանց հաշվի առնելու այն երեխաներին, ովքեր ներգրավված են ընտանեկան գյուղացիական տնտեսություններում կամ բիզնեսներում: Ուսումնասիրությունը նաև պարզել է, որ աշխատող երեխաների գրեթե մեկ երրորդն օրինական աշխատանքային տարիքից ցածր տարիք է ունեցել, գրեթե բոլորն աշխատել են առանց օրինական պայմանագրերի, իսկ որոշ երեխաներ ծանր ֆիզիկական աշխատանք են կատարել՝ որպես բանվորներ ու բեռնակիրներ:

ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ

30000 դրամ (80 ԱՄՆ դոլար) ամսական նվազագույն աշխատավարձը, չի ապահովել աշխատողի և ընտանիքի կյանքի արժանավայել կենսամակարդակը:

Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է և սահմանված է տարեկան 28 օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Գործնականում պետական մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել: Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ շարունակել են աշխատողներ ընդունել 10-30 օր «փորձաշրջանով» և այդ օրերի համար չեն վճարել: Այնուհետև հաճախ այս աշխատողներին ազատել են, բայց քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը:

Աշխատանքային անվտանգության ու առողջության պահպանման ստանդարտները սահմանվում են կառավարության որոշումներով: Աշխատանքի պետական տեսչությունը, որ պատասխանատու է այս ստանդարտների կիրառումն ապահովելու համար, միշտ չէ որ դա արել է արդյունավետորեն: Տարվա ընթացքում ըստ հաղորդումների Աշխատանքի պետական տեսչությունը քիչ առաջընթաց է ունեցել տեսչական ռեժիմի կամ աշխատանքային օրենսգրքի կիրառման ապահովմանն ուղղված աշխատանքներում, իսկ կոռուպցիան խարխլել է տեսչության աշխատանքը:

Աշխատողներն իրավունք ունեն հեռանալ այն աշխատանքային պայմաններից, որոնք վտանգի են ենթարկում իրենց առողջությունն ու անվտանգությունը, բայց աշխատողները դժվար թե դա անեն, քանի որ գործնականում այդպես վարվելը ռիսկի տակ կդներ նրանց աշխատանքը: Շատ ոլորտներում աշխատավայրի անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին և տարվա ընթացքում գրանցվել է մահացու ելքով մեկ աշխատանքային պատահար:

Փետրվարի 23-ին Երևանի շինհրապարակներից մեկում մահացել էր 18-ամյա շինարար Արման Գասպարյանը՝ մնալով վերամբարձ կռունկի պոկված սլաքի տակ: Վերամբարձ կռունկի սլաքը պոկվել է, երբ կռունկավարը փորձել է դուրս քաշել շինհրապարակում թաղված ցեմենտատարը: Հուլիսի 22-ին կռունկավարը մեղավոր ճանաչվեց անզգուշությամբ մահ պատճառելու մեջ և դատապարտվեց երկու տարվա պայմանական ազատազրկման: